

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՁԵԿՈՒՅՑ 2008Թ.

### Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Հայաստանը շուրջ 3.2 միլիոն բնակչությամբ սահմանադրական հանրապետություն է: Մահմանադրությամբ նախատեսվում է ընտրվող նախագահ ու միապալատ օրենսդիր կառույց (Ազգային ժողով): Երկրում գործում է բազմակուսակցական քաղաքական համակարգ: Փետրվարի 19-ին երկրում տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որոնք ընթացան նշանակալի խախտումներով. խնդիրների թվում էին կառավարության թեկնածուի նկատմամբ շահեկան վերաբերմունքը, քվեատուփերի լցումների դեպքերը, քվեների գնումը, բազմակի քվեարկությունը, ընտրողների ահաբեկումը, ընտրական հանձնաժողովների անդամների ու կուսակցությունների վստահված անձանց դեմ բռնությունները, ընտրական նպատակներով հանրային ռեսուրսների չարաշահումը: Մարտի 1-2-ին իշխանությունները ուժ կիրառեցին՝ ցրելու ընտրությունների ընթացքը և արդյունքները վիճարկող ցուցարարների հոծ բազմությունը. ցուցարարների և անվտանգության ուժերի միջև բախումների արդյունքում 10 մարդ զոհվեց: Բռնություններից հետո իշխանությունները 20-օրյա արտակարգ դրություն հայտարարեցին: Ապրիլի 9-ին Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) ներկայացնող Սերժ Մարգարյանը երդմամբ ստանձնեց նախագահի պաշտոնը՝ փոխարինելով Ռոբերտ Քոչարյանին: Պաշտոնը ստանձնելուց հետո նախագահ Մարգարյանը վարչապետի պաշտոնում նշանակեց Տիգրան Մարգարյանին (ազգակցական կապ չկա): Ազգային ժողովի 4 կուսակցություններից կազմված մեծամասնական կոալիցիայի կազմում մեծամասնություն է կազմել ՀՀԿ-ն: Քաղաքացիական իշխանություններն ընդհանուր առմամբ արդյունավետ հսկողություն են ապահովել անվտանգության ուժերի նկատմամբ, սակայն անվտանգության ուժերի որոշ ներկայացուցիչներ, լինելով քաղաքացիական առաջնորդների հրամանատարության ներքո, անպատժելիորեն թույլ են տվել մարդու իրավունքների ոտնահարումներ:

Մարդու իրավունքների ոլորտում կառավարության գործունեությունը տարվա ընթացքում նշանակալիորեն վատթարացել է, իշխանությունները և վերջինիս ներկայացուցիչները մարդու իրավունքների բազմաթիվ ոտնահարումներ են թույլ տվել, հատկապես՝ կապված նախագահական ընտրությունների և դրանց հաջորդած ցույցերի ճնշման հետ: Իշխանությունները քաղաքացիներին թույլ չեն տվել իրացնել կառավարությունն ազատորեն փոխելու իրենց իրավունքը, և քաղաքացիներն իրենց քաղաքական գործունեության համար ենթարկվել են ձերբակալությունների, կալանքի և բանտարկության: Իշխանությունները ուժ են գործադրել, երբեմն՝ մահացու ելքով, քաղաքական ցույցերը ցրելու համար: Իշխանությունները կիրառել են հալածանքներ և դիմել են միջամտության բյուրոկրատական միջոցների՝ կառավարությանն ընդդիմացողներին ահաբեկելու և նրանցից վրեժխնդիր լինելու համար: Ոստիկանությունը ծեծի է ենթարկել նախնական կալանքի տակ գտնվողներին և որոշ դեպքերում չի ապահովել պատշաճ ընթացակարգ: Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) և ազգային ոստիկանությունը մարդու իրավունքների ոտնահարման ենթադրյալ դեպքերում գործել են անպատիժ: Իշխանությունները կատարել են կամայական ձերբակալություններ ու կալանավորումներ: Բանտային պայմանները դեռևս ծանրաբեռնված և անառողջ էին: Իշխանությունների կողմից եղել են կամայական սահմանափակումներ հանրահավաքների ու մամուլի ազատությունների հարցում, մասնավորապես խիստ միջոցներ են գործադրվել

արտակարգ դրության ժամանակահատվածում: Լրագրողները շարունակել են զբաղվել են ինքնագրաքննությամբ: Կառավարությունն ու օրենքները սահմանափակել են կրոնական ազատությունը: Նաև գրանցվել են հաղորդումներ կանանց նկատմամբ բռնությունների ու ամուսնական բռնությունների, մարդկանց թրաֆիկինգի, հաշմանդամների և համասեռամուլների նկատմամբ խտրականության մասին:

## **ՀԱՐԳԱՆՔ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

### **ՄԱՍ 1. ՀԱՐԳԱՆՔ ԱՆՁԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ**

#### **ա) Կամայական կամ անօրինական ձևով կյանքից զրկելը**

Եղել են հաղորդումներ, որ պարունակում են պնդումներ այն մասին, թե իբր կառավարությունն ու իր ներկայացուցիչները տարվա ընթացքում թույլ են տվել կամայական ու անօրինական սպանություններ:

Մարտի 1-ի վաղ առավոտյան ոստիկանությունը ուժ կիրառելով ցրեց փետրվարին Երևանի կենտրոնական հրապարակներից մեկում վրաններում ապաստանած մի քանի հարյուր հոգու հասնող ցուցարարներին, ովքեր վիճարկում էին փետրվարյան նախագահական ընտրությունների ընթացքը և արդյունքները: Ցուցարարներին ցրելու այս գործողությունից հետո մոտ 15000-20000 ցուցարարներ վերստին հավաքվեցին քաղաքի կենտրոնի մեկ այլ վայրում: Որոշ ցուցարարներ բարիկադներ ստեղծեցին և ըստ հաղորդումների պատրաստ էին պաշտպանել դրանք՝ ինքնաշեն զենքերով: Անվտանգության ուժերն արձագանքեցին և, մի քանի ժամ առձակատումից հետո, կարողացան ցուցարարներից շատերին ցրել՝ դեպի օդ կրակոցներ հնչեցնելու ու ձայնային նոնակներ գործի դնելու միջոցով: Այնուհանդերձ, որոշ ցուցարարներ մնացին բարիկադների ետևում, և հատուկ միջոցներով զինված ոստիկանությունն ուղղակի գործողություններ ձեռնարկեց նրանց հանդեպ: Արդյունքում տեղի ունեցած բախումները շարունակվեցին մինչև մարտի 2-ի լուսաբացին նախորդող ժամերը:

Ցուցարարների, կողոպուտ իրականացնողների և անվտանգության ուժերի միջև բախումների հետևանքով գրանցվեց առնվազն տասը զոհ (8-ը՝ քաղաքացիական, 2-ը՝ ոստիկան) և տասնյակ վիրավորներ: Տարեվերջի դրությամբ դեռ բացահայտված չէին 10 զոհերի մահվան հանգամանքները: Պաշտոնական տեղեկատվության համաձայն մահվան բոլոր դեպքերը գրանցվել էին դիմակայման հիմնական վայրից զգալի հեռավորության վրա տեղի ունեցած ընդհարումների ժամանակ: Մահվան այս դեպքերի մի մասը կարող էին լինել միտումնավոր կամայական սպանությունների, ամբոխի կառավարման հատուկ միջոցների, օրինակ՝ արցունքաբեր գազ արձակող զենքի սխալ կիրառման, կամ էլ այսպիսի որոշ գործոնների համադրության արդյունք: Մահվան դեպքերից ոչ մեկով ոստիկանության կամ անվտանգության ուժերի որևէ ներկայացուցչի գործողությունների վերաբերյալ վստահարժան քրեական հետաքննություն չի իրականացվել:

Իշխանությունները սկզբում ժխտում էին, որ մարտի 1-ի բախումների ժամանակ անվտանգության ուժերն ուղղակիորեն կրակել են ցուցարարների վրա, սակայն ավելի ուշ ի հայտ եկած տեսանյութը կարծես թե վիճարկեց այս պնդումը: Դեկտեմբերի կեսերին կառավարությունը հաստատեց, որ մարտի 1-2-ի դեպքերի ժամանակ առնվազն մեկ

դիպուկահար է եղել, սակայն ժխտում էր դիպուկահարի առնչությունը մահվան տասը դեպքերից որևէ մեկին: Կառավարության ընդդիմադիրներն ու մարդու իրավունքների ոլորտի որոշ ակտիվիստներ պնդում էին, թե ցուցարարներին սպանել ու կողոպուտ են բեմադրել անվտանգության ուժերը, որպեսզի մարտի 1-ին ավելի ուշ արտակարգ դրություն հայտարարվի, ինչը բողոքի ցույցերը դադարեցնելու համար իրավական պատրվակ կտրամադրեր իշխանություններին:

Մայիս-հուլիս ամիսներին նախագահն աշխատանքից ազատեց ազգային ոստիկանության պետին ու պետի տեղակալին, պետական պահպանության ծառայության պետին, ոստիկանական զորքերի (հատուկ ուժեր) պետին: Պարզ չէր, թե արդյոք նրանց աշխատանքից ազատումը մարտի 1-ի բռնություններում նրանց ունեցած դերակատարման հետ կապ ուներ, թե ոչ. տարեվերջի դրությամբ որևէ մեկի հանդեպ քրեական հետապնդում այդ հարցով չի եղել: Հունիսի 16-ին Ազգային ժողովը ստեղծեց ժամանակավոր հանձնաժողով մարտի 1-2-ի իրադարձությունների հանգամանքները ուսումնասիրելու համար: Ընդդիմադիր կուսակցություններին հրավիրեցին մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, սակայն նրանք հրաժարվեցին՝ նշելով որ հիմնականում կառավարամետ մասնակիցների շարքում իրենք անընդունելի փոքրամասնություն են կազմելու: Հոկտեմբերի 23-ին նախագահի հրամանագրով ձևավորվեց նոր փաստահավաք փորձագիտական խումբ ընդդիմության ու կառավարության ներկայացուցիչների հավասարակշռված կազմով, որին ընդդիմությունը համաձայնեց մասնակցել: Տարեվերջի դրությամբ իրենց գործունեությունը շարունակում էին թե Ազգային ժողովի հանձնաժողովը, թե փաստահավաք խումբը, ընդ որում որևէ մեկը դեռ փաստեր չէր հրապարակել: Կառավարության մարդու իրավունքների պաշտպանը (օմբուդսմենը) ապրիլի 25-ին հրապարակեց գեկույց, որը կասկածի տակ էր դնում իրադարձությունների վերաբերյալ իշխանությունների պաշտոնական վարկածը: Մեպտեմբերի 24-ին ոստիկանության պետ Ալիկ Սարգսյանը, ով այդ պաշտոնում էր նշանակվել մայիսի 29-ին՝ փոխարինելով մարտյան իրադարձությունների օրերի ոստիկանապետին, նշեց, որ այդ իրադարձությունների ժամանակ ոստիկանության բոլոր ուժերը գործել են ըստ պատշաճի:

Դեկտեմբերի 17-ին գլխավոր դատախազությունը տեղեկություններ հրապարակեց զոհերի քրեափորձագիտական փորձաքննությունների արդյունքների վերաբերյալ: Ըստ այդ տեղեկատվության հինգ հոգի մահացել են հրազենային վնասվածքներից, երկու հոգի սպանվել են արցունքաբեր գազի փամփուշտների ազդեցությունից, մեկ հոգի մահացել է արցունքաբեր գազի փամփուշտի պայթյունի հետևանքով ոտքին ստացված վնասվածքի հետ կապված արյան կորստից, մեկ հոգի մահացել է գլխին ստացված անհայտ հարվածի հետևանքով առաջացած վնասվածքներից, իսկ ևս մեկ հոգի մահացել է նռնակի պայթյունի հետևանքով: Պաշտոնական քրեափորձագիտական փորձաքննությունների արդյունքների համաձայն արցունքաբեր գազի փամփուշտներն արձակվել են ուղիղ մահացողների վրա, ինչը տվյալ միջոցի սխալ օգտագործում է, քանի որ այդ փամփուշտները նախատեսված է կրակել անուղղակիորեն կամ գետնի ուղղությամբ:

Մարտի 20-ին տրված հարցազրույցում պաշտոնից հեռացող նախագահ Ռոբերտ Քոչարյանը հայտնեց, որ մահվան որոշ դեպքեր պայմանավորված են եղել անվտանգության ուժերի կողմից ժամկետանց հատուկ միջոցների (խոսքն ակնհայտորեն վերաբերում էր ոստիկանության կողմից օգտագործած հատուկ միջոցներին) օգտագործմամբ՝ նկատի ունենալով, որ մահվան որոշ դեպքեր պատահականության արդյունք են: Մարտի 12-15-ը

Հայաստան կատարած հատուկ այցից հետո դրա վերաբերյալ Եվրախորհրդի (ԵԽ) Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմերբերգի մարտի 20-ին ներկայացրած զեկույցում մեջբերված էին գլխավոր դատախազի խոսքերն այն մասին, որ արցունքաբեր գազի փամփուշտները ներթափանցել են որոշ զոհերի մարմնի մեջ, ինչից բխում է, որ արցունքաբեր գազային միջոցներն արձակվել են մոտ հեռավորությունից: Քոչարյանի հայտարարությունից հետո կասկածներ հայտնեցին նաև տեղական դիտորդները:

Նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանը մարտի 1-ի բախումներից հետո տրված հարցազրույցում արդարացրեց ուժի կիրառումը՝ նշելով, որ թիրախ են հանդիսացել միայն նրանք, ովքեր զբաղվել են կողոպուտով և ովքեր զենք են կիրառել անվտանգության ուժերի դեմ: Այս պնդմանը հակադրվում էին զոհերից երեքի ընտանիքների պատմությունները, ովքեր պնդում էին, որ զոհերը եղել են ցուցարարների հետ կապ չունեցող պատահական անցորդներ:

Օգոստոսի 27-ին տրված հարցազրույցում մարտի 1-ի քաղաքացիական զոհերից մեկի՝ Սամվել Հարությունյանի, ով վնասվածքներից մահացավ ապրիլի 11-ին, հայրը պնդում էր, որ որդուն ձերբակալել են, դաժան ծեծի ենթարկել ու նա մահացել է ոստիկանության բռնությունների հետևանքով: Նա պնդում էր, որ ինքն ու իր կինը հեռուստացույցով մարտի 2-ին և 3-ին ներկայացվող տեսանյութերում տեսել են իրենց որդուն, ինչից էլ ենթադրում էին, որ կալանքի տակ գտնվելու ընթացքում նա ենթարկվել է ոչ մարդկային վերաբերմունքի: Չոհի ընտանիքը նաև պնդում էր, որ Հարությունյանի ոտքերին ու դաստակներին հայտնաբերվել են հետքեր՝ առաջացած ձեռնաշղթաներից կամ պարանոցներից, որը նրանց հիմք էր տալիս կարծելու, որ նախքան հիվանդանոց տեղափոխվելը նա ձերբակալվել ու ենթարկվել է անմարդկային վերաբերմունքի:

Կառավարությունը հայտնել է, որ տարվա առաջին 11 ամիսների ընթացքում բանակում գրանցվել է մահվան 69 դեպք, որոնցից 25-ը հիվանդության պատճառով էին, 14-ը՝ ավտովթարի, 2-ը՝ զենքի անփույթ կամ սխալ կիրառման, 1-ը՝ «զինծառայողների փոխհարաբերությունների կանոնակարգային կանոնների խախտման», 2-ը՝ ականային պայթյունների հետևանքով, գրանցվել է սպանության 9-ը (ընդ որում՝ 3-ը հնարավոր է թշնամու կողմից) և ինքնասպանության 8-ը դեպք: Հաղորդումների համաձայն սպանության ու ինքնասպանության երկուսական դեպքի վերաբերյալ եզրակացվել է, որ դրանք պայմանավորված են եղել բռնությամբ ու զինվորականների շրջանում ոչ կանոնակարգային հարաբերությունների դրսևորմամբ:

Հունիսին 2005-08թթ. զինծառայության ընթացքում մահացած զինվորների ընտանիքները համատեղ հայտարարությամբ հանդես եկան, որտեղ մեղադրում են իշխանություններին իրենց որդիների մահվան հանգամանքների շուրջ համակարգված կերպով կեղծ հետաքննություններ անցկացնելու ու ապացույցները վերացնելու կամ կեղծելու մեջ, որով նպատակ էր հետապնդվում քողարկել սպանություններն ու ներկայացնել դրանք որպես պատահարներ, ինքնասպանություններ կամ դիպուկահարների հարձակումների հետևանք:

Ըստ Հելսինկյան ասոցիացիայի՝ մարդու իրավունքների ոլորտի տեղական հասարակական կազմակերպության (ՀԿ) տվյալների մայիսի 10-ին բենգինի ցիստեռնում հայտնաբերվել է Մեդրի քաղաքի մոտակայքում գտնվող գորամասերից մեկի զինծառայող Նարեկ Գալստյանի դին: Ըստ իշխանությունների Գալստյանը փորձել է բենգին գողանալ և

ընկել է ցիստեռնի մեջ, որից հետո կափարիչը փակվել է ու նա գոյորշիններից խեղդվել է: Մակայն, նրա ընտանիքի անդամները նշում էին, որ կափարիչը հնարավոր է փակել միայն դրսից. բացի այդ, նրանք հայտնել են, որ իրենց որդու մարմնին հայտնաբերել են բազմաթիվ վնասվածքներ, որոնք հիմք են տալիս կարծելու, որ նա դաժան ծեծի է ենթարկվել ու թերևս սպանվել: Ըստ տարբեր հաղորդումների գորամասում Գալստյանի մահվան գիշերը լուրջ ծեծկռտուք է եղել ու գոռոցներ են լսվել այն տեղից, որտեղ ցիստեռնն էր գտնվում:

Ըստ Հելսինկյան ասոցիացիայի 2007թ. ապրիլին լեյտենանտ Հենրիխ Գրիգորյանը կրակել է զինվոր Գեղամ Մերգոյանը գլխին, որից կարճ ժամանակ անց նա մահացել է: Ըստ հաղորդումների Գրիգորյանը կրակել է Մերգոյանի վրա այն ժամանակ, երբ տեսել է նրան առանց կոշիկների ու զինվորական գլխարկի: Համաձայն Մերգոյանի ընտանիքի իշխանությունները խոչընդոտել են, որ ընտանիքն օրենքով սահմանված կարգով ներգրավված լինի գործի քննությանը: Մերգոյանի ընտանիքը նշում էր, որ իշխանությունները փորձում էին մեղմացնել Գրիգորյանի մեղքը՝ առաջ քաշելով վարկածներ, որ Գրիգորյանը տառապում էր հոգեկան հիվանդությամբ կամ, որ իրենց որդու վրա կրակելը պայմանավորված էր սադրանքով: Ըստ պաշտոնական տեղեկատվության Գրիգորյանին առաջադրվեց խուլիգանական դրդումներով սպանության և պաշտոնեական լիազորություններն անցնելու մեղադրանք: Տարեվերջի դրությամբ Գրիգորյանը դեռ չէր դատապարտվել, իսկ դատաքննությունն, ըստ հաղորդումների, ընթացքի մեջ էր:

Տարվա ընթացքում հաղորդում եղավ Էդվարդ Միրգոյանի մահվան մասին: Ըստ իշխանությունների, 2007թ. հունիսին Միրգոյանի գորամասի հրամանատար Իգոր Աթայանը զինվորներին հրամայել է ինժեներական աշխատանքներ իրականացնել ադրբեջանական դիպուկահարների նշանառության դաշտում, որոնց ընթացքում Միրգոյանը մահացել է դիպուկահարի գնդակից: Աթայանին մեղադրանք է ներկայացվել պաշտոնեական լիազորություններն անցնելու համար, և 2007թ. նոյեմբերին նա դատապարտվել է երեք տարվա պայմանական ազատազրկման: Ըստ Միրգոյանի ընտանիք պնդումների թեպետ բժշկական փորձաքննությամբ հաստատվել է, որ իրենց որդին մահացել է մոտ տարածությունից փոքր տրամաչափի զենքի կրակոցից, նրանք վիճարկում էին կատարվածի մասին Աթայանի պատմությունը և պնդում էին, որ սպանությունից առաջ Միրգոյանին ծեծել և խոշտանգել են:

Ըստ պաշտոնական տեղեկատվության 2007թ. հոկտեմբերին զինծառայող Վիկտոր Ասլանյանին մեղադրանք է ներկայացվել պաշտոնեական լիազորություններն չարաշահելու և կեղծ ցուցմունք տալու համար՝ կապված 2007թ. հուլիսին Տավուշի մարզի Կողբի գորամասում Հովհաննես Մելտոնյանի սպանության հետ: Պաշտոնյանների հաղորդման համաձայն Մելտոնյանն ինքնասպանություն էր գործել՝ կրակելով ինքն իր պարանոցին՝ Ասլանյանի կողմից շարունակվող նվաստացումների և ֆիզիկական բռնությունների պատճառով: Մելտոնյանի ընտանիքը վիճարկում էր պաշտոնական վարկածը՝ պնդելով, որ նա ենթարկվել է խոշտանգումների ու սպանվել, հիմնավորելով իրենց կարծիքը նրա մարմնի վրա հայնաբերված բազմաթիվ վնասվածքների փաստով: Ասլանյանի գործը հունիսի 9-ին ուղարկվեց դատարան և տարեվերջի դրությամբ դեռ շարունակվում էր:

Մայիսին տեղական լրատվամիջոցներում հաղորդում եղավ 2007թ. օգոստոսին Վարդենիսի Կարճաղբյուր գորամասի զինվոր Տիգրան Օհանջանյանի մահվան մասին, որն ըստ պաշտոնական հաղորդման պատահական էլեկտրահարման արդյունք էր: Ըստ լրատվամիջոցների Օհանջանյանի հայրը համոզված էր, որ որդուն ծեծի են ենթարկել, ապա

սպանել էլեկտրահարման միջոցով կամ էլ նրան սպանողները փորձել են քողարկել նրա սպանության փաստը՝ այն ներկայացնելով որպես դժբախտ պատահար: Հայրը, ըստ հաղորդումների լուսանկարել էր որդու դիակը, որի վրա առկա էին լուրջ վնասվածքներ և որոնք, ըստ նրա պնդումների, գործով պատասխանատու քրեափորձագետը հրաժարվել է արձանագրել: Ըստ ընտանիքի փաստաբանի ռազմական դատախազությունը փորձում էր քողարկել սպանության դեպքը՝ այն ներկայացնելով որպես դժբախտ պատահար և ըստ պնդումների հրաժարվում էր հաշվի առնել այն ցուցմունքը, որ մահվանից առաջ զորամասի հրամանատար Սմբատ Միմոնյանը հարվածել էր Օհանջանյանին: Ըստ հաղորդումների Օհանջանյանի հայրը սպառնալիքներ է ստացել, երբ փորձել է պարզել որդու մահվան հանգամանքները: Ըստ պաշտոնական տեղեկատվության երկու զինծառայողների՝ Ռուստամ Ասատրյանին և Կարեն Թովմասյանին մահվան հետ կապված անփութության ցուցաբերման մեղադրանք է ներկայացվել, և գործը մայիսի 30-ին ուղարկվել է դատարան:

Ազգությամբ հայ անջատողականները Հայաստանի օգնությամբ շարունակել են վերահսկել Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի շրջանի մեծ մասը և հարակից ադրբեջանական 7 տարածքները: Ադրբեջանի հետ 540 մղոն երկարությամբ սահմանի ու Լեռնային Ղարաբաղի հակամարտության շփման գծի ողջ երկայնքով տեղակայված ականները շարունակել են մարմնական վնասվածքների պատճառ հանդիսանալ: Կառավարական աղբյուրների համաձայն տարվա առաջին 11 ամիսների ընթացքում ականային պայթյուններից զոհվել են երկու և վիրավորվել տասնինը զինծառայողներ: Քաղաքացիական զոհեր և վիրավորներ ականային պայթյունների հետևանքով չեն գրանցվել:

Տարվա ընթացքում ռազմականացված շփման գծի երկայնքով, որը բաժանում է կողմերը Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդյունքում, կրկին գրանցվել են բազմաթիվ զոհեր՝ երկու կողմերից: Ըստ պաշտոնական տեղեկատվության շփման գծի երկանքով գրանցվել է 3 զինվորական և 2 քաղաքացիական զոհ և վիրավորվել են 21 զինվորական և 2 քաղաքացիական անձ: Հունիսի 17-ին և 18-ին երկու քաղաքացիներ՝ Չինարի գյուղի բնակիչներ իրենց հողամասերում աշխատելիս դարձել են ադրբեջանական կողմից դիպուկահարների կրակոցների թիրախ. հունիսի 18-ին նրանք մահացել են:

Ի տարբերություն նախորդ տարվա՝ բարձրաստիճան անձանց սպանությունների դեպքեր անհայտ մարդասպանների կողմից չեն գրանցվել:

2007թ. օգոստոսին իր տան ճանապարհին անհայտ անձի կրակոցից մահացել էր Լոռու մարզի դատախազ Ալբերտ Ղազարյանը: Օգոստոսի 25-ին գործի քննությունը կասեցվել է, իսկ մարդասպանի ինքնությունը չի բացահայտվել:

Տարվա ընթացքում 2007թ. ապրիլին Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանի ու նրան ուղեկցող անձանց վրա կատարած հարձակման հետ կապված, որի հետևանքով մահացել էին երեք թիկնապահներ և մեկ վարորդ, որն էլ զարգացում չի եղել: Գործի քննությունը կասեցվել է, իսկ մարդասպանի ինքնությունը չի բացահայտվել:

## **բ) Անհետացումներ**

Քաղաքական շարժառիթներով պայմանավորված անհետացումների մասին հաղորդումներ չեն եղել:

## **գ) Խոշտանգումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ**

Չնայած օրենսդրությամբ հիշյալ երևույթներն արգելվում են, սակայն անվտանգության ուժերի անդամների կողմից դրանք պարբերաբար կիրառվել են: Վկաները շարունակել են հաղորդել, որ ոստիկանները ձեռքարկել են ենթարկել քաղաքացիներին: Նմանատիպ հաղորդումներ են եղել մարդու իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից. այնուամենայնիվ, ոստիկանության անօրինաչափ վերաբերմունքի դեպքերի գերակշիռ մասը շարունակվել է չհաղորդվել՝ հաշվեհարդարի վախից: Իրավապաշտպան խմբերը շարունակել են հաղորդել, որ ոստիկանության կողմից ձեռքարկված և կալանավորված անձանց պահման վայրերից բանտեր տեղափոխված անձանց կեսից ավելին պնդում են, որ կալանքի տակ գտնվելու ժամանակ իրենք ենթարկվել են խոշտանգումների, բռնությունների կամ ահաբեկման:

2006թ. ընթացքում հավաքած տվյալների հիման վրա «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնությունը, որ կազմված է իրավապաշտպան հասարակական կազմակերպություններից, 2007թ. հունիսին հրատարակված զեկույցում մատնանշել է, որ խոշտանգումների հիմնական պատճառը խոստովանություն կորզելն է: Ըստ զեկույցի դատարանները հիմնականում ամբաստանյալի խոստովանությունն ընդունում են որպես համոզիչ ապացույց, նույնիսկ այն պարագայում, երբ դա կասկածելի կերպով է ձեռք բերվել: Ջեկույցում նաև նշվում է, որ քրեական դատավարություններում որպես մեղադրյալ ներգրավված անձանց 80 տոկոսը հրաժարվել է նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներից՝ պնդելով, որ խոստովանել են պարտադրանքի կամ խոշտանգումների ներքո: Ըստ զեկույցի քրեական արդարադատության համակարգը հիմնականում ուշադրություն չի դարձնում այսպիսի բողոքներին և դրանց հիման վրա մակերեսային քննություններ են անցկացվում կամ էլ չեն անցկացվում:

Փետրվարի 23-ին դիմակավոր ոստիկաններն ըստ հաղորդումներ չափից ավել ուժ են կիրառել գլխավոր դատախազի նախկին տեղակալ Գագիկ Ջհանգիրյանին և նրա եղբայր Վարդան Ջհանգիրյանին ձեռքարկելիս: Այս ժամանակ նախագահի պաշտոնը զբաղեցնող Ռոբերտ Քոչարյանը նույն օրն ավելի վաղ ազատել էր Ջհանգիրյանին զբաղեցրած պաշտոնից, այն բանից հետո, երբ Ջհանգիրյանը հրապարակավ պաշտպանեց ընդդիմության նախագահության թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանին: Ուշ երեկոյան ոստիկանները կանգնեցրել են նրանց մեքենան և ուղևորներից պահանջել դուրս գալ մեքենայից: Վարդան Ջհանգիրյանը, ով տառապում էր ողնաշարի տուբերկուլյոզով, ինչը սահմանափակում էր նրա շարժումները, ըստ հաղորդման չի կարողացել արագ արձագանքել հրամանին և դիմակավոր ոստիկանները դաժան ծեծի են ենթարկել նրան: Ոստիկաններից մեկը սկսել է կրակել և դիպել է Վարդան Ջհանգիրյանին, ինչպես նաև երկու այլ ոստիկանների: Գագիկ Ջհանգիրյանը նույնպես դաժան ծեծի է ենթարկվել: Տարեվերջի դրությամբ Վարդան Ջհանգիրյանին ազատ էին արձակել առողջական վիճակից ելնելով, և նա սպասում էր, թե ինչ որոշում կկայացնի դատարանը իրեն ներկայացված ձեռքարկության ժամանակ դիմադրություն ցույց տալու մեղադրանքի հետ կապված, իսկ Գագիկ Ջհանգիրյանը գտնվում էր կալանքի տակ՝ ձեռքարկության ժամանակ դիմադրություն ցույց տալու մեղադրանքով. տարեվերջի դրությամբ դատաքննությունը դեռ շարունակվում էր: Ջհանգիրյանները, հանձինս ոստիկան Արման Հարությունյանի, ճանաչել էին իրենց ծեծի ենթարկողներից մեկին, որը հանդիսանում էր ձեռքարկության ժամանակ ցուցաբերած դիմադրության ենթադրյալ վկա:

Իշխանություններն ըստ հաղորդումների ֆիզիկական բռնությունների և անմարդկային վերաբերմունքի են ենթարկել ցուցարարներին մարտի 1-ի իրադարձությունների ժամանակ և դրանից հետո: Մարդու իրավունքների միջազգային ու տեղական ակտիվիստները հայտարարում էին, որ անվտանգության ուժերի ներկայացուցիչները ծեծել են կալանավորվող անձանց ձեռքերի վրայի ժամանակ, ինչպես նաև ոստիկանական բաժանմունք կամ ձեռքերի վրայի ժամանակ, ինչպես նաև վայրեր տանելու և այնտեղից տեղափոխելու ճանապարհին: Մարտի 27-ին տրված հարցազրույցի ժամանակ մարդու իրավունքների պաշտպանը հայտնել է, որ իր աշխատակազմի անդամները տեսակցել են այդ պահին ըստ պաշտոնական տվյալների ձեռքարկված 106 անձանցից 90-ին, որոնցից 12-ը պնդում էին, որ անվտանգության ուժերի ներկայացուցիչներն ու իրավապահները ձեռքարկվելիս կամ դրանից հետո խոշտանգել կամ ծեծել են իրենց:

Մարտի 21-ի Հայաստանում գործող «Հետք» օն-լայն պարբերականը հրապարակեց ընտրություններից հետո ընդդիմության հանրահավաքներին մասնակցած Գրիգելյա Ղազարյանի ու նրա դստեր Գայանեի պատմությունը: Նրանք նշում էին, որ մարտի 1-ի երեկոյան իրենք դաժան ծեծի են ենթարկվել 30 այլ քաղաքացիական անձանց հետ, երբ իրենք քայլում էին Ֆրանսիայի դեսպանատան մերձակայքում: Մոտավորապես ժամը 21:00-ին, երբ նրանք հեռանում էին ցուցարարների հիմնական հավաքատեղից՝ Մյասնիկյանի հրապարակից, նրանք տեսան, որ ոստիկանությունը ցրում է մարդկանց մի փոքր խումբ, որն անջատվել էր հիմնական ցուցարարներից: Ղազարյանը մոտեցավ իրավապահներից մեկին, ով հայիոյանքներ տեղալով ռետինե մահակով հարվածներ հասցրեց նրա մեջքին: Լսելով կրակոցի ձայներ, մարդկանց փոքրիկ բազմությունը փորձեց վերադառնալ հիմնական հավաքատեղի կամ թաքստոց գտնել մոտակայքում, սակայն ոստիկանները ոմանց թույլ չտրվեց դա անել՝ հետապնդելով նրանց: Ըստ հաղորդման մի իրավապահ Ղազարյանի դստերը քարշ տալով ետ պահեց մի շենք մտնելուց և նրան նետեց դեպի փողոց, ապա հավաքվեցին այլ իրավապահներ, ովքեր սկսեցին ոտքով հարվածել աղջկան: Ըստ Ղազարյանի նույն պահին իրեն էլ են դաժան ծեծի ենթարկել: Ծեծելուց հետո ոստիկանները քարշ տվեցին դստերը, ով անկարող էր քայլեր, մոր կողքը, իսկ մի իրավապահ էլ նրանց խցկեց մի շենքի մուտք՝ ըստ հաղորդմանն ասելով, որ ինքն այդ պահին փրկեց նրանց կյանքը:

Մարտի 18-ին «Ազատություն» ռադիոկայանը ներկայացրեց Ռոբերտ Չախոյանի պատմությունը, ով մարտի 1-ին, ընդդիմության այլ կողմնակիցների հետ, ձեռքարկվել էր և տարվել Երևանի Կենտրոն համայնքի ոստիկանական բաժանմունք: Չախոյանը նշում է, որ իրեն ու իր հետ ձեռքարկված մյուս անձանց ոստիկանական մեքենայում և բաժանմունքում ծեծել են: Ըստ Չախոյանի ոստիկաններն անհանգստանում էին, որպեսզի չթողնեն բռնության հետքեր իր և կալանավորված մյուս անձանց մարմիններին, ուստի նրանց որովայնին, մեջքին և կողքերին մահակով հարվածելուց առաջ գրքեր են դրել: Չախոյանը նշում է, որ ոստիկանական բաժանմունքում տեսել է խիստ ծեծված մի անչափահաս տղայի և այլ անձանց, որոնք լուրջ վիճակում էին: Շուրջ երկու ժամ տևած հարցաքննությունից հետո Չախոյանին փոխադրել են Երևանի Շենգավիթ համայնքի ոստիկանական բաժանմունք: Այստեղ նրան առանց մեղադրանք ներկայացնելու պահել են 3 օր, ապա ազատ արձակել: Ոստիկանությունը կալանավորել է նրա կնոջը՝ Նաիրա Չախոյանին, երբ նա մարտի 2-ին փնտրում էր իր ամուսնուն: Նրան տեղափոխել են Կենտրոնի ոստիկանության բաժանմունք, որտեղ ըստ նրա պատմածի եղել են ծեծի ենթարկված կալանավորվածներ: Համաձայն



Նաիրա Չախոյանի պնդումների կալանքի տակ գտնվելու ընթացքում ոստիկանները հարվածել են իրեն և հայհոյել: Նրան պահել են մինչև կեսգիշեր, ապա ազատ արձակել:

Քրիստափոր Էլազյանը, ով մարտի 3-ին ձերբակալվել էր և դատապարտվել 4 տարվա ազատազրկման զանգվածային անկարգություններին մասնակցելու համար, օգոստոսի 1-ին մանրամասն հայտարարություն հրապարակեց, որտեղ պնդում էր, որ ոստիկանությունն ու Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔՕ) իրեն պարբերաբար խոշտանգել ու ծեծի են ենթարկել մարտի 4-ից մարտի 10-ը՝ փորձելով կորզել խոստովանական ցուցմունք իր ու ԱԺ պատգամավոր Հակոբ Հակոբյանի դեմ, ով նույնպես կալանավորվել էր: Էլազյանը նշել էր իրեն ծեծի ենթարկած որոշ անձանց անուններ, որոնց թվում էին ՀՔՕ պետ Անդրանիկ Միրզոյանը, Կենտրոնի ոստիկանության բաժանմունքի պետ Արթուր Մեհրաբյանը, ՀՔՕ հետաքննիչ Արիստակես Երեմյանը և դատախազ Հակոբ Ղարախանյանը:

Մարտյան իրադարձությունների հետ կապված կալանավորված անձանց հանդեպ խոշտանգումների/բռնությունների ենթարկելու նմանատիպ մեղադրանքներ են հնչել նաև Վահրամ Մխիթարյանի, Գագիկ Ավդալյանի, Հմայակ Գալստյանի, Դավիթ Առաքելյանի, Մուշեղ Սաղաթելյանի ու ուրիշ շատերի գործերում:

Դեկտեմբերի 23-ին ընդդիմությունը տեղեկացրեց, որ ընդդիմադիր ակտիվիստներ Գրիգոր Ոսկերչյանը, Գևորգ Մանուկյանը և Արմեն Խուրշուդյանը, ովքեր մարտի 1-2-ի իրադարձությունների հետ կապված քրեական գործի շրջանակում գտնվում էին կալանքի տակ և սպասում էին դատաքննությանը, ծեծի են ենթարկվել Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում: Դիվանագետ-դիտորդները ամրագրել են, որ այս մեղադրյալներից երկուսի դեմքին ոստիկանները մի քանի ապտակ էին հասցրել: Օմբուդսմենը, ով իր օգնականներին ուղարկել էլ կալանավորների հետ հանդիպման, լուրջ մտահոգություն հայտնեց խոշտանգումների վերաբերյալ հնչած մեղադրանքների կապակցությամբ: Դեկտեմբերի 24-ին նախագահ Մերժ Սարգսյանը հրամայեց Արդարադատության նախարարության այդ մեղադրանքների մասով ծառայողական քննություն անցկացնել:

Ապրիլի 23-ին և 25-ին ընդդիմադիր միտվածություն ունեցող «Առավոտ» օրաթերթը հոդվածներ հրապարակեց, որոնց համաձայն Սյունիքի մարզպետ Մուրեն Խաչատրյանը ծեծել էր 16-ամյա մի տղայի և կոտրել նրա ծնոտը, քանի որ վերջինս ավելի վաղ վիճաբանել էր նրա որդու հետ: Ըստ հաղորդումների տղան տեղափոխվել էր հիվանդանոց, իսկ նրա ընտանիքը վախեցել էր տեղի ոստիկանությանը տեղեկացնել վիճաբանության մասին: Մարզպետը հերքեց այդ լուրերը: Վարչապետ Տիգրան Սարգսյանը հրամայեց կատարվածի քննություն անցկացնել, որի արդյունքում եզրակացվեց, որ հաղորդված փաստերը չէին համապատասխանում իրականությանը: Անկախ դիտորդները քննադատեցին ակնհայտորեն ձևականորեն անցկացված քննությունը՝ նշելով, որ հետաքննիչները սխալ տղայի են գտել ու սխալ մարդ է ռենտգենային հետազոտություն անցել:

Տարվա ընթացքում թեթևակի առաջընթաց է եղել 2007թ. մայիսին ոստիկանության բաժանմունքում կասկածելի հանգամանքներում մահացած Լևոն Գուլյանի գործի քննության հարցում: Մարտի 12-ին ՀՔՕ-ն, որ 2007թ. դեկտեմբերին գլխավոր դատախազությունից իր վարույթ էր ընդունել այդ գործը, փակեց այն: Ըստ ՀՔՕ-ի Գուլյանը, ով ըստ պնդումների սպանության ակնատես էր եղել, մահացել էր վայր ընկնելով ոստիկանության բաժանմունքի երկրորդ հարկի պատուհանից, երբ փորձում էր փախուստի դիմել: Գուլյանի ընտանիքն ու

մարդու իրավունքների ակտիվիստները նշում էին, որ քննությունը ոչ թափանցիկ էր, և ոչ էլ վստահության արժանի: ՀՔԾ-ի որոշումն անհաջող բողոքարկելուց հետո ապրիլի 8-ին Գուլյանի ընտանիքը դիմեց դատարան՝ գործը վերաբացելու խնդրանքով: Հունիսի 6-ին դատավորը վճռեց հոգուտ ընտանիքի ու ՀՔԾ-ին հրամայեց վերաբացել գործի քննությունը: ՀՔԾ-ը դիմեց Վերաքննիչ դատարան, որն էլ հուլիսի 21-ին որոշեց անփոփոխ թողնել ստորին ատյանի դատարանի վճիռը: Տարեվերջի դրությամբ վերաբացված գործի քննությունը դեռ շարունակվում էր:

Տարվա ընթացքում առաջընթաց չի եղել Լոռու մարզի նախկին դատախազ Ալբերտ Ղազարյանի սպանության գործով (օգոստոս, 2007թ.) վկաներ Կարեն Դոդոյանի և Աշոտ Ղուկասյանի կողմից խոշտանգումների և բռնությունների մասին ներկայացրած մեղադրանքների քննության հարցում: Հետագա զարգացումներ չեն գրանցվել նաև Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում մի կալանավորի հանդեպ 2007թ. հոկտեմբերին և Արտավազդ Միմոնյանի հանդեպ 2007թ. նոյեմբերին տեղ գտած բռնությունների մեղադրանքների մասով:

Ապրիլի 30-ին Մարդու իրավունքների հարցերով Եվրախորհրդի հանձնակատար Համմերբերգը հրապարակեց մի զեկույց, որտեղ մտահոգություն էր հայտնում կալանավորվածների հանդեպ ոստիկանության դաժան վերաբերմունքի կապակցությամբ, որը կարծես թե լայն տարածում ունի և նպատակաուղղված է խոստովանությունների կորզմանը: Բանտարկյալներից շատերը հաղորդել են, որ դաժան ծեծի են ենթարկվել և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների: Համմերբերգը զգուշացնում էր, որ ստորագրված խոստովանությունները չպետք է քրեական հետապնդման համար դիտարկվեն որպես հիմնական ապացույց և ոստիկանությունը պետք է այլ իրեղեն ապացույցներ հայտնաբերի: Համմերբերգը հաղորդում էր, որ պաշտպանությունը ներկայացնող փաստաբանները, որոնց հետ ինքն հանդիպել է, նշել են, որ մեղադրյալները հաճախ վախենում են կալանքի տակ գտնվելու ընթացքում ոստիկանության անօրինաչափ վերաբերմունքի մասին ցուցմունք տալ՝ վախենալով հաշվեհարդարից:

Մարդու իրավունքների պաշտպանը հոկտեմբերի սկզբին դիվանագետների մոտ նշել է, որ իրավապահ կառույցները հիմնականում դանդաղ են արձագանքել խոշտանգումների ու անմարդկային վերաբերմունքի ենթարկվելու հաղորդումների մասին իր հարցումներին, կամ էլ քանիցս տվել են տիպային պատասխան՝ ասելով, որ ըստ ներկայացվող մեղադրանքների քննություն է իրականացվել ու պարզվել է, որ մեղադրանքները հիմնավորված չեն:

Բանակում տիրող բարքերը, հրամանատարների անպատժելիությունը և վատ կենցաղային պայմանները զինված ուժերում շարունակել են զինվորական գործողությունների հետ կապ չունեցող դաժան վերաբերմունքի ու վնասվածքների պատճառ հանդիսանալ: Չնայած հուսալի վիճակագրություն չկա զինված ուժերում ոչ կանոնակարգային հարաբերությունների դրսևորումների վերաբերյալ, սակայն զինվորները հաղորդել են մարդու իրավունքներով զբաղվող չԿ-ներին, որ այդ երևույթը շարունակվել է: Զինվորների ընտանիքները հայտնել են, որ կոռումպացված պաշտոնյաներ վերահսկում են գորամասերը: Մարդու իրավունքների հարցերը դիտարկող այլ անձինք հաղորդել են այնպիսի դեպքերի մասին, երբ բանակ են գորակոչվել անձինք, ովքեր առողջական լուրջ խնդիրների պատճառով պիտանի չեն եղել զինվորական ծառայության համար, չնայած «Զինվորի մայր» չԿ-ի տվյալներով այդպիսի դեպքերը 2007թ. համեմատ 70 տոկոսով նվազել են, քանի որ իշխանությունները միջոցներ են ձեռնարկել այդ երևույթը սահմանափակելու:

ուղղությամբ: Տարվա ընթացքում ոչ կանոնակարգային հարաբերությունների դրսևորման ու դրանց հետ կապված բռնությունների համար դատապարտվել է 85 զինծառայող: 2007թ. նոյեմբերին օմբուդսմենն իր աշխատակազմում զինվորական հարցերով մասնագիտացող խորհրդատու նշանակեց՝ զինված ուժերում ոչ կանոնակարգային հարաբերություններին և մարդու իրավունքների ոտնահարումներին հետևելու համար:

Հունիսի 23-ին մարդու իրավունքների պաշտպանը ստեղծեց աշխատանքային խումբ՝ հետաքննելու զինծառայող Հ.Հ.-ի կողմից հունիսի 9-ին երկու անգամ ինքնասպանություն գործելու փորձերը: Ըստ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի տարածած մամլո հաղորդագրության Հ.Հ.-ն իր գորամասում բռնաբարության ակնատես էր դարձել, սակայն ոչ զոհի, ոչ էլ բռնաբարողի ինքնությունը չգիտեր: Հ.Հ.-ի հայրը պնդում էր, որ որդին ծառայության ընթացքում բռնությունների ու ծեծի էր ենթարկվել: Ըստ Հելսինկյան ասոցիացիայի Հ.Հ.-ն ինքն էր ենթարկվել գորակիցների կողմից սեռական բռնությունների. այնուամենայնիվ, երբ Հ.Հ.-ն ազատվեց զինվորական ծառայությունից, գործը փակվեց:

Ըստ Հելսինկյան ասոցիացիայի օգոստոսի 15-ին Գորիս քաղաքում ծառայող Արթուր Գրիգորյանը գլխի բազմաթիվ լուրջ վնասվածքներով տեղափոխվել է տեղի զինվորական հիվանդանոց, որտեղ ըստ պնդումների 48 ժամ նրան բուժօգնություն չի ցուցաբերվել: Մինչ Գրիգորյանը դեռ կոմայի մեջ էր գտնվում, գործով զբաղվող զինվորական դատախազները պնդում էին, որ նրա վնասվածքները երկհարկ մահճակալից ընկնելու հետևանքով են առաջացել: Հանրապետական զինվորական հիվանդանոց փոխադրվելուց ու վիրահատվելուց հետո Գրիգորյանը հայտնեց, որ իրեն ծեծել է իր վաշտի հրամանատար Դավիթ Հայրապետյանը: Ծեծի հետևանքով Գրիգորյանը լրջորեն հաշմվել էր: Հայրապետյանին պաշտոնական լիազորություններն անցնելու մեղադրանք ներկայացվեց: Ըստ Գրիգորյանի ընտանիքի Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը դեկտեմբերի 15-ին, չնայած գործը Երևանին ավելի մոտ գտնվող դատարան տեղափոխելու դիմումին, քանի որ Գրիգորյանը չէր կարող երկար ճանապարհ անցնել, գործի լուսմը շարունակեց Գրիգորյանի բացակայությամբ: Հայրապետյանը դատապարտվեց երկու տարվա ազատազրկման, որը նախատեսված նվազագույն պատժաչափն էր:

Սեպտեմբերի 3-ին մարդու իրավունքների պաշտպանը նամակ ուղարկեց պաշտպանության նախարարին օգոստոսի 4-ի միջադեպի վերաբերյալ, երբ Աշտարակում տեղակայված զորամասերից մեկի զինվոր Նաիրի Վարդանյանը փորձել էր ինքնասպանություն գործել՝ հրամանատար Գարուն Աբգարյանի կողմից հրապարակավ ծեծի և նվաստացումների ենթարկվելուց հետո: Զինվորական դատախազները տարեվերջի դրությամբ Գարուն Աբգարյանի հանդեպ ոչ մի միջոց չէին ձեռնարկել: Ըստ պաշտոնական տեղեկատվության Աբգարյանի գործողությունները հաջորդել են երկու ժամից ավել առանց թույլտվության պահակակետը լքելու Գրիգորյանի գործողություններին, ուստի քրեորեն հետապնդելի են և Աբգարյանի, և Վարդանյանի գործողությունները՝ համապատասխանաբար պաշտոնական լիազորություններն անցնելու և զինվորական պարտականությունների կատարումից հրաժարվելու համար: Երկուսն էլ զոջում էին իրենց արարքի համար, և պաշտպանության փոխնախարար միջնորդել էր քննչական մարմնին Աբգարյանի հանդեպ հետապնդում չիրականացնելու հարցով: Սեպտեմբերի 29-ին Երևանի գորամասի քննչական մարմինը որոշեց Աբգարյանի ու Վարդանյանի հանդեպ մեղադրանքներ չներկայացնել:

2007թ. հուլիսին զինծառայող Գագիկ Միքայելյանը գորամասի պետ Արտակ Գասպարյանի կողմից 5 ամիս բռնություններ և հալածանքների ենթարկվելուց հետո փորձել է

վերջ տալ իր կյանքին: Գասպարյանին ներկայացվեց պաշտոնեական լիազորություններն անցնելու մեղադրանք: Մայիսի 21-ին Գասպարյանի դեմ հարուցված գործն ուղարկվեց դատարան, իսկ տարեվերջի դրությամբ դատավճիռ դեռ չէր կայացվել:

Հուլիսի 4-ին վերսկսվեց երեք զինվորների դատավարությունը, ովքեր մեղադրվում էին 2003թ. երկու զինձառայողների սպանության մեջ, իսկ 2006թ. դեկտեմբերին կայացրած վճռով Վճռաբեկ դատարանը չեղյալ էր հայտարարել այս երեքի համար սահմանված պատիժները: Սպանության այս գործի հիմքում զինվոր Ռազմիկ Սարգսյանի խոստովանությունն էր. վերջինս պնդում էր, որ դաժան խոշտանգումների է ենթարկվել, որպեսզի իրեն մեղավոր ճանաչի և ընկերների դեմ ցուցմունք տա: Մարդու իրավունքների ակտիվիստները քննադատում էին խոշտանգումների վերաբերյալ հնչեցրած մեղադրանքների մասով արժանահավատ քննության բացակայությունը, ինչպես նաև նույն հանցագործության համար երեք զինվորների կրկնվող դատավարությունը: Դատախազների հաղորդմամբ սպանությունների քննության ժամանակ խոշտանգումների ենթարկելու մեղադրանքների վերաբերյալ նախաքննություն են անցկացրել և եզրակացրել, որ այդ մեղադրանքները հիմնավորված չեն: Երեք զինվորները դիմել են Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ) 2004 և 2007թթ., իսկ 2007թ. հոկտեմբերին ՄԻԵԴ-ը որոշեց, որ գործը կարող է իր վարույթ ընդունել մասնակիորեն, ինչը թույլ է տալիս, որ ՄԻԵԴ-ը գործը քննության առնի, երբ երկրում հնարավոր բոլոր իրավական լուծման միջոցները սպառված կլինեն:

Մեպտեմբերի 4-ին կառավարությունը հայտարարեց ոստիկանության վարքագծի թափանցիկության բարելավման և անվտանգության ուժերի կողմից մարդու իրավունքների ոտնահարումները կանխելու նպատակով հայտնի հասարակական գործիչներից կազմված վերահսկիչ մարմին ձևավորելու իր մտադրության մասին, բայց տարեվերջի դրությամբ այս մարմինը դեռ ձևավորված չէր:

### ***Բանտերի ու կալանավայրերի պայմանները***

Բանտային պայմանները դեռևս անբավարար ու բանտարկյալների առողջության համար ոչ բարենպաստ էին, չնայած կառավարության նախաձեռնությամբ ձևավորված ազատագրկման վայրերի մոնիտորինգ իրականացնող հասարակական կազմակերպությունների Հասարակական դիտորդների խումբը (ՀԴԽ) հաղորդել է բանտերում վերանորոգման աշխատանքների շարունակման մասին: Չնայած դրան՝ խցերը եղել են գերբնակեցված, բանտարկյալների մեծ մասն ապահովված չի եղել հիգիենայի տարրական պարագաներով, և անբավարար է մնացել սննդի որակը: ՀԴԽ-ի զեկույցում նշվում էր, որ բանտարկյալների համար բարձր է եղել տուբերկույրոգով վարակվելու ռիսկը, իսկ մանկական գաղութներում գտնվող դեռահասները գրեթե չեն ստացել օրենքով պահանջվող կրթություն: ՀԴԽ հաղորդել է կրկնվող բնույթի այլ խնդիրների մասին, ինչպիսիք են տեսակցության իրավունքի մերժումը, բժշկական օգնության անտեսումը, իսկ որոշ դեպքերում՝ ֆիզիկական բռնությունները:

Ըստ դիտորդների՝ բանտարկյալների ու կալանավորների հանդեպ իրավապահների կողմից թույլ տրված բռնությունների դեպքերի մեծ մասը շարունակվել է տեղի ունենալ ոստիկանական բաժանմունքներում և ոչ թե ոստիկանության կալանավորված և ձերբակալված անձանց պահման վայրերում, որոնք ենթակա են մարդու իրավունքների մոնիտորինգի: 2006թ. իր զեկույցում Եվրախորհրդի Խոշտանգումների կանխարգելման

հանձնաժողովը (ԽԿՀ) անդրադարձել էր այնպիսի դեպքերի, երբ Երևանի ոստիկանական տարբեր բաժանմունքներում կալանավորված անձինք պահվել են մինչև տասն օր առանց ներքնակի, վերմակի ու սննդի՝ օգտվելով միայն ազգականների բերած սննդամթերքից: 2007թ. դեկտեմբերի զեկույցում ԽԿՀ-ն անդրադարձել է ոստիկանության ձեռքարկված և կալանավորված անձանց պահման վայրերում տեղ գտած դրական տեղաշարժերին՝ արդեն վերանորոգված կամ 2006թ.-ին վերանորոգման ընթացքի մեջ գտնվող հաստատություններում: ԽԿՀ կողմից դիտարկված հաստատություններում կալանավորներն ապահովված են եղել սննդով, վերմակով ու ներքնակով: Այնուամենայնիվ, ԽԿՀ-ն թերություններ է նկատել Վանաձորի, Միսիանի, Եղեգնաձորի ոստիկանական բաժանմունքներում, մասնավորապես՝ խցերի փոքր չափսերը, ցածր ջերմաստիճանը և տաք ջրի բացակայությունը:

Փետրվարի 27-ից մարտի 19-ը ՀԴԽ-ն այցելել է քրեակատարողական հիմնարկներ, որտեղ պահվում էին մոտ 100 ընդդիմադիրներ՝ կալանավորված մարտի 1-2-ի իրադարձությունների հետ կապված: Հիմնվելով 11 այցելությունների ու 60 կալանավորված անձանց հետ ունեցած հանդիպումների վրա ՀԴԽ-ն հաղորդել էր, որ խցերը գերբնակեցված էին և խցերում բանտարկյալների թիվն ավել էր մահճակալների թվից, իշխանությունները թույլ չեն տվել, որ կալանքի առաջին օրերին կալանավորները իրենց ընտանիքների հետ շփում ունենան: Բանտարկյալները դժգոհություն են հայտնել իրենց ձեռքարկության ժամանակ տեղ գտած ընթացակարգային ու այլ խախտումների վերաբերյալ, ծեծի, խոշտանգումների ենթարկելու և իրավական օգնության հասանելիությունը ձգձգելու վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանը մարտի 1-ի հետ կապված քրեական գործերի շրջանակում նախնական կալանքի տալ գտնվող անձանցից ստացել է բողոքներ այն մասին, որ թեպետ այս մարդիկ նախկինում դատված չեն եղել, սակայն խցերում նրանց հետ միասին եղել են բազմակի դատվածություն ունեցող անձինք, ինչը օրենքի խախտում է:

Մարտի 19-ին իշխանությունները վերանորոգել են կանանց ու դեռահասների նախնական կալանքի կենտրոնը Աբովյանի բանտում:

Հունիսի 24-ին արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը հայտարարեց, որ Արմավիր մարզի Չոբանքարա բնակավայրում նոր բանտ է կառուցվում. տարեվերջի դրությամբ շինարարությունը դեռ շարունակվում էր:

Կոռուպցիան քրեակատարողական հիմնարկներում շարունակել է խնդրահարույց մնալ՝ սրվելով հատկապես բանտերի վարչական անձնակազմի ցածր աշխատավարձերի, աշխատանքի անբավարար, իսկ երբեմն նաև վտանգավոր պայմանների, կադրերի սղության պատճառով: Որոշ քրեակատարողական հիմնարկներում բանտարկյալները կաշառում են պաշտոնյաներին, որպեսզի տեղավորվեն մենախցերում, և ստանան հավելյալ հարմարություններ: Կան նաև չստուգված հաղորդումներ առ այն, որ իշխանությունների կողմից գանձվել են «ոչ պաշտոնական» վճարներ, որպեսզի ընտանիքի անդամներին կամ ընկերներին թույլ տան ուտելիք փոխանցել բանտարկյալներին: Որոշ քրեակատարողական հիմնարկներում դիտորդները նկատել են, որ բանտարկյալները դժվարություններ ունեն նամակների առաքման հետ կապված, իսկ որոշ հիմնարկների պաշտոնյաներ ընտանիքի անդամների հետ տեսակցության նորմալ պայմաններ չեն ապահովում:

Թեպետ բոլոր քրեակատարողական հիմնարկները պաշտոնապես գտնվում են Արդարադատության նախարարության ենթակայության ներքո, Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) շարունակել է դե ֆակտո տնօրինել Երևան-Կենտրոն բանտը, որ տեղակայված է ԱԱԾ-ին պատկանող տարածքում. այդ հաստատությունը հաճախ օգտագործվում էր քաղաքական ուղղվածություն ունեցող գործերով նախնական կալանքի տակ գտնվող անձանց ու դատապարտված բանտարկյալներին պահելու համար: Եղել են հաղորդումներ առ այն, որ ԱԱԾ-ն հետևել է բանտարկյալների հաղորդակցությանը, այդ թվում նաև փաստաբանների հետ ունեցած զրույցներին:

Կառավարությունը հիմնականում թույլատրել է տեղական հասարակական կազմակերպություններին և միջազգային իրավապաշտպան խմբերին, այդ թվում՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեին դիտարկել բանտային պայմանները: Կարմիր խաչի միջազգային կոմիտեին թույլատրվել է այցելել թե բանտեր, թե նախնական կալանքի կենտրոններ, ինչն էլ վերջինս իրականացրել է անհրաժեշտության ու նպատակահարմարության իր սկզբունքների համաձայն: Իշխանությունները հիմնականում շարունակել են թույլատրել ՀԴԽ-ի ներկայացուցիչներին առանց նախնական զգուշացման այցելել բանտեր: Այնուհանդերձ, ՀԴԽ-ին մուտքի թույլտվությունը մերժվեց, երբ այն փորձեց բանտեր այցելել մարտի 4-ին՝ դիտարկելու մարտի 1-ի բախումներից հետո կալանավորված անձանց վիճակը: ՀԴԽ-ն կարողացավ իր դիտարկումները վերսկսել միայն մարտի 7-ից հետո: Հասարակական դիտարկումների մեկ այլ խումբ շարունակել է դիտարկել ոստիկանության կալանավորված և ձերբակալված անձանց պահման վայրերը:

#### **դ) Կամայական ձերբակալություն կամ կալանավորում**

Օրենքով արգելվում է կամայական ձերբակալումը և կալանավորումը, սակայն գործնականում իշխանությունները շարունակել են առանց կարգադրագրի ձերբակալել և կալանավորել քրեական գործերով կասկածյալներին: Մարտի 1-ի բախումների ժամանակ և դրանից հետո իշխանությունները կալանավորել են հարյուրավոր անձանց այն հիմնավորմամբ, որ նրանց ձերբակալությունը անհրաժեշտ էր հասարակական կարգը պահպանելու համար. հնչել են մեղադրանքներ, որ որոշ ձերբակալությունները եղել են կամայական՝ պայմանավորված բռնությունների վայրին մոտ լինելու հանգամանքով կամ էլ հայտնի քաղաքական պատկանելությամբ:

#### ***Ոստիկանության և անվտանգության համակարգի դերը***

Ազգային ոստիկանությունը պատասխանատու է ներքին անվտանգության համար, մինչդեռ Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) պատասխանատու է ազգային անվտանգության, հետախուզական գործունեության, սահմանային հսկողության համար, երկու կառույցների ղեկավարներն էլ նշանակվում են նախագահի կողմից: Ոստիկանությունն ու ԱԱԾ դեռևս չունեն համապատասխան պատրաստվածություն, ռեսուրսներ և սահմանված ընթացակարգեր բարեփոխումների իրականացման կամ չարաշահումների դեպքերը կանխարգելելու համար: Բանտարկյալները հայտնել են, որ չարաշահումների մեղադրանքները հետաքննելու ուղղությամբ ոստիկանության ու ԱԱԾ պաշտոնյաների կողմից գրեթե ոչինչ չի արվում: Դրա արդյունքում լուրջ խնդիր էր շարունակում մնալ անպատժելիությունը:

Ոստիկանության ու անվտանգության ուժերի համար շարունակել է զգալի խնդիր մնալ կոռուպցիան, սակայն բարեփոխման աշխատանքները շարունակվել են, հիմնականում՝

երթնեկության կարգավորման ու քրեական հետախուզության ասպարեզներում:  
Ոստիկանությունը շարունակել է իրականացնել 2006թ. սահմանված ընթացակարգերը, որոնք ուղղված են ճանապարհներին առկա ոստիկանական հսկիչ կետերում կուռուպցիայի վերացմանը: 2007թ. ստեղծվել է ճանապարհային երթնեկության հետ կապված տուգանքների վճարման նոր համակարգ՝ կրճատելու կաշառման հնարավորությունները: Տարվա ընթացքում կարծես թե գրանցվել է հետագա նվազում կաշառք վերցնելու հարցում:

Ոստիկանական չարաշահումների քննության առանձին մեխանիզմ չի եղել: Ըստ օրենսդրության քաղաքացիները կարող են ոստիկանության դեմ հայց ներկայացնել դատարան: Կառավարության հաղորդմամբ տարվա ընթացքում ոստիկանությունը չի ստացել քաղաքացիների կողմից ոստիկանության աշխատակիցների կողմից կալանքի տակ գտնվողների նկատմամբ անօրինաչափ վերաբերմունքի հետ կապված որևէ բողոք. նաև հաղորդվել է, որ նման վերաբերմունքի համար որևէ ոստիկան չի պատժվել:

Դատախազությունը ոստիկանության բիրտ վերաբերմունքի փաստերով 6 քրեական գործ է հարուցել, որոնցից երեքը ներկայացվել է դատարան. գործերից մեկը փակվել է, իսկ մյուս երկուսը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էին:

Մեպտեմբերի 4-ին գլխավոր դատախազությունը քրեական գործ է հարուցել Վարդաշեն քրեակատարողական հիմնարկի փոխտնօրենի ու հիմնարկի վարչական անձնակազմից նրա երկու հանցակիցների դեմ պաշտոնեական լիազորություններն անցնելու ու բանտարկյալի հանդեպ բռնություն կիրառելու համար:

Կառավարության հաղորդմամբ 10 ծառայողական քննություն է իրականացվել ոստիկանների անօրինաչափ վարքագծի հետ կապված: Հիշյալ բոլոր ոստիկանները ազատվել են աշխատանքից: Քննությունների արդյունքների հիման վրա 4 հոգի դատապարտվել են, իսկ մյուս գործերը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էին: Կառավարության հաղորդմամբ դատախազների դիմումների հիման վրա տարվա առաջին կիսամյակում վարչական տույժերի են ենթարկվել 28 ոստիկաններ (նախորդ ողջ տարվա ընթացքում 23 հոգի է ստացել վարչական տույժ):

Օրենսդրության համաձայն նախնական կալանքի տակ գտնվողները կարող են նախքան դատավարությունը բողոք ներկայացնել քննության ընթացքում իշխանությունների թույլ տված բռնությունների վերաբերյալ. այնուհանդերձ կալանքի տակ գտնվող անձինք պետք է ոստիկանությունից կամ դատախազությունից բժշկական փորձաքննության թույլտվություն ստանան, որն անհրաժեշտ է ֆիզիկական բռնության փաստը հաստատելու համար: Իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները շարունակել են հայտնել, որ իրավասու մարմինները հազվադեպ են այդպիսի թույլտվություն տալիս կամ տալիս են օրեր անց, երբ բռնության հետքերն այլևս տեսանելի չեն:

2007թ. արդարադատության համակարգում հավասարակշռման ու զսպման ինստիտուցիոնալ մեխանիզմների բարեփոխումների շրջանակում հետաքննությունների անցկացման գործառույթը գլխավոր դատախազությունից փոխանցվեց ոստիկանության տարբեր կառույցների: 2007թ. դեկտեմբերին ձևավորվեց ՀՔԾ-ը՝ որպես պաշտոնեական հանցանքները քննելու անկախ մարմին: Գտնվելով գլխավոր դատախազության շենքում և ղեկավարվելով դատախազության քննչական վարչության նախկին պետ՝ Անդրանիկ Միրզոյանի կողմից՝ այն տարվա ընթացքում դե ֆակտո գործել է որպես դատախազության քննչական մարմին՝ շրջելով 2007թ. բարեփոխումների արդյունքները և նպատակը:

ՀՔԾ-ը ոստիկանների կողմից կամ նրանց մասնակցությամբ գործած հանցանքների հետ կապված 25 քրեական գործ է հարուցել տարբեր մեղադրանքներով, այդ թվում՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու կամ անցնելու, կաշառք վերցնելու, կեղծիքներ թույլ տալու կամ անգործության/անփութության մեղադրանքներով: Այս 25 գործերից 10-ն ուղարկվել են դատաքննության, իսկ մնացածները կամ փակվել են, կամ էլ դեռ ընթանում է քննություն:

Մեպտեմբերի 23-ին ոստիկանությունը «Փրոջեքթ Հարմոնի» կազմակերպության հետ համայնքային վերականգնողական կենտրոն բացեց Իջևան քաղաքում: Իջևանի կենտրոնը Գյումրու, Ալավերդու և Վանաձորի կենտրոնների հետ միասին խորհրդատվություն է առաջարկում առաջին անգամ հանցանք գործած անչափահասներին ու կազմակերպում է տեղական ոստիկանության աշխատանքը հանրակրթական դպրոցների հետ՝ համայնքային ծրագրերով:

2007թ. մարտին ոստիկանությունը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) հետ միասին սկսեց համայնքային ոստիկանության կենտրոնի փորձարարական ծրագիր, որի նպատակն է նպաստել ոստիկանության ու հասարակության համագործակցությանը: Ծրագիրը մեկնարկեց Երևանի Արաբկիր համայնքի ոստիկանական բաժանմունքում և շարունակում էր գործել տարվա ընթացքում: Նոյեմբերի 27-ին ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և ոստիկանության միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր՝ ոստիկանական գործառույթի ժողովրդավարականության, համայնքային ոստիկանական գործունեության, միջազգային ստանդարտներին համաձայն ոստիկանների ուսուցանման ու հասարակական կարգի պահպանման հմտությունների զարգացման հարցերում համագործակցության և օժանդակության վերաբերյալ:

### ***Ձերբակալություն և կալանք***

Ձերբակալված կասկածյալին 72 ժամից ավել կալանքի տակ պահելու համար դատախազները և ոստիկանության քննիչները պետք է դատավորից կարգադրագիր ստանան: Դատավորները հազվադեպ են մերժում ոստիկանության կալանքի կարգադրագրի հայտերը: Երբեմն ոստիկանությունը ձերբակալություններ է կատարում առանց կարգադրագրի (ինչն անհրաժեշտ պայման չէ անձանց մինչև 72 ժամ ձերբակալելու համար), այն պատրվակով թե կալանավորվածները գործով անցնող վկաներ են, և ոչ կասկածյալներ: Տարվա ընթացքում այս կարգի գործելակերպը լայնորեն կիրառվել է: Օրենքը նախատեսում է գրավի համակարգ, սակայն գործնականում դատարանների մեծ մասը մերժում է գրավի հայտը՝ կարգադրելով փոխարենը կամ շարունակել կալանքը, կամ մեղադրյալին ազատ արձակել՝ նրանց ստանձնած պարտավորության հիման վրա: Վերջին տարբերակի դեպքում մեղադրյալներից երբեմն պահանջում են հանձնել անձնագրերը և փաստաթուղթ ստորագրել երկրից (որոշ դեպքերում քաղաքից) չբացակայելու վերաբերյալ:

Օրենքը ոստիկանությունից պահանջում է տեղեկացնել կալանավորվածներին լրություն պահպանելու, հեռախոսազանգ կատարելու և ձերբակալության պահից սկսած փաստաբանի, իսկ անվճարունակ լինելու դեպքում՝ հանրային պաշտպանի կողմից ներկայացված լինելու իրավունքների մասին: Գործնականում ոստիկանությունը միշտ չէ, որ առաջնորդվել է օրենքով: Ոստիկանությունը հաճախ առանց փաստաբանի ներկայության հարցաքննել ու ճնշում է գործադրել կալանավորների վրա՝ մեղադրական եզրակացությունից



առաջ խոստովանություն ստանալու նպատակով: Ոստիկանությունը երբեմն սահմանափակել է ընտանիքի անդամների կամ փաստաբանների շփման հնարավորությունը կալանավորների հետ: Քննիչների կողմից հարցաքննություն անցկացնելու ընթացքում փաստաբանների կողմից հարցեր տալը երբեմն սահմանափակվել է: Մարդկանց կալանքը որպես «գործով անցնող վկաների»՝ նախքան նրանց կասկածյալ որակելը հանգեցրել է այն փաստին, որ այդ անձինք հարցաքննվել են առանց փաստաբանի:

Համաձայն քաղաքական ընդդիմության, որն առաջնորդվում էր նախկին նախագահ և փետրվարին նախագահի թեկնածու առաջադրված Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից, ընդդիմության հազարավոր համախոհներ ձերբակալվել և հարցաքննվել են ոստիկանության կողմից՝ նախագահական ընտրություններից առաջ և հետո: Ընդդիմությունը պնդում էր, որ այդ անձինք, որոնց թվում էին ընտրական շտաբի աշխատակիցներ, վստահված անձինք և շարքային քաղաքացիներ, ձերբակալվել էին խոչընդոտելու կամ կանխելու քարոզարշավին սատարող քաղաքական գործունեությունը կամ ընդդիմության հանրահավաքներին նրանց մասնակցությունը:

Մարտի 1-ի վաղ առավոտյան հարյուրավոր մարդիկ են ձերբակալվել Ազատության հրապարակում և դրան հարող տարածքում, երբ անվտանգության ուժերը մաքրեցին հրապարակը ցուցարարներից, որոնք 11 օր էր, որ այնտեղ ճամբար էին հաստատել՝ բողոքարկելով ընտրության արդյունքները: Ըստ ականատեսների հաղորդումների ոստիկանությունը շարունակում էր մարդկանց ձերբակալությունները մինչև կեսօր. ընդդիմության թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանը ցուցարարներին ցրելու գործողությունների ընթացքում անվտանգության ուժերի կողմից վերցվել էր դե ֆակտո տնային կալանքի տակ, որ շարունակվեց մոտ երեք շաբաթ:

Մարտի 20-ի զեկույցում, ԵՄ գնահատմամբ՝ ավելի քան 400 հոգու բերման են ենթարկել և խնդրել ցուցմունք տալ մարտի 1-ի իրադարձությունների կապակցությամբ: Մարտի 13-ին գլխավոր դատախազը հայտարարեց, որ ավելի քան 95 հոգի կալանավորվել է հասարակական կարգի խախտմամբ ցույցեր կազմակերպելու կամ դրանց մասնակցելու համար: Մարտի 15-ին ԵՄ մարդու իրավունքների հանձնակատարը հայտարարեց, որ ոչ պաշտոնական աղբյուրներից տեղեկություններ է ձեռք բերել, որ մարտի 1-15-ը ձերբակալվել է ևս 50 հոգի՝ հիմնականում Երևանից դուրս: Ըստ ձերբակալվածների և փաստաբանների՝ կալանավորվածների մեծ մասը մեղադրվում էր հասարակական կարգը խախտելու, անօրինական զենք պահելու, բռնարարքներ հրահրելու և ոստիկանությանը կատաղի դիմադրություն ցույց տալու մեջ: Փաստաբանները հայտնում էին, որ կալանավորումների մի մասը տեղի է ունեցել նախքան Ազատության հրապարակում ցուցարարներին ցրելը:

Մարտի 1-ի առնչությամբ կալանավորված անձանցից շատերը ձերբակալվել էին առերևույթ արհեստական կամ քաղաքական շարժառիթներով պայմանավորված մեղադրանքներով: Իշխանություններն արդարացնում էին ձերբակալությունները, զանգվածային անկարգություններ հրահրելու և ոչ սահմանադրական միջոցներով իշխանությունը զավթելու փորձերը կանխելու անհրաժեշտությամբ: Դեպքերի մեծ մասի ժամանակ մարդկանց բաց էին թողել առանց մեղադրանք ներկայացնելու՝ մի քանի ժամ անազատության մեջ պահելուց հետո:

Մարտի իրադարձություններից ամիսներ անց բազմաթիվ մարդկանց կարճ ժամանակով բերման էին ենթարկում նույն եղանակով՝ ընդդիմության համախոհներին

Երևանում տեղի ունեցող ամենօրյա «քաղաքական զրոսանքներին» մասնակցելուց ետ կանգնեցնելու համար: Բերման ենթարկվածների մի մասը հայտնել է, որ ազատ արձակվելուց առաջ, ենթարկվել են թմրադեղերի կիրառման և հոգեբանական հարկադիր ստուգման: Ըստ հաղորդումների բերման ենթարկվածներին հաճախ լուսանկարում էին և մատնահետքեր վերցնում՝ խախտելով ոստիկանության ընթացակարգերը, համաձայն որոնց սա չի արվում այն անձանց նկատմամբ, ում պաշտոնապես մեղադրանք չի առաջադրվել:

Մարդու իրավունքների տեղական և միջազգային խմբերը հայտնել են մարտի 1-ին և դրանից հետո մարդկանց կալանավորելու և ձերբակալելու ընթացքում տեղ գտած ընթացակարգային և այլ խախտումների մասին: Մարտի 1-ից հետո կալանավորված անձանց պահման վայրեր կատարած այցելությունների ընթացքում մարդու իրավունքների պաշտպանին նույնպես բողոքներ են ներկայացվել ընթացակարգային խախտումների, իրավական ներկայացուցիչ ունենալը սահմանափակելու կամ արգելելու վերաբերյալ:

Մարտի 4-ին Ազգային ժողովը, զանգվածային անկարգություններ հրահրելու և Մահմանադրության խախտմամբ պետական իշխանությունը յուրացնելուն ուղղված փորձեր անելու մեղադրանքների հիման վրա, անձեռնմխելիությունից զրկեց չորս պատգամավորի (Մասուն Միքայելյան, Մյասնիկ Մալխասյան, Հակոբ Հակոբյան և Խաչատուր Սուքիասյան): Պատգամավորներից երեքը ձերբակալվել են, իսկ մեկը՝ գործարար Խաչատուր Սուքիասյանը թաքնվել է իշխանություններից: Տարեվերջի դրությամբ նա դեռևս փախուստի մեջ էր. փախուստի մեջ էր նաև ընդդիմադիր «Հայկական ժամանակ» օրաթերթի խմբագիր և ընտրարշավի հարցերով Տեր-Պետրոսյանի խորհրդատու Նիկոլ Փաշինյանը, ով նույնպես մեղադրվում էր զանգվածային անկարգություններ հրահրելու և իշխանությունը յուրացնելու մեջ:

Որոշ աղբյուրներ հաղորդում էին, որ իշխանությունները մարտի 1-ի իրադարձությունների կապակցությամբ՝ առանց կարգադրագրերի խուզարկել են մարդկանց տները:

ԵՄ մարդու իրավունքների հանձնակատարը նկատել է, որ կալանքի վայր բերվելուց ուշացումներ են եղել օրենքով պահանջվող կարգով ձերբակալությունները գրանցելու հետ կապված և որոշ դեպքերում ուշացվել է փաստաբանների տրամադրումը: ԵՄ-ն հայտնել է, որ ընտանիքի անդամներին կամ հարազատներին հաճախ չեն տեղեկացրել կալանավորվածի գտնվելու վայրի մասին. Հելսինկյան ասոցիացիան հայտնել է, որ կալանավորված Բորիկ Արաբաչյանի հարազատները գրեթե մեկ շաբաթ չեն իմացել, թե որտեղ է նա գտնվում: ԵՄ մարդու իրավունքների հանձնակատարը նաև նշել է, որ տեղեկություններ է ձեռք բերել, որ բերման ենթարկված անձանցից ոմանք անմիջապես չեն տեղեկացվել, թե ինչ մեղադրանք է իրենց առաջադրվում:

Ըստ որոշ փաստաբանների՝ իշխանությունները կալանավորման առաջին օրերին ճնշում են գործադրել որոշ ակտիվիստների վրա, որպեսզի վերջիններս հրաժարվեն փաստաբանի ծառայություններից կամ ճնշում են գործադրել, որպեսզի նրանք ընդունեն պետության կողմից տրամադրվող իրավական ներկայացուցչի ծառայությունները: Նրանք նաև նշել են, որ մեկուսարաններում եղել են անմարդկային պայմաններ, տասը հոգի պահվել է երեք հոգու համար նախատեսված խցերում և չի ապահովվել համարժեք սնունդ:

Խնդրահարույց է մնացել երկար նախնական կամ որպես խափանման միջոց կիրառվող կալանքի հարցը: Գործնականում իշխանությունները հարգել են օրենքի այն

դրույթը, որ նախքան դատավարության սկսելը մեղադրյալը չի կարող պահվել կալանքի տակ 12 ամսից ավել: Մակայն օրենքը չի սահմանափակում այն ժամկետը, թե մեղադրյալն ինչքան կարող է մնալ կալանքի տակ գործը դատարան ուղարկելուց հետո, և եղել են դեպքեր, երբ ոմանք երեք տարի և ավել պահվել են կալանքի տակ՝ մինչև կայացվել է դատավճիռ: Թեպետ օրենքը պահանջում է լավ պատճառաբանված որոշում, որով հիմնավորվում է կալանքի տակ պահելու ժամկետի երկարաձգումը, դատավորները հաճախ երկարաձգել են կալանքը առերևույթ անհասկանալի հիմքերով: Կառավարության տվյալներով տարվա ընթացքում քրեակատարողական հիմնարկներում գտնվող շուրջ 3969 անձանցից միջին թվով մոտ 714-ը եղել են նախնական կալանքի տակ գտնվողներ:

Հուլիսի 11-ին մարդու իրավունքների պաշտպանը հրապարակեց իր դիտարկումները մարդկանց կալանքի տակ վերցնելու ու նախնական կալանքը երկարաձգելու կառավարության գործողությունների վերաբերյալ՝ կապված մարտի 1-ի իրադարձությունների առնչությամբ ձերբակալված անձանց հետ: Պաշտպանը գտնում էր, որ իշխանությունները ենթադրյալ հանցանքների մասին բավարար փաստարկներ չեն ներկայացրել դատարանին, որ դատավորները չեն հիմնավորել իրենց եզրակացությունները այն մասին, որ կալանավորվածը կարող է փախուստի դիմել, ինչպես պահանջում է օրենքը, և որ դատավորները կալանքից բացի այլ տարբերակներ չեն դիտարկել, օրինակ՝ ազատ արձակում պարտավորության դիմաց:

### **ե) Արդար հրապարակային դատավարության իրավունքի մերժում**

Օրենքը սահմանում է անկախ դատական համակարգ. թեպետ 2007թ. փետրվարի դատական օրենսգրքով ի մի բերված կառուցվածքային փոփոխությունները հանգեցրել են դատական անկախության որոշակի մեծացման, դատարանները շարունակում են կանոնավոր ենթարկվել գործադիր օղակի քաղաքական ճնշումներին, իսկ դատական կոռուպցիան եղել է լուրջ խնդիր: Սեպտեմբերի 13-ին կառավարության կողմից Վճռաբեկ դատարանի հակասական նախագահը փոխարինվեց առավել հարգված մի գործչով:

Հունվարի 1-ի դրությամբ, երբ նոր դատական օրենսգիրքը գործողության մեջ մտավ, համակարգը կազմված էր ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններից, առաջին ատյանի մասնագիտացված դատարաններից (քաղաքացիական և քրեական), վարչական դատարաններից, քաղաքացիական և քրեական վերաքննիչ դատարաններից, վճռաբեկ դատարանից և սահմանադրական դատարանից: Գործն ըստ էության քննության առնելու համար վերաքննիչ դատարանը համարվում է ամենաբարձր ատյանը: Վճռաբեկ դատարան ունի վերաքննման հայեցողական իրավասություն՝ որպես գերագույն դատարան: Նոր դատական օրենսգրքով Վճռաբեկ դատարանին վերապահվում են նոր դերակատարումներ, այդ թվում՝ օրենքի միօրինակ կիրառման ապահովում, օրենքի ճիշտ մեկնաբանում և օժանդակություն արդարադատությանը: Սահմանադրական դատարանը որոշում է օրենսդրության սահմանադրականությունը, կարծիք է հայտնում ստորագրված միջազգային համաձայնագրերի սահմանադրականության մասին նախքան Ազգային ժողովում դրանց վավերացումը, լուծում է ընտրությունների հետ կապված վեճերը:

2006թ.-ից քաղաքացիներին օրենսդրությամբ իրավունք է ընձեռված բողոքներ ներկայացնել Սահմանադրական դատարան: Տարվա ընթացքում սահմանադրական դատարան են դիմել 238 քաղաքացիներ, որոնց բողոքներից 38-ը ընդունվել են դատարանի վարույթ:

Արդարադատության խորհուրդը առաջադրում է դատավորների թեկնածուներ, որոնց այնուհետև նշանակում է Նախագահը, որն էլ շարունակում էր խիստ ազդեցիկ դերակատարում ունենալ դատական համակարգի անձնակազմի նկատմամբ: Արդարադատության խորհուրդը նաև առաջադրում է բոլոր երեք մակարդակների դատարանների ու առանձին պալատների նախագահների թեկնածություններ և կիրառում է կարգապահական տույժեր խախտումներ թույլ տված դատավորների նկատմամբ: Արդարադատության խորհրդի կազմում երկուական գիտնական նշանակվում են Նախագահի ու Ազգային ժողովի կողմից, իսկ մնացած ինը անդամներն ընտրվում են ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից՝ գաղտնի քվեարկությամբ:

2007թ. հուլիսին Սահմանադրական դատարանը որոշում կայացրեց, որ քրեական գործերը լրացուցիչ քննության նպատակով նախադատավարական մարմինների կողմից ետ ուղարկելը հակասահմանադրական է և ուժը կորցրած ճանաչեց Քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները: Արդյունքում, դատավարությունը պետք է ավարտվի կամ արդարացմամբ, կամ մեղադրական վճռով՝ վերջ տալով «գործի լրացուցիչ քննության» պատրվակով մեղադրյալներին անորոշ ժամկետով անազատության մեջ պահելու գործելաոճին, այն դեպքերում երբ ներկայացված գործերը թույլ են: Չնայած այս որոշմանը 2007թ. նոյեմբերին Ազգային ժողովն ընդունեց օրեսդրություն, որը թույլ էտալիս գործը վարող դատավորին կասեցնել դատաքննությունը և դիմել դատախազությանը՝ մեղադրական եզրակացությունը վերահաստատելու և հանցանքը ծանրացնող մեղադրանքներ ներկայացնելու համար: Այս օրենսդրական իրավասությունը արդյունավետ կերպով խարխլում է անմեղության կանխավարկածը և այսպիսի դատավարություններում մեղադրող կողմը հայտնվում է նպաստավոր դիրքում:

### ***Դատավարություն***

Օրենքով հիմնականում պահանջվում է, որ դատական լսումները լինեն դռնբաց, սակայն կան բացառություններ, ներառյալ, երբ լսումների փակ լինելը բխում է «հանրության բարքերի», պետական անվտանգության կամ «մասնակիցների անձնական կյանքի պաշտպանության» շահերից: Դատավարությունների ժամանակ չկան երդվյալ ատենակալներ: Առաջին ատյանի դատարանում դատավճիռ կայացնողը մեկ դատավոր է (բացի այն դեպքերից, երբ հանցանքի համար կարող է սահմանվել ցմահ բանտարկություն), իսկ ավելի բարձր ատյանի դատարաններում՝ դատավորների խորհուրդն է: Ամբաստանյալներն ընդհանրապես իրավունք ունեն և սովորաբար պահանջվում է, որ ներկա գտնվեն իրենց դատավարություններին: Ամբաստանյալներն ունեն իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք, իսկ կառավարությունը պարտավոր է ամբաստանյալներին փաստաբան առաջարկել, եթե նրանք դա պահանջում են: Սակայն այս պարտավորությունը մարզերում՝ Երևանից դուրս, որտեղ չկան բավարար թվով փաստաբաններ, միշտ չէ որ հարգվել է: Ամբաստանյալները նաև հաճախ հրաժարվում են անվճար իրավական օգնությունից՝ հաշվի առնելով հանրային պաշտպանների ոչ որակյալ աշխատանքն ու առաջնորդվելով այն համոզմամբ, որ հանրային պաշտպանները գաղտնի համաձայնության են գալիս դատախազների հետ:

Օրենքի համաձայն ամբաստանյալները կարող են պահանջել առերեսում վկաների հետ, ներկայացնել ապացույցներ. իրենք ու իրենց փաստաբանները կարող են ծանոթանալ գործի նյութերին նախքան դատավարությունը: Այնուհանդերձ գործնականում

ամբաստանյալներն ու նրանց փաստաբանները կառավարության վկաներին, մասնավորապես՝ ոստիկաններին առարկություններ ներկայացնելու շատ սահմանափակ հնարավորություն են ունեցել: Օրենքի համաձայն ոստիկաններին արգելվում է ցուցմունք տալ դատարանում, եթե նրանք չեն հանդիսանում գործով վկա կամ տուժող: Այսպիսով, հանցանքի վայրում հայտնաբերված իրեղեն ապացույցների մասին կամ ամբաստանյալի խոստովանության վերաբերյալ ոստիկանների հաշվետվություններն ընդունվել են որպես ապացույց՝ առանց դատարանում դրանց վերաբերյալ ոստիկանական ցուցմունքների: Պաշտպանությունը ներկայացնող փաստաբաններն այս պաշտոնական հաշվետվությունները վիճարկելու իրավասություն համարյա չունեն ու դրանք հիմնականում դատարանում ընդունվում են որպես անթերի:

Մեղադրյալները, մեղադրական և տուժող կողմերն իրավունք ունեն բողոքարկելու դատավճիռները: Դատավորները սովորաբար չեն մերժում գործին նախապատրաստվելու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու ամբաստանյալների դիմումները: Օրենքով սահմանվում է անմեղության կանխավարկածը, սակայն գործնականում այս իրավունքը հաճախ խախտվել է:

2007թ. դատական վիճակագրությունը ցույց է տալիս, որ դատարան ներկայացված գործերից արդարացման դատավճռով ավարտվում է այդ գործերի 1 տոկոսից էլ պակասը: Այս վիճակագրությունը սակայն չի արտացոլում այն բազմաթիվ գործերը, որոնք կարճվել են դատախազության կողմից, որոնք գործնականում մոտ են արդարացմանը, կամ էլ այն գործերը, որոնք կարճվել են ամբաստանյալի առողջական վիճակից ելնելով:

Եղել են տարածված հաղորդումներ առ այն, որ դատախազներն ու ոստիկանները օգտագործել են խոստովանություններ, որոնք ձեռք են բերվել այնպիսի մեթոդներով, որոնք որոշ հասարակական կազմակերպություններ բնորոշում են որպես խոշտանգումներ և անմարդկային վերաբերմունք: Դատապաշտպանները կարող են խոշտանգումների մասին ապացույցներ ներկայացնել, որպեսզի օրենքի խախտումներով ձեռք բերված խոստովանությունները չօգտագործվեն, սակայն ամբաստանյալները, նրանց փաստաբաններն ու հասարակական կազմակերպությունները հաճախ հայտնել են, որ դատավորները և դատախազները մերժել են ընդունել այդպիսի ապացույցներ դատական լսումներում, նույնիսկ երբ մեղավորները հայտնի են եղել:

Մարտի 1-ին իշխանությունները մեկ քրեական գործ հարուցեցին այն անձանց դեմ, ովքեր մեղադրվում էին Ազատության հրապարակում բախումների ժամանակ իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու, սահմանադրության խախտմամբ պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված գործողություններ կատարելու, մարտի 1-ից 2-ը զանգվածային անկարգություններ և իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություններով, ծեծով, հրկիզումներով, ավերածություններով զուգորդված զինված դիմադրություն կազմակերպելու կամ մասնակցությունը ուղղորդելու և զենքերի, պայթուցիկ նյութերի ու մեխանիզմների օգտագործմամբ գույքին վնաս պատճառելու մեջ:

Ըստ մարտի 1-ի գործերում ներգրավված փաստաբանների՝ իրավապահ մարմինները չեն կարողացել նշել այն կոնկրետ գործողությունները, որոնք ենթադրաբար հանգեցրել են իրենց պաշտպանյալների դեմ մեղադրանքի առաջադրման կամ նրանք կամայականորեն են մեկնաբանել իրենց պաշտպանյալների որոշակի գործողություններ՝ դրանք մեղադրանքներին համապատասխանեցնելու համար:

Հունվարի 27-ին Արագածոտնի մարզի Թալին քաղաքում տեղի ունեցած ընդդիմության հանրահավաքից հետո իշխանությունները քրեական վարույթ սկսեցին ընդդիմության երեք կողմնակիցների՝ Ժորա Սափեյանի, Մկրտիչ Սափեյանի և Հայկ Գևորգյանի դեմ, ովքեր հանրահավաքի ժամանակ ենթադրաբար հարձակվել էին Սարգիս Կարապետյանի վրա, երբ Կարապետյանը սկսել էր բղավել ընդդեմ ընդդիմության թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի: Կարույթը սկզբում իրականացվում էր սովորական ծեծի մեղադրանքներով՝ հանցագործություն, որը չի պատժվում ազատազրկմամբ: Ըստ երեք ամբաստանյալների փաստաբան Հովիկ Արսենյանի՝ Կարապետյանը սկզբում հարձակումը ոստիկանությանը նկարագրել էր որպես հասարակ ծեծկռտուք: Նախագահ Քոչարյանի հրապարակային հայտարարությունից հետո, որ բոլոր «խուլիգանները» պետք է պատժվեն, Կարապետյանը ոստիկանության երկրորդ հարցաքննության ժամանակ ասաց, որ մեղադրյալները իրեն հայտնել էին, ինչի արդյունքում հանցանքը ծեծկռտուքից վերադարձվել էր որպես խուլիգանություն, և ոստիկանները ձերբակալեցին երեք անձանց: Դատավարության ժամանակ ինչպես դատավորը, այնպես էլ քննիչները մերժեցին այլ ականատեսների հարցաքննելու ամբաստանյանների փաստաբանի խնդրանքը: Ապրիլի 15-ին դատարանը խմբակային խուլիգանության համար այդ երեքին դատապարտեց 1.5-2.5 տարվա ազատազրկման:

Փետրվարի 25-ին «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության նախագահ Պետրոս Սակեյանը, Լեոնային Ղարաբաղի պատերազմի մասնակիցների հայտնի «Երկրապահների» միության Շիրակի մարզային մասնաճյուղի ղեկավար Աշոտ Զաքարյանը և ընդդիմադիր «Հանրապետություն» կուսակցության անդամ Շոթա Սաղաթեյանը ձերբակալվեցին՝ փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների գործընթացին խոչընդոտելու մեղադրանքով, երբ նրանք գրանցվել էին որպես ընդդիմության թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձինք: Դատական լուսմների ժամանակ գործով տասը վկաներից առնվազն վեցը հրաժարվեցին նախաքննության ժամանակ իրենց տված ցուցմունքից, որը նրանց հավաստմամբ կորզվել էր ճնշման ներքո: Երկու այլ վկաներ ընդհանրապես չներկայացան լուսմներին: Չնայած սրան՝ հունիսի 13-ին Զաքարյանն ու Սակեյանը դատապարտվեցին համապատասխանաբար 2.5 և 3 տարվա ազատազրկման: Սաղաթեյանը դատապարտվեց 2,5 տարվա պայմանական ազատազրկման:

Փետրվարի 19-ին ընդդիմադիր «Հանրապետություն» կուսակցության անդամ Հովհաննես Հարությունյանը ձերբակալվել էր անօրինական զենք կրելու մեղադրանքով: Սակայն զենքն օրինական կերպով գրանցված էր, և նա դրանք կրելու թույլտվություն ուներ: Անյուևետև նրան մարտի 28-ին դատապարտեցին մեկ ու կես տարվա ազատազրկման՝ 41 փամփուշտ ունենալու համար, որոնք ենթադրաբար նախատեսված չէին այն զենքի համար, որ նրան պատկանում էր օրենքով: «Հանրապետություն» կուսակցության մեկ այլ անդամ՝ Հուսիկ Բաղդասարյանը ձերբակալվեց փետրվարի 26-ին և մարտի 31-ին դատապարտվեց երեք տարվա ազատազրկման՝ անօրինական կերպով 16 փամփուշտ ունենալու համար:

Ոստիկանության աշխատակիցների վրա հարձակում գործելու համար դատախազի նախկին տեղակալ Գագիկ Զհանգիրյանի և նրա եղբոր դատավարության ընթացքում, որտեղ շատ դիտորդներ քաղաքական շարժառիթներ էին տեսնում կապված Զհանգիրյանի կողմից ընդդիմության թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանին ուղղակիորեն սատարելու հետ, ոստիկանության տված ցուցմունքներում նկատվեցին որոշ բացթողումներ: Ի պատասխան պաշտպանական կողմի այն հարցին, թե ով է հրահանգ տվել կանգնեցնել իր պաշտպանյալի

մեքենան՝ ոստիկանները հայտնել են, որ իրենք չգիտեն, թե ով է տվել նախնական հրահանգը կամ իրենց վերադասների անունները և հրաժարվել են հայտնել իրենց վերադասի կոչումը:

Ըստ Հելսինկյան ասոցիացիայի քրեական օրենսգրքի նույն հոդվածի հատկանիշներով ներկայացված մեղադրանքների և միևնույն մեղմացուցիչ հանգամանքների պարագայում ամբաստանյալների հանդեպ կայացվել են խիստ տարբեր դատավճիռներ: Ըստ տեղի իրավական և մարդու իրավունքների դիտորդների՝ դատարանները պաշտպանող և մեղադրող կողմերի համար հավասար իրավունքներ չեն ապահովել: Որպես փաստ վկայակոչվել են դատարանի կողմից պաշտպանող կողմի միջնորդությունների շարունակական մերժումները, քրեական դատարանում դատավարության գրառումների անօրինական խմբագրումը, դատավարությունները լուսաբանող լրագրողների աշխատանքներին խոչընդոտելը և մեղադրող կողմի հանդեպ ընդհանուր բարեհաճ վերաբերմունքը: Դիվանագիտական դիտորդներն ականատես են եղել մի շարք դեպքերի, երբ դատավճիռը կայացվել է ոստիկանության խիստ կասկածելի ապացույցների և ցուցմունքների հիման վրա, որոնք բաց դատարանում համոզիչ կերպով հերքվել են վստահելի վկաների կողմից:

Ըստ տեղական դիտորդների՝ մարտի 1-ի առնչությամբ մեղադրվողների մեծ մասը, ում մեղադրանք էր ներկայացվել իրավապահ մարմիններին դիմադրելու և բռնարարքներ կատարելու համար, մեղադրող կողմի ճնշման տակ իրենց մեղավոր են ճանաչել: Իրենց մեղավոր ճանաչելու հայտարարություններից հետո՝ դատարանները սովորաբար անցկացրել են միանման մեղադրական եզրակացություններով «արագացված ընթացակարգով լուսմներ»՝, որոնց ընթացքում փաստերի ուսումնասիրություն սովորաբար չի կատարվել և, որոնք հիմնականում ավարտվել են պայմանական պատժով կամ տուգանքով: Այն մեղադրյալների համար, ովքեր իրենց մեղավոր չեն ճանաչել կամ չեն համաձայնել արագացված լուսմների (դատավարական դրույթ, որը որոշ չափով հիշեցնում է մեղքի ընդունման գործարք), փաստացի ազատազրկման դատապարտվելու հավանականությունն ավելի մեծ էր:

Հունիսին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽՄԿ) երկրի վերաբերյալ բանաձև ընդունեց՝ քննադատելով մեկ ոստիկանի տված ցուցմունքի հիման վրա և առանց ապացույցներով հիմնավորելու կայացված վճիռները: Այդ դատավարությունների մեծ մասում միակ վկաները կամ ենթադրյալ զոհերը ոստիկաններ էին, որոնց ցուցմունքները հաճախ չէին համապատասխանում իրար: Որոշ դեպքերում միևնույն ոստիկանները ներգրավված են եղել որպես վկաներ մի քանի գործերում: Դիտորդները նաև առանձնացրել են ոստիկանության աշխատակից չհանդիսացող վկաների ահաբեկման և նրանց վրա ճնշում գործադրելու դեպքեր:

Խոսելով մարտի 1-ի դեպքերի դատավարությունների անցկացման մասին՝ Փաստաբանների պալատի նախագահ Ռուբեն Սահակյանը սեպտեմբերի 25-ին նշել է, որ այդ գործերում ներգրավված շատ դատախազներ, քննիչները և դատավորներ գործել են քրեական օրենսգրքի հնարավոր խախտումներով:

### **Քաղաքական բանտարկյալներ և կալանավորվածներ**

Մարտի 1-2 –ը տեղի ունեցած քաղաքական բռնությունների ժամանակաշրջանում ձեռքակալված հարյուրավոր մարդկանցից մոտ 150-ին պահել են բավականին երկար ժամանակ, իսկ ավելի քան 100-ին հանցագործության մեղադրանք է ներկայացվել: Այդ

ձերբակալությունների մեծ մասը կամ բոլորը առերևույթ կրել են տարբեր աստիճանի քաղաքական ազդեցություն: Ոմանք մեղադրվել են լայն սահմանում ունեցող քրեական մեղադրանքների հատկանիշներով՝ «պետական իշխանության յուրացում» կամ «զանգվածային անկարգություններ»: Մյուսները մեղադրվել են ընտրովի կերպով կիրառված զենք պահելու մեղադրանքով կամ ձերբակալման ժամանակ ցուցաբերած դիմադրության համար: Իշխանությունները ժխտում էին երկրում քաղաքատարկյալների առկայությունը և հայտարարում, որ քաղաքական ընդդիմությունը պլանավորել էր հետընտրական բռնարարաքներ՝ փորձելով հակասահմանադրականորեն զավթել իշխանությունը:

Պետական մարմինների կողմից կոնկրետ տեղեկություն չի տրվել, թե տարվերջի դրությամբ մարտի 1-2-ի իրադարձությունների կապակցությամբ կոնկրետ քանի մարդ էր անազատության մեջ մնում (արդեն դատապարտված, դատավարությանը սպասող, դատավարության ընթացքի մեջ): Կալանքի տակ գտնվողների մեծամասնությունը քաղաքական ընդդիմության սատարողներ կամ անդամներ էին:

Ըստ քաղաքական ընդդիմության տարեվերջի դրությամբ անազատության մեջ էին գտնվում մոտ 59 մարդ, որոնց ընդդիմությունը համարում էր «քաղաքական բանտարկյալներ», այդ թվում՝ 36 հոգի մարտի 1-ի իրադարձությունների կապակցությամբ, իսկ մնացածը՝ նախագահական ընտրությունների կապակցությամբ դատապարտվածներ էին կամ էլ կրում էին նախորդ տարիների ընթացքում սահմանված պատիժներ:

Ապրիլին ԵՄԽՎ-ն բանաձև ընդունեց, որով քննադատում էր ընդդիմությանը սատարողների ձերբակալումն ու շարունակվող կալանքը թվացյալ արհեստական և քաղաքական շարժառիթներով պայմանավորված մեղադրանքների հիման վրա: ԵՄԽՎ բանաձևում ասվում էր, որ «համարժեք դատական հսկողության բացակայության պայմաններում, անձանց ձերբակալությունը և շարունակվող կալանավորումը առերևույթ արհեստական մեղադրանքներով, նրանց՝ նախագահական ընտրությունների արդարացիությունը վիճարկելուց հետո կամ նախագահական ընտրություններից հետո ցույցերում նրանց մասնակցությունից հետո, մատնանշում է, որ այդ գործողությունները պայմանավորված են քաղաքական շարժառիթներով»: Հունիսին ընդունված երկրորդ բանաձևով ԵՄԽՎ-ն քննադատում էր այն դատավճիռը, որը «հիմնված է բացառապես մեկ ոստիկանական ցուցմունքի վրա՝ առանց լրացուցիչ հիմնավորող ապացույցների» և կոչ էր անում ազատ արձակել բոլոր այն անձանց, ովքեր անձնապես չեն կատարել որևէ բռնի գործողություն կամ ծանր հանցանքներ:

Ըստ պաշտոնական տեղեկությունների՝ դեկտեմբերի 17-ի դրությամբ մարտի 1-2-ի իրադարձությունների կապակցությամբ 111 հոգու դեմ հարուցված 90 գործ ուղարկվել էր դատարան: 87 գործով 101 հոգու դեմ կայացվել էր դատավճիռ, տասը հոգու դեմ հարուցված երեք գործ ընթացքի մեջ էր: Բոլոր 10 հոգին էլ, ում դեմ հարուցված գործերն ընթացքի մեջ էին, անազատության մեջ էին: Արդեն դատապարտված 101 հոգուց 38-ի դեմ կիրառվել էր պայմանական պատիժ, հինգը տուգանվել էին, 52-ը դատապարտվել էին ազատազրկման վեց ամսից մինչև ինը տարի ժամկետով, հինգը արդարացվել էին, իսկ մեկ գործ կասեցվել էր մեղադրյալի հետ համաձայնության գալու հիմքով: Տարեվերջի դրությամբ պահպանվում էին մեղադրանքները երեք հոգու (Համլետ Հովհաննիսյան, Սամվել Աբովյան և Գնել Թովմասյան) հանդեպ, ովքեր պարտավորվել էին չլքել հանրապետությունը և ևս հինգ հոգի (Նիկոլ Փաշինյան, Խաչատուր Սուքիասյան, Վիրաբ Մանուկյան, Համլետ Հովհաննիսյան (ոչ վերը նշվածը) և Սևակ Ստեփանյանը) գտնվում էին հետախուզման մեջ:



Մեպտեմբերի 5-ին՝ ձերբակալություններից մոտ վեց ամիս անց, ՀՔԾ-ն դատարան ուղարկեց ընդդիմության յոթ հայտնի անդամների միասնական քրեական գործը, որոնք իշխանությունների կողմից մեղադրվում էին մարտի 1-2-ի անկարգությունները ծրագրելու մեջ: Գործում ներգրավված էին նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը, ով ղեկավարում էր Տեր-Պետրոսյանի ընտրարշավը, պատգամավոր Հակոբ Հակոբյանը, ընդդիմադիր ցուցարար Շանթ Հարությունյանը և ընդդիմության անդամներ Գրիգոր Ոսկերչյանն ու Սուրեն Սիրունյանը, որոնց նկատմամբ սպանություններով զուգորդված զանգվածային անկարգությունների և պետական իշխանությունը յուրացնելու մեղադրանք էր ներկայացվել: Բացի սպանություններով զուգորդված զանգվածային անկարգությունների և պետական իշխանությունը յուրացնելու մեղադրանքներից, մյուս երկու մեղադրյալների՝ ԱԺ պատգամավորներ Մյասնիկ Մալխասյանի և Մասուն Միքայելյանի նկատմամբ ներկայացված մեղադրանքները ներառում էին հանցակցություն իշխանության ներկայացուցիչների դեմ կատարվող դիմադրություն ցուցաբերելը՝ Մյասնիկ Մալխասյանի համար և անօրինական զենք ու զինամթերք պահելը՝ Միքայելյանի համար: Նմանատիպ մեղադրանքներով հետախուզվում էին ընդդիմության ևս հինգ ակտիվիստներ, այդ թվում՝ ընդդիմադիր առաջավոր թերթի խմբագիր Նիկոլ Փաշինյանը և հայտնի գործարար, ԱԺ պատգամավոր Խաչատուր Սուքիասյանը: Ամենահայտնի մեղադրյալներից կազմված «յոթի դատավարությունը» սկսվեց դեկտեմբերի 19-ին և տարեվերջին դեռևս ընթացքի մեջ էր: Փողերի անօրինական լվացման մեղադրանքները նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանի (յոթ ամբաստանյալներից մեկը) դեմ, որի համար 2007թ. նա չորս ամիս անցկացրեց անազատության մեջ, տարվա վերջի դրությամբ դեռևս ընթացքի մեջ էին:

Քաղաքական ընդդիմությունը նաև հայտարարում էր, որ տարվա ընթացքում, քաղաքական դրդապատճառներից ելնելով, ընդդիմության մի շարք կողմնակիցներ ձերբակալվել էին մարտի 1-2-ի բռնությունների հետ կապ չունեցող մեղադրանքներով: Ընդդիմությունը հայտարարում էր, որ այդ մարդիկ հետապնդվում էին անօրինական զենք պահելու, զանգվածային անկարգությունների մասնակցելու, խուլիգանական արարքների, պաշտոնական պարտավորությունները չարաշահելու և անցնելու և պետական գաղտնիքի բացահայտման մտացածին մեղադրանքներով: Քաղաքական ընդդիմության և մարդու իրավունքների ոլորտի ակտիվիստները նաև քաղաքատարկյալներ էին համարում ընդդիմության այն անդամներին, ովքեր ձերբակալվել էին ընտրությունների ժամանակահատվածում՝ ենթադրյալ ընտրախախտումների համար: Ընդդիմությունը հայտարարում էր, որ այդ մարդիկ կալանավորվել էին իշխանության կողմնակիցների կողմից կեղծիքները կանխելու փորձ կատարելու համար:

Փետրվարի 22-ին, մինչ նախագահական ընտրությունների արդյունքներն ու ելքը դեռևս վիճելի էին, Գազիկ Ջհանգիրյանը, որ այդ ժամանակ գլխավոր դատախազի տեղակալն էր, հրապարակավ հայտարարեց, որ սատարում է ընդդիմության թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանին: Փետրվարի 23-ին այդ ժամանակ նախագահ Քոչարյանը ազատեց Ջհանգիրյանին զբաղեցրած պաշտոնից, և նույն օրը ուշ երեկոյան կանգնեցրել էին նրա և նրա եղբոր մեքենան ու ձերբակալել նրանց: Որոշ դիտորդներ և ընդդիմության սատարողներ պնդում էին, որ ձերբակալությունը կատարվել է քաղաքական նկատառումներով՝ վրեժ լուծելով Ջհանգիրյանից Տեր-Պետրոսյանին սատարելու համար: Սկզբում Ջհանգիրյանին մեղադրում էին դավաճանության, անօրինական զենք կրելու և ոստիկանության աշխատակիցների վրա հարձակում գործելու համար: Ի վերջո առաջին երկու

մեղադրանքները հանվեցին: Մնացած մեղադրանքների մասով դատավարությունը տարեվերջի դրությամբ ընթացքի մեջ էր:

Մարտի 21-ին ոստիկանները ձերբակալեցին ընդդիմությանը սատարող, պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի ռեստորանի մատուցողուհի Անուշ Ղավալյանին՝ հարկերից խուսափելու մեղադրանքով: Ըստ Ղավալյանի, նրա հարազատների և փաստաբանի՝ իշխանություններն այդ մեղադրանքով փորձում էին Ղավալյանից ցուցմունք կորզել, որի օգնությամբ կկարողանային դատել ռեստորանի տնօրեն՝ Գևորգ Սաֆարյանին: Սաֆարյանը ձերբակալվել էր 2007թ. հոկտեմբերին, Խաչատուր Սուքիասյանի կողմից Տեր-Պետրոսյանի նախագահ առաջադրվելու թեկնածությունը հրապարակավ պաշտպանելուց անմիջապես հետո՝ Սուքիասյանների ընտանիքին պատկանող բիզնեսների լայնածավալ հարկային ստուգումների արդյունքում: Օգոստոսի 15-ին նույն հիմքերով ձերբակալվեց մեկ այլ մատուցողուհի՝ Կարինե Մնացականյանը: Նոյեմբերի 6-ին քրեական դատարանի հրամանով Սաֆարյանն ու Ղավալյանը ազատ արձակվեցին գրավի դիմաց՝ առողջության վատթարացման հիմքերով: Սաֆարյանի գրավը կազմում էր 3.5 մլն. դրամ (մոտ 11475 ԱՄՆ դոլար), իսկ Ղավալյանինը՝ 500000 դրամ (1640 ԱՄՆ դոլար): Մնացականյանը որպես հանցակից դատապարտվեց չորս ամսվա ազատազրկման և ազատ արձակվեց դեկտեմբերի 15-ին՝ պատիժն ամբողջությամբ կրելուց հետո:

Դեկտեմբերի 10-ին՝ ազատազրկման երկամյա ժամկետն ամբողջությամբ լրանալուց հետո բանտից ազատ արձակվեց Վարդան Մալխասյանը, իսկ նրանից 6 ամիս առաջ՝ հունիսի 9-ին ազատ էր արձակվել Ժիրայր Սեֆիլյանը: Նրանք երկուսն էլ կոշտ դիրքորոշում ունեցող փոքր «Հայ կամավորական դաշինք» ընդդիմադիր խմբի առաջնորդներն էին, ովքեր ձերբակալվել էին խումբը ձևավորելուց կարճ ժամանակ հետո՝ «սահմանադրական կարգը բռնի ուժով տապալելու հրապարակային կոչերի» ու անօրինական զենք պահելու մեղադրանքներով:

«Ժամանակ Երևան» ընդդիմադիր օրաթերթի խմբագիր Արման Բաբաջանյանը, որ ձերբակալվել էր 2006թ. հունիսին փաստաթղթերի կեղծման ու զինվորական ծառայությունից խուսափելու մեղադրանքով, շարունակում էր մնալ բանտում: Հուլիսի 18-ին իշխանությունները մերժեցին պայմանական ազատ արձակվելու նրա դիմումը:

### ***Քաղաքացիական դատավարություն ու դատական պաշտպանության միջոցներ***

Առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանները քննում են և փոքր քաղաքացիական հայցեր և ոչ ծանր քրեական գործեր: Քաղաքացիական մյուս գործերը (5 միլիոն դրամը գերազանցող (մոտ 16400 դոլար) հայցեր) և քրեական հանցանքները, որոնց համար նախատեսվող առավելագույն պատիժը գերազանցում է 5 տարվա ազատազրկումը համապատասխանաբար լավում են մասնագիտացված քաղաքացիական և քրեական դատարաններում: Քաղաքացիները կարող են դիմել դատարաններ վնասի փոխհատուցման, մարդու իրավունքների ռոտնահարման դադարեցման հայցերով, սակայն դատարանները լայնորեն ընկալվում են որպես կոռուստացված կառույց ու քաղաքացիական գործերի հնարավոր հայցվորները հաճախ հայց հարուցելուց առաջ քննության էին առնում այն հանգամանքը, թե ով ունի ավելի շատ ռեսուրսներ դատավորների վրա ներազդելու համար՝ իրենք, թե պատասխանողը: Քաղաքացիները կարող են նաև դիմումներ ու բողոքները ներկայացնել մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, ինչպես նաև դիմել

Մահմանադրական դատարան՝ վիճարկելու օրենսդրության հակասահմանադրականությունը:

Տարվա ընթացքում առաջընթաց չի եղել Երևանում հասարակական շահից ելնելով գույքի օտարման գործերի հետ կապված, չնայած 2006թ. Մահմանադրական դատարանը որոշում էր կայացրել, որ կառավարության 2002թ. որոշումը, որով քանդվել էին տները, հակասում էր Մահմանադրությանը: 2007թ. հունիսի 7-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) մի այդպիսի գործի լուծում նախաձեռնեց. Չղլյանն ընդդեմ Հայաստանի գործով իշխանությունները համաձայնեցին 150000 ԱՄՆ դոլար (մոտ 210000 ԱՄՆ դոլար) փոխհատուցում վճարել, եթե հայցվորը հրաժարվեր ՄԻԵԴ ներկայացրած հայցից:

**զ) Կամայական միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի անձեռնմխելիության, կամ նամակագրության գաղտնիության նկատմամբ**

Մահմանադրությամբ արգելվում են չարտոնված խուզարկությունները և ամրագրվում է քաղաքացիների անձնական կյանքի և հաղորդակցման գաղտնիությունը, սակայն գործնականում իշխանությունները խախտել են այս իրավունքները:

Ըստ օրենքի հեռախոսային խոսակցությունները լսելու կամ նամակագրությանը հետևելու թույլտվություն ստանալու համար իշխանությունները պետք է հիմնավոր փաստարկներ ներկայացնեն դատավորին. Տարվա ընթացքում դատավորները կամայականորեն այդպիսի թույլտվություն են տվել:

Ըստ քաղաքական ընդդիմությանը և տեղական մարդու իրավունքների դիտորդների ոստիկանության կողմից իրականացրել են լայնածավալ խուզարկություններ ընդդիմության կողմնակիցների, վստահված անձանց և նախընտրական շտաբի անդամների բնակարաններում ինչպես մինչև փետրվարի 19-ի նախագահական ընտրությունները, այնպես էլ դրանից հետո: Ըստ հաղորդումների խուզարկություններն իրականացվել են ընթացակարգային խախտումներով, ահաբեկմամբ և սպառնալիքներով:

Հուլիսի 1-ին ընդդիմության նախագահական թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանը հրապարակեց մարտի 5-ի ՀՔԾ հանձնարարականը՝ ուղղված Վայոց Ձոր մարզի դատախազությանը: ՀՔԾ-ի ղեկավար Անդրանիկ Միրզոյանը հրապարակայնորեն հաստատեց փաստաթղթի իսկությունը և հայտարարեց, որ նման հանձնարարականներ ուղարկվել են Գեղարքունիքի և Արագածոտնի դատախազություններին, ոստիկանությանը և ԱԱԾ-ին: Այս հանձնարարականով Միրզոյանը կարգադրում է Վայոց Ձորի մարզային դատախազին հայտնաբերել և հարցաքննել Տեր-Պետրոսյանի հանրահավաքների մասնակիցներին և նախընտրական շտաբի պետերին: ՀՔԾ-ին հետաքրքրում էր քաղաքական հանրահավաքների ժամանակ կայացած ցանկացած խոսակցություն, որը վերաբերում էր օտարերկրյա աջակցությանը, օտարերկրյա գործակալությունների և պետությունների համար անկայունությունը նպաստավոր լինելու ակտիվիստների պատկերացումներին և ցանկացած խոսակցություն երկրում Ռուսաստանի ազդեցությունը բացառելու վերաբերյալ: Հանձնարարականով նաև կարգադրվում է ոստիկանությանը հարցաքննել վերոհիշյալ անձանց փետրվարի 20-ից մինչև մարտի 2-ը նրանց գտնվելու վայրի մասին, տեղեկություններ հավաքել նրանց անձի մասին, ստուգել նրանց նախկին դատվածություններ ունենալու հանգամանքը, հավաքել տեղեկություններ հարևաններից և տեղական

իշխանություններից նրանց և նրանց ընտանիքի անդամների վերաբերյալ:

Հանձնարարականով նաև կարգադրվում էր պարզել Տեր-Պետրոսյանի նախընտրական տեղական շտաբի պետերի հեռախոսահամարները և ստանալ թույլտվություն դատարանից՝ այդ համարների գաղտնալուսումներ իրականացնելու համար, ձեռք բերել տեղեկություններ հանրահավաքների մասնակիցների և նախընտրական շտաբի պետերի գույքի մասին, ստանալ նրանց անձնագրերի պատճենները, պարզել երթուղային տաքսիների և տաքսիների վարորդների ինքնությունը, որոնք Վայոց Ձորից Երևան են փոխադրել մարդկանց՝ ընդդիմության հանրահավաքներին՝ մասնակցելու համար, և պարզել ովքեր են ուղեկցել նրանց ուղևորներին, ովքեր են վճարել նրանց փոխադրավճարները և ինչ են խոսել հանրահավաքների վերաբերյալ:

Մարդու իրավունքների տեղական կազմակերպությունները մարտի 5-ի հանձնարարականը անվանել են հակասահմանադրական և որակել որպես քաղաքական դրդապատճառներով հետապնդումներ կառավարության ընդդիմադիրների նկատմամբ: Հուլիսի 11-ին, մարդու իրավունքների պաշտպանը անվանեց այն անօրինական, հայտարարելով, որ ՀՔԾ-ը իրավունք չունի դատախազին տալ քննչական գործողությունների հանձնարարական և դրանից բխող ոստիկանության աշխատանքներն անօրինական են:

Համաձայն «Հանրապետություն» ընդդիմադիր կուսակցության վարչության անդամ Արտակ Ձեյնալյանի հուլիսի 24-ին որպես ոստիկանության աշխատակիցներ ներկայացող անձինք զանգահարել են Տեր-Պետրոսյանի աջակիցների, տարբեր ընդդիմադիր կուսակցությունների առաջնորդների և լրատվամիջոցների ներկայացուցիչների բջջային հեռախոսներին՝ հավաստիանալու, որ այդ համարները պատկանում են նրանց: Ձեյնալյանը բողոք է ներկայացրել ոստիկանությանը վերոհիշյալ հեռախոսագրերի ետևում կանգնած անձանց հայտնաբերելու և պատժելու համար: Ոստիկանությունը չի արձագանքել բողոքին: Ձեյնալյանը հաջորդաբար բողոք է ներկայացրել դատարան՝ ոստիկանությանը տրված բողոքին ընթացք տալու վերաբերյալ հրաման տալու համար, սակայն նրա դիմումը մերժվել է:

Սեպտեմբերի 2-ին Լևոն Տեր-Պետրոսյանը լրագրողներին տրամադրեց մի դատավճռի կրկնօրինակ, որը թույլ էր տալիս ԱԱԾ-ին գաղտնալսել Տեր-Պետրոսյանի քարոզարշավի կազմակերպիչ Ալեքսանդր Արզումանյանի հեռախոսագրույցները և երկու ամիս շարունակ սահմանել շուրջօրյա հսկողություն նրա նկատմամբ: Դիտորդները քննադատեցին դատավճիռը, որպես քաղաքական շարժառիթներ ունեցող վճիռ և միջամտություն Արզումանյանի անձնական կյանքին, ինչպես նաև նախագահական թեկնածուի ընտրական գործունեության անընդունելի միջամտություն: Սեպտեմբերի 12-ից սկսած, Դաշնակցության կողմից օժանդակվող «Երկիր Մեղիան» հեռարձակեց, իսկ իշխանամետ «Հայոց Աշխարհ» և «Գոլոս Արմենիի» թերթերը սկսեցին տպագրել հատվածներ Արզումանյանի և այլ անձանց միջև կայացած գաղտնալսված հեռախոսագրույցներից: Քանի որ գործի նյութերը առերևույթ հասանելի էին միայն Արզումանյանի փաստաբաններին, ՀՔԾ-ին և Գլխավոր դատախազությանը, լայնորեն շրջանառվում էր այն վարկածը, որ հեռախոսագրույցների սղագրությունը թերթերին էին փոխանցել իշխանության ներսում գտնվող աղբյուրները: Գաղտնալուսումների տեքստում ներկայացվում էին Արզումանյանի գրույցները իր քաղաքական համախոհների հետ միջոցառումների, քաղաքական մարտավարության, այլ

քաղաքական գործիչների մասին, ինչպես նաև իր անձնական կյանքին վերաբերող և վարկաբեկման հավանականություն ունեցող խոսակցություններ:

## **ՄԱՍ 2. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ**

### **ա) Խոսքի և մամուլի ազատություն**

Մահմանադրությամբ ամրագրվում է խոսքի և մամուլի ազատությունը, սակայն գործնականում կառավարությունը չի հարգել այս իրավունքները: Ողջ տարվա ընթացքում գրանցվել են բռնության, ահաբեկման ու ինքնագրաքննության դեպքեր մամուլում: Լրատվամիջոցներում նկատվել է նաև կառավարամետ ու հակաընդդիմադիր կողմնակալություն փետրվարի 19-ի նախագահական ընտրություններին նախորդող ժամանակահատվածում: Յուրաքանչյուրի ու ոստիկանության միջև մարտի 1-ի բռնություններով ուղեկցված բախումներից հետո կառավարությունը կիրառեց գրաքննություն և կասեցրեց խոսքի և մամուլի ազատությունը արտակարգ դրության ժամանակահատվածում, որը տևեց մինչև մարտի 21-ը: Լրատվամիջոցները, մասնավորապես՝ հեռուստալրատվամիջոցները շարունակում էին չներկայացնել քաղաքական բազմազանությունը: Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի նոր փոփոխություններով հեռարձակման նոր լիցենզիաների տրամադրումը դադարեցվեց երկու տարով, ինչն էլ ավելի կրճատեց լրատվամիջոցներում առավել լայն բազմակարծություն ապահովելու հեռանկարները:

Լրագրերի գերակշիռ մասը մասնավոր են, բացառությամբ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի ու դրա ռուսալեզու «Ռեսպուբլիկա Արմենիի» տարբերակի, որոնք հրատարակվում են պետական ֆինանսավորմամբ: Մարտի ընթացքում արտակարգ դրության օրերից բացի մնացած ժամանակահատվածում տպագիր լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ ապահովել են տարբեր տեսակետների ներկայացումն առանց սահմանափակումների, սակայն շարունակել են լինել տնտեսական և քաղաքական շահեր ներկայացնող խմբերի ու անհատների ազդեցության ներքո: Իշխանությունները շարունակել են անկախ և ընդդիմադիր լրատվամիջոցներում չպլանավորված հարկային ստուգումների անցկացումը, որը տեղական դիտորդները որակում են որպես մամուլը ճնշելու փորձ:

Լրագրերի շրջանառությունը մեծ չէ: Նույնը կարելի է ասել նաև 14 ռադիոկայանների լսարանի մասին: Քաղաքացիների համար լուրեր և տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուր են հանդիսանում երկրի 42 հեռուստակայանները: Բոլոր հեռուստակայանները, բացառությամբ մեկի, մասնավոր են, իսկ կեսը մարզերում տեղակայված փոքր տեղական հեռարձակողներն են: Միայն պետական ֆինանսավորմամբ գործող հանրային հեռուստատեսությունն (Հ1) է, որի հաղորդումները սփռվում են երկրի ողջ տարածքով, չնայած կան ևս երեք հեռուստաընկերություններ, որոնց սփռման տարածքը ներառում է երկրի գերակշիռ մասը, իսկ որոշ հեռուստաընկերություններ հնարավորություն ունեն հեռարձակել Երևանից դուրս: Հեռուստակայանների մեծ մասի սեփականատերերն են կառավարամետ քաղաքական գործիչները կամ լավ կապեր ունեցող գործարարները, մի գործոն, որ հուշում է այս ընկերություններում աշխատող լրագրողներին դիմել ինքնագրաքննության: Խոշոր հեռարձակող լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ ներկայացրել են կառավարամետ դիրքորոշումներ և խուսափել են խմբագրական

մեկնաբանություններ ու կառավարությանը քննադատող նյութեր ներկայացնելուց: Մասնավորապես այսպես էր նախագահական ընտրությունների քարոզարշավի ընթացքում և ընտրություններին հաջորդած բողոքի ցույցերի ու արտակարգ դրության ժամանակահատվածում:

Բռնության ու ահաբեկման կրկնվող գործողություններ են եղել Գյումրում տեղակայված ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի անձնակազմի ու գույքի նկատմամբ: «Ասպարեզ» ակումբն ստացել է սպառնալիքներով հեռախոսազանգեր, իսկ հունվարի 19-ին ակումբի շենքի հրկիզման փորձ է արվել՝ անհայտ անձանց կողմից: Ակումբի խորհրդի նախագահ Լևոն Բարսեղյանը մարտի 2-ին հանրահավաքի ժամանակ կալանավորվել է և ոստիկանական բաժնում պահվել ավելի քան 5 ժամ: Մարտի 21-ին հրկիզվել է «Ասպարեզ» ակումբի նախագահի մեքենան: Գրասենյակի հրկիզման փորձի ու մեքենայի հրկիզման գործով քննությունները փակվել են՝ կասկածյալների բացակայության հիմքով:

Փետրվարի 19-ի նախագահական ընտրություններից առաջ հեռարձակող լրատվամիջոցներում նկատվել է կողմնակալության դրսևորում՝ հոգուտ այդ ժամանակ վարչապետի պաշտոնը զբաղեցնող իշխանական թեկնածու Սերժ Սարգսյանի, ով ի վերջո հաղթեց ընտրություններում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և TEAM Research-ի կողմից կատարված ընտրական դիտարկումների արդյունքների համաձայն վարչապետը հատկացված էթերաժամերի առումով արտոնյալ վերաբերմունքի է արժանացել, իսկ բացի այդ, լուսաբանումները գրեթե բացառապես եղել են դրական կամ չեզոք: Ի տարբերություն, Սարգսյանի ընդդիմադիր մրցակից Լևոն Տեր-Պետրոսյանը ստացել է անհամեմատ ավելի քիչ էթերաժամանակ, իսկ լուսաբանումը եղել է բացասական կամ չեզոք: Հեռարձակումների ժամանակային ու բովանդակային նմանությունները դիտարկում իրականացրած երկու կազմակերպություններին էլ հիմք են տալիս ենթադրելու, որ որոշ լուսաբանումներ համակարգվել են իշխանությունների կողմից:

Հանրային հեռուստաընկերությունն ու Հանրային ռադիոն որևէ բովանդակային սահմանափակում թույլ չեն տվել նախագահության թեկնածուներին օրենքի համաձայն հատկացվող անվճար էթերաժամանակի հետ կապված: TEAM Research-ը նկատել է, որ ընթացիկ իրադարձությունների մասին կիրակնօրյա «360» հաղորդումը, որ հեռարձակվում է Հ1-ով «հետևողական բացասական վերաբերմունք» է ցուցաբերել Լևոն Տեր-Պետրոսյանի հանդեպ: Չնայած տպագիր լրատվամիջոցներում կարծիքների բազմազանությանը՝ «Կենտրոն» մասնավոր հեռուստաընկերության էթերով հունվարի 21-ից փետրվարի 17-ն ընկած ժամանակահատվածում Լևոն Տեր-Պետրոսյանի վերաբերյալ եղել է 71 բացասական հղում, իսկ դրական հոլովակներ ընդհանրապես չեն եղել: Հ1-ի էթերում ավելի շատ լուսաբանումներ են եղել Լևոն Տեր-Պետրոսյանի, քան Սերժ Սարգսյանի վերաբերյալ, սակայն ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտարկումների առաջինի վերաբերյալ լուսաբանումը եղել է բացասական և «խեղաթյուրված», մինչդեռ վերջինս ներկայացվել է «ակնհայտորեն դրական» լույսի ներքո: Նման օրինաչափություն է դիտվել նաև Հանրային ռադիոյի էթերում:

Ոչ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ), ոչ Հեռուստատեսության ու ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ) չեն կատարել թեկնածուների համար լրատվամիջոցների հավասար հասանելիության և օբյեկտիվ լուսաբանումների ապահովման իրենց օրենքով սահմանված պարտավորությունները: Մարտի 8-ին Սահմանադրական դատարանը որոշում կայացրեց, որ ԿԸՀ-ն թերացել է «նախընտրական քարոզչության արդյունավետ վերահսկման» հարցում, իսկ ՀՌԱՀ-ը « ձևական մոտեցում է » դրսևորել օրենքի

պահանջների կատարման հարցում: Արդյունքում լրատվամիջոցներում ոչ միայն կողմնակալություն է տեղ գտել, այլ նաև որոշ դեպքերում «արձանագրվել են իրավական և բարոյական նորմերի խախտումներ»: Այնուհանդերձ, Մահմանադրական դատարանը որոշեց, որ պատժամիջոցներ կամ շտկող քայլեր անհրաժեշտ չէին, այն հիմնավորմամբ, որ թենաձուները կարողացան իրենց դիրքորոշումները հասցնել ընտրողներին նախընտրական քարոզչության այլ միջոցներով:

Ընտրության օրը՝ փետրվարի 19-ին խոչընդոտվել է որոշ լրագրողների աշխատանքը: Եղել են հաղորդումներ լրագրողների և անձնակազմի վրա հարձակումներ գործելու, լրագրողական սարքավորումներին վնաս հասցնելու, ժապավենները առգրավելու ու ջնջելու վերաբերյալ, ընդ որում դա հաճախ արվել է ոստիկանների ներկայությամբ: Մի այսպիսի միջադեպի ժամանակ Երևանի ընտրատեղամասերից մեկի մոտակայքում վնաս է հասցվել Ա1+-ի օպերատորի տեսախցիկին, իսկ ժապավենը հանվել է: Մեկ այլ դեպքում ջնջվել է «Հայք» օրաթերթի լրագրողի տեսագրությունը՝ ոստիկանի ներկայությամբ: Մեկ ուրիշ դեպքում էլ «Հայկական ժամանակի» թղթակցին դուրս են հանել ընտրատեղամասից, որի հետևանքով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի նկատմամբ տույժ կիրառվեց՝ 300000 դրամ տուգանքի չափով (մոտ 1000 ԱՄՆ դոլար):

Հետընտրական բողոքների ընթացքում լրագրողները ենթարկվել են լայնատարած հալածանքների ու ահաբեկման: Փետրվարի 27-ին «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Էրիկ Ղազարյանի վրա հարձակում է եղել Երևանի կենտրոն ոստիկանական բաժանմունքում և խլվել է նրա միկրոֆոնը: «Հայք» օրաթերթի թղթակցից Արտակ Եղիազարյանը բերման է ենթարկվել ոստիկանական բաժանմունք և հարցաքննվել է քաղաքական հանրահավաքի ներկա լինելու շուրջ: Փետրվարի 29-ին, ապա մարտի 1-ին հարձակում է եղել ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի վրա, և մի քանի ոստիկանների կողմից նա ձեռի է ենթարկվել այն բանի համար, որ փորձել է լուսանկարել նրանց Երևանի կենտրոնում ընթացող ցույցերի ժամանակ: Երկրորդ միջադեպի ժամանակ առգրավվել է Շամշյանի ֆոտոխցիկը, և նա բուժօգնության կարիք է ունեցել:

Մահմանվել է գրաքննություն մարտի 1-21-ը հայտարարված արտակարգ դրության ժամանակահատվածում, որի ընթացքում մամուլի և լրատվամիջոցների ազատությունները խիստ սահմանափակվել են: Արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագրով սահմանվեց, որ «զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական և ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումները կարող են իրականացվել բացառապես պետական մարմինների պաշտոնական տեղեկատվության սահմաններում»: Հրամանագրի արդյունքում բոլոր ընդդիմադիր ԶԼՄ-ները, կառավարությանը քննադատող կայքերը և մի քանի օրով նաև «Ազատություն» ռադիոկայանի հեռարձակումները փակվեցին: Հրամանագիրն, այնուհանդերձ, չկանխեց քաղաքական ընդդիմության ու վերջինիս առաջնորդների հանդեպ աղաղակող քննադատությունն ու անհիմն մեղադրանքները այլ տպագիր ու հեռարձակող լրատվամիջոցներում: Երկրի մարդու իրավունքների պաշտպանի կողմից Հ1-ը որակվեց որպես «այդպիսի անընդունելի լուսաբանումների վառ օրինակ»: Չնայած արտակարգ դրություն հայտարարելու հրամանագիրը վերաբերում էր միայն Երևանին, սակայն ԶԼՄ-ների հանդեպ խիստ սահմանափակումների կիրառման մասին բազմաթիվ հաղորդումներ եղան երկրի շատ այլ մասերից:

Գյումրիում ԳԱԼԱ հեռուստաընկերության երեք աշխատակիցներ, ովքեր լուսաբանում էին հանրահավաք, բերման ենթարկվեցին ոստիկանական բաժանմունք, որտեղ

նրանց պահեցին 3 ժամ: Ըստ հաղորդումների ոստիկանները փորձել էին խլել «Առավոտ» օրաթերթի թղթակցի ֆոտոխցիկը, սակայն ամբոխի կողմից ետ էին մղվել: Նաև հաղորդումներ են եղել, որ ոստիկանները սպառնացել ու վիրավորական խոսքեր են ասել «Ազատություն» ռադիոկայանի լրագրողին:

Իրավապահներին դիմադրություն ցույց տալու համար քրեական մեղադրանքներ ներկայացվեցին երկրում ամենաշատ ընթերցվող «Հայկական ժամանակ» ընդդիմադիր օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանին: Նիկոլ Փաշինյանը, ով մարտի 1-ի բողոքի ցույցի մասնակիցներին առաջնորդող ընդդիմադիր գործիչներից մեկն էր, թաքնվում էր իրավապահներից ու տարեվերջի դրությամբ փախուստի մեջ էր գտնվում:

Չնայած ի վերջո ընդդիմադիր օրաթերթերը մարտի 21-ից վերստին սկսեցին տպագրվել, սակայն ոսնձգություններն ու ահաբեկումները լրագրողների հանդեպ շարունակվում էին:

Մարտի 25-ին ըստ ստացված հաղորդումների ոստիկանությունը փորձ էր արել բռնել Կոտայքի մարզում անցկացվող բողոքի ցույցը լուսաբանող երեք լրագրողներին: Ամբոխը օգնել էր նրանց փախչել, սակայն նրանցից մեկին հետևել էին, բռնել ապա ստիպելով նստեցրել մեքենան և տարել ոստիկանական բաժանմունք, որտեղ լրագրողն ու իր վարորդը պահվել էին մեկ ժամ:

Մայիսի 21-ին «Ժամանակ Երևանի» լրագրողը, ով Մասիս քաղաքում անցկացվող բողոքի ցույցն էր լուսաբանում, կալանավորվել էր ոստիկանների կողմից, ծեծի ենթարկվել, պահվել մի քանի ժամ և ազատ արձակվել այն բանից, հետո, երբ նրա ֆոտոխցիկից ջնջվել էին լուսանկարները:

Օգոստոսի 1-ին «Հայկական ժամանակի» լրագրող Գագիկ Հովակիմյանը Աշտարակ քաղաքում բերման էր ենթարկվել ու ոստիկանությունում պահվել ավելի քան մեկ ժամ այն բանից հետո, երբ նա փորձել էր հետաքննություն անցկացնել ու պարզել՝ արդյոք եղել են փորձեր թույլ չտալու, որ մարդիկ գնան Երևան՝ մասնակցելու ընդդիմության հանրահավաքին:

Տարվա ընթացքում անհայտ անձանց կողմից հարձակումներ են եղել մի շարք լրագրողների վրա: Որոշ դիտորդներ ու մարդու իրավունքներով զբաղվող խմբեր կարծիք են հայտնել, որ լրագրողներն այդ հարձակումների թիրախ են դարձել իրենց մասնագիտական գործունեության պատճառով:

Օգոստոսի 11-ին «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Լուսին Բարսեղյանի վրա հարձակում են գործել երկու անհայտ անձինք: Լուսինեն, ով հարձակումից հետո կարճ ժամանակով տեղափոխվել էր հիվանդանոց, հարձակումը կապում էր իր հրապարակած վերջին հոդվածաշարի հետ, որտեղ նա մանրակրկիտ անդրադառնում էր իշխանություններին մոտ կանգնած մի շարք ազդեցիկ անձանց ենթադրյալ անօրինական գործունեությանը: Տարեվերջի դրությամբ հարձակում գործած անձին դեռ չէին բացահայտվել, իսկ գործի քննությունը դեռ ընթացքի մեջ էր:

Օգոստոսի 18-ին մի անհայտ անձ հարձակում էր գործել «Ազատություն» ռադիոկայանի երևանյան գրասենյակի տնօրենի պաշտոնակատար Հրաչ Մելքումյանի վրա Երևան քաղաքի կենտրոնում, երբ նա ոտքով վերադառնում էր տուն: Անհայտ անձը մոտեցել է Մելքումյանին, անունով դիմել նրան, ապա սկսել ծեծել նրան՝ հայիոյելով ռադիոկայանն ու



դրա ծրագրերը: Արդյունքում կոտրվել են Մելքունյանի ատամները, կապտուկներ են առաջացել գլխին և մեջքին: Ըստ տեղական ՁԼՄ-ների հոկտեմբերի 20-ին գործի քննությունը կարճվել է՝ հարձակում գործող անձին (անձանց) չհայտնաբերելու հիմնավորմամբ:

Նոյեմբերի 17-ին հետաքննող լրագրող Էդիկ Բաղդասարյանը, որ հայտնի է իշխանական կոռուպցիան բացահայտող իր հոդվածներով, դարձավ բռնարարքի թիրախ, որն իր և շատ դիտորդների կարծիքով կապված էր նրա մասնագիտական գործունեության հետ: Երեք անհայտ անձինք դարանամուտ լինելով ծեծի էին ենթարկել Բաղդասարյանին, երբ նա «Հետք» օնլայն պարբերականի գրասենյակի մոտ պատրաստվում էր նստել իր ավտոմեքենան: Բաղդասարյանը ստացել էր գլխի լուրջ վնասվածքներ և տեղափոխվել էր հիվանդանոց, որտեղ նա մնաց մի քանի օր: Տարեվերջի դրությամբ գործի քննությունը դեռ շարունակվում էր:

Արտակարգ դրությունը հանելուց հետո Հարկային պետական ծառայությունը (ՀՊԾ) 4 անկախ և ընդդիմադիր ՁԼՄ-ներում սկսեց նախապես չհայտարարված հարկային ստուգումներ: Մարտի 24-ին հարկային պաշտոնյաները ստուգումներ անցկացրեցին «Չորրորդ իշխանություն» և «Ժամանակ Երևան» ընդդիմադիր ՁԼՄ-ներում: Մարտի 25-ին ՀՊԾ-ն տեղեկացրեց «Հայկական ժամանակին», որ ստուգելու են վերջինիս ֆինանսական հաշվետվությունները: ՀՊԾ աշխատակիցները նաև ներխուժեցին «Առավոտի» գրասենյակներ՝ պահանջելով այդ օրաթերթի հարկային հաշվետվությունները հիմնադրման օրից, այն է՝ 1996թ.-ից: «Առավոտում» բացահայտված մանր խախտումների համար վերջինս ոչ մեծ տույժ վճարեց, նույնը նաև տեղի ունեցավ «Չորրորդ իշխանության» պարագայում: «Հայկական ժամանակի» հայտնած տեղեկությունների համաձայն իրենց մոտ հարկային ստուգումներն ավարտվեցին, երբ բողոք-նամակ ուղարկվեց ՀՊԾ ղեկավարին:

ԳԱԼԱ մարզային հեռուստակայանը միաժամանակ հարկային տեսուչների, հեռարձակման ոլորտի կարգավորիչի ու քաղաքային իշխանությունների ճնշման ներքո էր հայտնվել: 2007թ. հոկտեմբերին մեկնարկած ճնշող հարկային ստուգումների արդյունքում մարտի 19-ին՝ երկարատև դատաքննությունից հետո որոշվեց, որ ընկերությունից գանձման է ենթակա մոտ 26 միլիոն ՀՀ դրամ (շուրջ 85000 ԱՄՆ դոլար)՝ որպես նախկինում չկատարված հարկային պարտավորությունների, հաշվարկված տույժերի ու ուշացված վճարումների հանրագումար: Դիտորդների շրջանում տարածված կարծիք էր տիրում, որ հարկային ստուգումները հաշվեհարդար էին 2007թ. սեպտեմբերին հեռուստաընկերության կողմից Լևոն Տեր-Պետրոսյանի կառավարությանը քննադատող ելույթը հեռարձակելու համար: Մտուգումների սկսվելուց հետո ԳԱԼԱ-ն նաև դժվարություններ ուներ գովազդատուներ գտնելու կամ եղած գովազդատուներին պահելու հետ կապված: Ընկերության սեփականատերը պնդում էր, որ իշխանությունները ստիպում էին գովազդատուներին չաշխատել ԳԱԼԱ-ի հետ:

Ա1+ հեռուստաընկերությունը տարեվերջի դրությամբ դեռ մնում էր առանց հեռարձակման լիցենզիայի կամ հաճախականության: Ա1+ ընկերությունը ռադիոյի կամ հեռուստատեսային հեռարձակման լիցենզիա ստանալու տասն անհաջող դիմում էր ներկայացրել 2002թ. ի վեր, երբ կառավարությունը չերկարաձգեց վերջինիս լիցենզիան, ինչում շատերը քաղաքական դրդապատճառներ էին տեսնում: 2002թ. ի վեր Ա1+-ը հանդես է եկել որպես ինտերնետային լրատվական գործակալություն, որի տեսանյութերը զետեղվել է ինտերնետ ցանցում: Արտակարգ դրության օրերին ու դրան հաջորդած ժամանակահատվածում Ա1+-ի պատրաստած տեսանյութերը զետեղվել են տեսանյութերի

տարբեր միջազգային սիրողական կայքերում: Հունիսի 17-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) վճիռ կայացրեց, որ իշխանությունները, հրաժարվելով գրավոր պարզաբանումներ տալ լիցենզիայի տրամադրումը մերժելու վերաբերյալ, խախտել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը (խոսքի ազատություն): Եվրադատարանի վճռում ասված էր. «ընթացակարգը, որով լիցենզիա տրամադրող մարմնից չի պահանջվում պատճառաբանել իր որոշումները չի ապահովում համարժեք պաշտպանություն խոսքի ազատության հիմնարար իրավունքի մասով իրավասու հանրային մարմնի կամայական միջամտություններից»: Եվրադատարանը որոշեց և կառավարությունն էլ Ա1+-ի հեռուստաընկերության հիմնադիր «Մելտեքս» ՍՊԸ-ին վճարեց 30000 եվրո (մոտ 42000 ԱՄՆ դոլար):

Մեպտեմբերի 10-ին՝ ըստ էության առանց նախապես զգուշացման կամ հանրային քննարկումների, Ազգային ժողովը փոփոխություններ կատարեց հեռուստատեսության ու ռադիոյի մասին օրենքում, որով նոր հեռուստատեսային հեռարձակման լիցենզիաների տրամադրումը դադարեցվեց մինչև 2010թ. հուլիսը: Այս օրենսդրական փոփոխությունն ընդունվեց չհայտարարված և երեկոյանը անցկացված արտահերթ նիստի ժամանակ: Այս դադարեցումը գործողության մեջ դրվեց մի շարք լիցենզիաների ժամկետները լրանալու կապակցությամբ հեռուստահաձախականությունների համար մրցույթ հայտարարելու նախաշեմին: Այս փոփոխությունը նաև գործող հեռուստակայաններին իրավունք է տալիս մինչև 2011թ. հունվար երկարաձգել ժամկետները լրացող իրենց լիցենզիաները: Անկախ ԶԼՄ-ները, վերլուծաբանները և ՀԿ-ները սա դիտարկեցին որպես փորձ թույլ չտալու, որ լիցենզիա ստանան Ա1+-ը կամ այլ հայտատուներ, ովքեր ավելի մեծ համակրանք ունեն ընդդիմության հանդեպ, քան ներկայիս լիցենզիա ունեցող ընկերությունները: Մեպտեմբերի 19-ին մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչը նամակ հղեց նախագահ Մարգարյանին՝ զգուշացնելով, որ նոր օրենքը կարող է «թույլ չտալ, որ Հայաստանը կատարի» Ա1+-ի հետ կապված ՄԻԵԴ-ի որոշումը:

2007թ. հոկտեմբերին ոստիկանությունը քրեական մեղադրանք էր ներկայացրել երկու ընդդիմադիր թերթերի խմբագիրների՝ «Հայկական ժամանակի» խմբագիր Նիկոլ Փաշինյանին ու «Չորրորդ իշխանության» խմբագիր Շողեր Մաթևոսյանին, ինչպես նաև «Չորրորդ իշխանության» լրագրող Գոհար Վեզիրյանին: Երեքն էլ մասնակցել էին ընդդիմության հանրահավաքին՝ ի պաշտպանություն Լևոն Տեր-Պետրոսյանի, որը ցրվել էր ոստիկանության կողմից: Մեղադրանքներն էին. «խմբակային խուլիգանական արարք» և «բռնություն իշխանության ներկայացուցչի դեմ»: Ըստ խմբագիրներից մեկի այս մեղադրանքները գումարվել էին այն մեղադրանքներին, որոնք իշխանությունները ներկայացրեցին նրանց մարտի 1-ի իրադարձությունների կապակցությամբ:

2007թ. դեկտեմբերին պայթյուն էր տեղի ունեցել ընդդիմադիր «Չորրորդ իշխանություն» օրաթերթի գրասենյակում, որը թերթի խմբագրի խոսքով պայմանավորված էր կառավարությանն ուղղված քննադատական հրապարակումներով: Դատախազությունը այս գործի քննությունը կարճեց մոտ մեկ ամիս անց. մեղավորներն այդպես էլ չբացահայտվեցին:

2006թ. իշխանությունները կառավարությանն ուղղված քննադատական ելույթներից ելնելով ձեռքակալեցին քաղաքական ընդդիմության ներկայացուցիչներ Ժիրայր Մեֆիլյանին ու Վարդան Մալխասյանին՝ պնդելով, որ վերջիններս հեղաշրջում էին պլանավորում: Մեֆիլյանը ազատ արձակվեց հունիսի 9-ին այն բանից հետո երբ 1.5 տարի բանտարկության մեջ գտնվեց անօրինական զենք կրելու համար, իսկ Մալխասյանն ազատ արձակվեց

դեկտեմբերի 10-ին՝ «սահմանադրական կարգը ուժով տապալելու վերաբերյալ հրապարակային կոչեր անելու» և անօրինական զենք կրելու համար բանտում 2 տարի անցկացնելու հետո:

«Ժամանակ Երևան» ընդդիմադիր օրաթերթի խմբագիր Արման Բաբաջանյանը, որը դատապարտվել էր 2006թ. սեպտեմբերին փաստաթղթերի կեղծման ու զինվորական ծառայությունից խուսափելու մեղադրանքով, տարեվերջի դրությամբ դեռ բանտում էր: Բաբաջանյանն ընդունում էր իր մեղավորությունը, սակայն շատերը կարծում էին, որ 4 տարվա ազատազրկումը սովորականից խիստ պատիժ էր նման դեպքերի համար, իսկ որոշ դիտորդների գնահատմամբ նա օրենքի ընտրողական կիրառման գոհ էր դարձել: Հուլիսի 18-ին իշխանությունները մերժեցին պայմանական ազատ արձակվելու մասին նրա դիմումը՝ չնայած բանտային պաշտոնյաների, մարդու իրավունքների պաշտպանի, մարդու իրավունքների միջազգային ու տեղական դիտորդների կոչերին: Սեպտեմբերի 4-12-ը Բաբաջանյանը առողջական վիճակի լուրջ վատթարացման պատճառով տեղափոխվել էր հիվանդանոց, ընդ որում առողջական վիճակի սրացումն ըստ հաղորդումների պայմանավորված էր կալանքի պայմաններով:

### ***Ինտերնետի ազատություն***

Մարտ ամսին արտակարգ դրություն հայտարարելու որոշումից հետո իշխանություններն ընտրովի մոտեցմամբ հասանելիության արգելքներ են կիրառել անկախ կամ ընդդիմադիր ինտերնետային կայքերի հանդեպ, որոնք հայտնի են եղել կառավարության նկատմամբ իրենց քննադատական հաղորդումներով: Անհատների ու խմբերի կողմից կասկածներ են հայտնվել էլեկտրոնային փոստի ու ինտերնետային ճեպագրույցների գաղտնադիտման վերաբերյալ, սակայն դրանք հաստատող ապացույցներ չեն եղել:

Քաղաքներում կան բազմաթիվ ինտերնետ-սրճարաններ, չնայած տեղական ինտերնետ ծառայության մատուցման կապը խիստ դանդաղ է, ինչն էլ սահմանափակում է ինտերնետի գործածման արդյունավետությունը:

### ***Ուսումնակրթական ազատություն ու մշակութային միջոցառումներ***

Բազմաթիվ հաղորդումներ են եղել այն մասին, որ կառավարության թեկնածուին պաշտպանելուց հրաժարվելու համար աշխատանքից ազատվել են դպրոցի ղեկավար աշխատողներ: Ընտրություններում իրենց թեկնածուն ունեցող քաղաքական կուսակցություններից մեկի Գյումրու մարզային շտաբի ղեկավարը հայտնել է, որ նախընտրական ժամանակահատվածում իրեն և իր տասնյակ կուսակիցներին հեռացրել են հանրային հատվածում իրենց աշխատանքներից՝ կուսակցական պատկանելության պատճառով: Աշխատանքից ազատված մարդկանց մեծ մասը Շիրակի մարզում դպրոցի տնօրեններ կամ ղեկավար աշխատողներ են եղել: Նույն կերպ, եղել են նաև բազմաթիվ հաղորդումներ այն մասին, որ դպրոցների ղեկավար անձնակազմից պահանջվել է պարտադրել ուսուցիչներին ու աշակերտներին մասնակցելու իշխանական թեկնածուի հանրահավաքներին: Լոռու մարզից հաղորդումներ են եղել, որ դպրոցի տնօրենների ու անձնակազմի վրա ճնշում է գործադրվել, որպեսզի նրանք քվեարկեն հոգուտ Մերժ Մարգարյանի, ով այդ ժամանակ զբաղեցնում էր վարչապետի պաշտոնը: Եղել են հաղորդումներ երկրի տարբեր վայրերում աշխատանքից ուսուցիչներ ու դասախոսներ հեռացնելու մասին՝ կապված մարտի 1-2-ի իրադարձություններից հետո ընդդիմությանը պաշտպանելու հետ:

**բ) Խաղաղ հավաքներ կազմակերպելու ու միավորումներ կազմելու ազատություն**

***Հավաքների ազատություն***

Մահամանադրությամբ նախատեսվում է հավաքների ազատություն, սակայն իշխանությունները գործնականում խիստ կերպով խոչընդոտել են այս իրավունքի իրականացմանը: Նախքան մարտի 1-ին արտակարգ դրություն հայտարարելը՝ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու» մասին օրենքը նախատեսում էր, որ խմբերը կարող են առանց թույլտվություն ստանալու խաղաղ կերպով հավաքվել, եթե նրանք այդ մասին նախապես տեղեկացրել են համապատասխան մարմիններին: Փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների քարոզարշավի շրջանում քաղաքական կուսակցությունները հիմնականում ազատորեն էին խաղաղ հանրահավաքներ անցկացնում: Մարտի 1-ին, բողոքի հետընտրական ցույցերին ի պատասխան, այդ ժամանակ նախագահ Քոչարյանը Երևանում արտակարգ դրություն մտցնելու հրաման տվեց, որով արգելք էր դրվում հանրային ցանկացած հավաքի վրա և, ոստիկանությունը խստորեն հետևում էր դրա իրականացմանը:

Մարտի 17-ին՝ արտակարգ դրության ավարտից երեք օր առաջ, իշխանությունները փոխեցին օրենքը՝ քաղաքական հանրահավաքներն ու ցույցերը իշխանություններին հայեցողական կերպով արգելելու լայն իրավասություն տալու նպատակով: ՀՀ ազգային ժողովն օրենքում կրկին փոփոխություններ կատարեց հունիսի 11-ին՝ որոշ չափով մեղմելով մարտի 17-ին ընդունված խիստ դրույթները: Սակայն գործնականում իշխանությունները շարունակում էին խստորեն ճնշել հավաքների ազատությունը փոփոխված օրենքը կամայականորեն մեկնաբանելու միջոցով, և մարտ ամսից մինչև տարվա վերջ մերժվել է դիմած վայրերում հանրահավաքներ անցկացնելու ընդդիմության մոտ 100 իրազեկում: Հանրահավաքների արտոնումը մերժելիս՝ իշխանությունները մշտապես վկայակոչում էին օրենքի փոփոխված դրույթը, որը նրանց թույլ է տալիս մերժել արտոնումը, եթե իրավապահ մարմինները գտնում են, որ միջոցառումը բռնության սպառնալիք է ստեղծում պետական անվտանգությանը կամ հասարակական կարգին: Սակայն մի քանի անգամ, արտոնումը պաշտոնապես մերժելուց հետո, իշխանությունները առանց միջամտելու, լուռ թույլ տվեցին, որպեսզի ընդդիմության զանգվածային հանրահավաքներ տեղի ունենան և արտոնեցին ընդդիմության հունիսի 28-ի հանրահավաքը Գյումրիում և երկու հանրահավաք Երևանում՝ սեպտեմբերի 15-ին և հոկտեմբերի 17-ին:

Փետրվարի 29-ին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի (ՀՔԱ) Վանաձորի գրասենյակը Վանաձորի զբոսայգում հանրահավաք անցկացրեց՝ բողոքելով ընտրակեղծիքների դեմ: Անձինք, որոնք ըստ հաղորդումների աշխատել են Վանաձորի քաղաքապետի համար, մի քանի անգամ փորձել են խանգարել հանրահավաքը, իսկ հետո հոսանքազրկել են բարձրախոսները: ՀՔԱ Վանաձորի տնօրեն Արթուր Սաքունցը գրություն է ուղարկել Վանաձորի ոստիկանություն, հայտնելով դեպքի մասին, սակայն մինչև տարվա վերջ որևէ գործողություն չի ձեռնարկվել այդ կապակցությամբ:

Մարտի 1-ի վաղ առավոտյան իշխանություններն ուժ կիրառեցին վերջ տալու ընտրությունից հետո Երևանի Ազատության հրապարակում 11 օր շարունակ տևող իշխանության ընդդիմադիրների խաղաղ ցույցին, որն առաջնորդվում էր ընդդիմության նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից: Հանրահավաքներին ցերեկը

մասնակցում էին տասնյակ հազարավոր ցուցարարներ, որոնցից 300 - 2000 հոգի այնտեղ էին մնում նաև գիշերը:

Մարտի 1-ին անվտանգության ուժերի հարյուրավոր ներկայացուցիչներ՝ հիմնականում, ոստիկանության և հատուկ ուժերի աշխատակիցներ, ուժ կիրառեցին ցրելու գիշերն Ազատության հրապարակում անցկացրած ցուցարարներին: Բազմաթիվ ականատեսների հաղորդումների համաձայն՝ անվտանգության ուժերը շրջապատել են ցուցարարներին և սկսել ծեծել նրանց ռետինե մահակներով, օգտագործել են էլեկտրաշոկ և ոչնչացրել նրանց վրանները: Երբ ցուցարարները դիմադրել են, անվտանգության ուժերի հետ բախում է սկսվել: Տեսանյութերը և ականատեսների հաղորդումները վկայում են, որ ոստիկանները ցուցարարներին հետապնդել են Ազատության հրապարակից բավականին երկար հեռավորության վրա և, որ առանձին ցուցարարների ձերբակալելուց առաջ չորսից հինգ ոստիկան միաժամանակ ծեծել են նրանց: Եղել են նաև հաղորդումներ, որ ոստիկանները հարձակվել են կողքի փողոցների անցորդների և լրատվամիջոցների ներկայացուցիչների վրա:

Կառավարության պաշտոնական հաղորդումները Ազատության հրապարակը մաքրելու մասին հակասական էին և հարցականի տակ էին դնում դրանց ճշգրտությունը: Մարտի 1-ին ոստիկանության պաշտոնյաները հայտարարեցին, որ փետրվարի 29-ին տեղեկություններ էին ստացել, որ ցուցարարներին պետք է տրամադրվեր մեծ քանակությամբ զենք, որը մարտի 1-ին նրանց կողմից պետք է օգտագործվեր զանգվածային անկարգություններ հրահրելու նպատակով: Իշխանություններն ասում էին, որ մարտի 1-ի առավոտյան ոստիկանները խնդրել էին ցուցարարներին թույլ տալ ստուգել զենքի առկայությունը, որից հետո ցուցարարները հարձակվել էին նրանց վրա, և ոստիկանները որոշել էին ցրել ցույցը: Մակայն մարտի 1-ի ամսաթվով դատախազության կայքէջում տեղադրված մամլո հաղորդագրությունում նշվում էր, որ չարտոնված հանրահավաքների վերաբերող օրենքի դրույթներին համաձայն՝ ոստիկանները, ցույցին վերջ տալու նպատակով, գնացել էին Ազատության հրապարակ, սակայն, երբ ցուցարարները հրաժարվել էին կատարել ցրվելու հրահանգը, ոստիկանները ուժ էին կիրառել:

Ցուցարարներին ցրելուց հետո, ոստիկանները շարունակաբար հեռարձակում էին տեսանյութ, որտեղ ոստիկաններն ընդդիմության վրաններում առերևույթ հայտնաբերում էին թաքցրած նոնակաների ու այլ զենքերի պաշար: Տեսանյութի իսկությունը խիստ կասկած էր առաջացնում տեղի դիտորդների շրջանում, որոնցից շատերը համոզված էին, որ զենքերը տեղադրված էին ոստիկանության կողմից, ովքեր և հետո բեմադրեցին «հայտանբերման» նկարահանումները: Մարդու իրավունքների պաշտպանը նույնպես կասկածի տակ էր դրել իրադարձությունների պաշտոնական վարկածը: Ընդդիմությունը հետևողականորեն ժխտում էր Ազատության հրապարակում իրենց կողմից զենքեր ունենալու հանգամանքը:

Քիչ անց ՀՀ առողջապահության նախարարության կողմից հրապարակված պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ մարտի 1-2-ը ցուցարարներին ցրելու արդյունքում վիրավորվել էր 31 հոգի, այդ թվում՝ վեց ոստիկան: Ցրելուց հետո՝ Նախագահի պահպանության ծառայության ղեկավար Գրիգորի Մարգարյանը ուժով հեռացրել էր ընդդիմության առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանին հրապարակից և նրան փաստացի տնային կալանքի տակ պահել Երևանի կենտրոնում գտնվող իր տանը:

Այդ ժամանակ նախագահ Քոչարյանի կողմից արձակված արտակարգ դրության մասին հրամանագիրը Ազգային ժողովի կողմից հաստատվեց մարտի 1-ին ուշ երեկոյան և անմիջապես գործողության մեջ մտավ: Ի թիվս այլ սահմանափակումների՝ հրամանագիրն արգելում էր հանրային ցանկացած տեսակի հավաք, ցույց կամ այլ գործողություն, որը կարող էր դադարեցնել կամ կասեցնել կազմակերպությունների աշխատանքը և նախատեսում էր սահմանափակումներ քաղաքացիների տեղաշարժվելու և տրանսպորտային միջոցների վրա: Պաշտոնապես հրամանագիրը տարածվում էր միայն Երևանի վրա, սակայն դրա դրույթներից շատերը, այդ թվում՝ հավաքների արգելումը, փաստացի կիրառվում էին նաև մարզերում: Իշխանությունները պնդում էին, որ արտակարգ դրությունն անհրաժեշտ էր կարգ ու կանոնը մայրաքաղաքում և ողջ հանրապետությունում վերականգնելու համար:

Մարտի 1-ի իրադարձություններից հետո իշխանություններն արդյունավետ կերպով փակեցին Ազատության հրապարակը՝ մեծաթիվ ոստիկանական ու զինվորական ներկայություն ապահովելով, որպեսզի վախեցնեն և կանխեն ընդդիմության ցուցարարներին այնտեղ հավաքվելուց: Հունիսին իշխանությունները մերժեցին հրապարակում հանրահավաք անցկացնելու քաղաքական ընդդիմության խնդրանքը՝ պատճառաբանելով, որ այդ նույն ժամանակ մանկական տոնավաճառ էր տեղի ունենալու: Տոնավաճառը հրապարակում շարունակվեց մինչև ամառվա վերջ: Մեպտեմբերին իշխանությունները մեկնարկեցին հրապարակի տակ կայանատեղի կառուցելու շինարարական խոշոր ծրագիրը: Տեղի դիտորդներն այս գործողությունները համարում էին որպես պատրվակ քաղաքական ցուցարարների մուտքը հրապարակ մերժելու համար:

Մարտի 4-ին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի (ՀՔԱ) Վանաձորի գրասենյակին արգելվել է մարտի 1-ի իրադարձությունները քննարկելու նպատակով մարտի 6-8 ընկած ժամանակահատվածում հանրահավաքներ անցկացնել: Քաղաքապետարանը մերժել է դիմումը՝ նշելով, որ հանրահավաքը կհանգեցնի անսպասելի հանգամանքների, որը կարող է վտանգի ենթարկել մարդկանց առողջությունն ու կյանքը: Մարտի 20-ին վարչական դատարանը ուժի մեջ թողեց քաղաքապետարանի որոշումը:

Մարտի 18-ին Լևոն Տեր-Պետրոսյանի շտաբը հաղորդագրություն տարածեց, որով հայտնում էր, որ ընդդիմության ակտիվիստները, որոնց արգելել էին մասնակցել կամ ձերբակալել էին հանրահավաքներին մասնակցելու համար՝ ոստիկանության հարկադրանքով ստորագրել են փաստաթղթեր, որոնցով պարտավորվում են հետագայում չմասնակցել հանրահավաքներին կամ երթերին:

Մարտի 20-ին՝ արտակարգ դրության վերջին օրը, այդ ժամանակ նախագահի պաշտոնը զբաղեցնող Քոչարյանը զգուշացրեց, որ իր հրահանգի համաձայն ոստիկանները «խիստ միջոցներ կկիրառեն» ցուցարարների նկատմամբ: Քոչարյանը նաև նշեց, որ արտակարգ դրությունից հետո որոշ ժամանակ իշխանությունները հանրահավաքներ չեն արտոնի: Մարտի 21-ին՝ արտակարգ դրությանը հաջորդող առաջին օրը, մոտ 2,000 ցուցարարներ փորձեցին երթով անցնել Երևանի կենտրոնով: Ոստիկանները փակեցին նրանց ճանապարհը և ուժ կիրառեցին երթը դադարեցնելու համար:

Արտակարգ դրությունը հանելուց հետո ցուցարարները կանոնավոր կերպով երեկոյան հավաքվում էին Ազատության հրապարակի հարևանությամբ գտնվող պողոտայում «քաղաքական զբոսանքների»: Զբոսանքների առաջին մի քանի օրը ոստիկանները

պարբերաբար ուժ էին կիրառում՝ հավաքված ամբոխը ցրելու համար և ժամանակավոր բերման էին ենթարկում տասնյակ ցուցարարների:

Մարտի 12-ին ընդդիմությանը սատարող պատգամավոր Մասուն Միքայելյանի կալանքից հետո՝ կանոնավոր բողոքի ցույցեր սկսվեցին Միքայելյանի ծննդավայր Վանատուր գյուղում, և 10 հոգի հացադուլ էին հայտարարել: Ապրիլի 7-ին ոստիկանությունը ուժի կիրառմամբ ցրեց հացադուլավորներին և ըստ հաղորդումների նրանց տարավ անհայտ մի վայր կողքի Հրազդան քաղաքում: Ապրիլի 8-ին Հրազդանում ընդդիմության տասնյակ կողմնակիցներ բախվեցին ոստիկանների հետ՝ պահանջելով հայտնել ձերբակալված հացադուլավորների գտնվելու վայրը. հաջորդ առավոտ նրանց ազատ արձակելու պահանջով հավաքվել էին Վանատուր գյուղի մոտ 70 բնակիչներ: Հաջորդ օրը բոլոր հացադուլավորներին ազատ արձակեցին: Ըստ ընդդիմության՝ յոթ ցուցարարներ, որոնք պահանջում էին հացադուլավորներին ազատ արձակել, յուրաքանչյուրը տուգանվել էր 50000 դրամով (մոտ 165 ԱՄՆ դոլար)՝ հանրային միջոցառումներ անցկացնելու կարգը խախտելու համար:

Հունիսի 20-ին՝ մարտի 1-ի իրադարձություններից հետո Լևոն Տեր-Պետրոսյանի առաջին հրապարակային միջոցառումը Երևանի կենտրոնում չարտոնված խոշոր հանրահավաքն էր, որն իշխանությունները հայտարարել էին, որ թույլ չեն տալու: Հավաքը սկսվելուց հետո այդտեղ տեղակայված ոստիկանության հատուկ ուժերը լքեցին տարածքը: Բարձրախոսների համար հոսանք ստանալուց հետո, որն ըստ հաղորդումների հոսանքազրկվել էր, հանրահավաքը խաղաղ ընթացավ: Հունիսի 28-ին Տեր-Պետրոսյանը պաշտոնապես արտոնված հանրահավաք անցկացրեց Գյումրիում, որն ավելի քան 40 դիմումից հետո առաջին արտոնումն էր: Ոստիկանները հետևում էին հանրահավաքին, սակայն չէին խոչընդոտում:

Հուլիսի 2-ին՝ Երևան քաղաքի Կենտրոն համայնքի թաղապետ Գագիկ Բեզլարյանի և Էրեբունի համայնքի թաղապետ Միեր Սեդրակյանի ենթադրյալ կողմնակիցների մի խումբ վիրավորեց և ծեծեց խաղաղ ցուցարարներին, որոնք Երևանի Հյուսիսային պողոտայում նստացույց էին սկսել՝ բողոքելով ընդդիմության ակտիվիստների ձերբակալման ու ազատազրկման դեմ: Ներկա գտնվող ոստիկանները չեն միջամտել և ըստ հաղորդումների՝ թույլ չեն տվել, որպեսզի լրագրողները լուսանկարեն միջադեպը: Ավելի ուշ Բեզլարյանը հերքեց բախումների համար որևէ պատասխանատվություն՝ հայտարարելով, որ ծեծկոտուքը հենց ցուցարարների կողմից կազմակերպված սադրանք էր:

Հուլիսի 10-ին քաղաքապետարանը արգելեց հանրահավաքը, որն ընդդիմության ակտիվիստ Ժիրայր Սեֆիլյանը, ով բանտից ազատ էր արձակվել հունիսի 9-ին, նախատեսում էր անցկացնել հուլիսի 17-ին: Ըստ Սեֆիլյանի՝ Երևանի քաղաքապետարանն արգելել էր հանրահավաքը՝ հիմնվելով ոստիկանության այն հայտարարության վրա, որ ցուցարարները նախատեսում էին բախումներ հրահրել իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ:

Օգոստոսի 25-ի առավոտյան մոտ 50 ոստիկանները ներխուժեցին Հյուսիսային պողոտա, որտեղ ընդդիմության կողմնակիցները նստացույց էին անում և առգրավեցին պաստառներ և այլ նյութեր: Հաջորդ օրը, կեսօրից հետո, գետնին նկարված Տեր-Պետրոսյանական գրաֆիտի հայտնաբերելուց հետո, ոստիկանները ձերբակալեցին ընդդիմության վեց անդամների: Լրատվական հաղորդումներից մեկի համաձայն՝ ձերբակալվածներից մեկը անչափահաս է եղել, որին անմիջապես ազատ են արձակել, իսկ մյուսներին տարել են ոստիկանություն և ազատ արձակել երեկոյան ավելի ուշ: Սեպտեմբերի

9-ին ոստիկաններն ուժ են գործադրել Հյուսիսային պողոտայում հավաքված ընդդիմության կողմնակիցներին ցրելու համար: Վեց հոգի, որոնք հացադուլ էին հայտարարել, որպեսզի իրենց կողմից «քաղաքանտարկյալներ» համարվողներն ազատ արձակվեն, բերման էին ենթարկվել ոստիկանություն:

Հոկտեմբերի 2-ին, հիմնվելով տարածքում ընթացող շինարարական աշխատանքների վրա, Երևանի քաղաքապետարանը արգելեց հոկտեմբերի 17-ին Հյուսիսային պողոտայում հանրահավաք անցկացնելու ընդդիմության խնդրանքը: Վարչական դատարան բողոքարկելուց հետո՝ դատարանը որոշեց, որ հանրահավաքը կարելի է անցկացնել այլ վայրում, սակայն դրան հաջորդող երթըր արգելեց: Հոկտեմբերի 15-ին ոստիկանության հատուկ ուժերը ուժ գործադրմամբ ցրեցին ընդդիմության մոտ 30 ակտիվիստների, որոնք երթ էին անում Երևանի կենտրոնում՝ հոկտեմբերի 17-ի հանրահավաքի մասին իրազեկելու համար: Մարդու իրավունքների պաշտպանը, որն իր ներկայացուցիչներին այդտեղ էր ուղարկել, նույն օրն ավելի ուշ արված հայտարարությամբ քննադատեց ոստիկանության գործողությունները:

Բացի բացօթյա հավաքներից, կառավարությունը նաև երբեմն սահմանափակում էր քաղաքացիների փակօթյա հանդիպումներ անցկացնելու իրավունքը: Դեկտեմբերի 3-ին տեղական հասարակական կազմակերպությունների մի խումբ հայտարարություն տարածեց, որում նշվում էր, որ տարվա ընթացքում քաղաքացիական հասարակության խմբերին շարունակաբար մերժվել է սոցիալական և քաղաքական թեմաներով հանդիպումներ, քննարկումներ, տեսաֆիլմերի ցուցադրումներ կազմակերպելու իրավունքը: Հայտարարության համաձայն հյուրանոցների, կինոթատրոնների և բիզնես կենտրոնների համար սովորական է դարձել կառավարությանը, ընթացիկ իրադարձություններին կամ քաղաքական իրավիճակին քննադատաբար վերաբերվող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին մերժել տարածքի վարձակալումը: Հասարակական կազմակերպությունները հայտարարել են, որ որոշ հյուրանոցներ հայտնել են, որ իշխանությունների կողմից հրահանգ ունեն դահլիճները վարձով չտալ ցանկացած միջոցառման համար, որը կարող է համարվել քաղաքական և, որ իրենց հրահանգված է յուրաքանչյուր առանձին դեպք ճշտել համապատասխան պաշտոնատար անձանց հետ: Այս հայտարարությունները հաստատվել են մի շարք հյուրանոցների աշխատակիցների կողմից:

### ***Միավորումներ կազմելու ազատություն***

Միավորումներ կազմելու ազատությունն ամրագրված է Սահմանադրությամբ, և ընդհանուր առմամբ կառավարությունը գործնականում հարգել է այն: Այնուամենայնիվ, բոլոր քաղաքական կուսակցությունների, միությունների, աշխարհիկ և կրոնական կազմակերպությունների գրանցման պահանջները շարունակել են մնալ խրթին: Օրենքով սահմանվում է, որ քաղաքացիները, բացառությամբ զինված ուժերի և իրավապահ մարմինների ծառայողների, իրավունք ունեն կազմելու միություններ, ներառյալ՝ քաղաքական կուսակցություններ և արհմիություններ:

### **գ) Կրոնի ազատություն**

Կրոնի ազատությունն ամրագրված է Սահմանադրությամբ, սակայն օրենքով կան որոշ սահմանափակումներ փոքրամասնական կրոնական խմբերի հարող անձանց կրոնական ազատության մասով: Կառավարությունն ընդհանուր առմամբ չի կիրառել կրոնական ազատությունը սահմանափակող իրավական դրույթները: Հայ առաքելական



եկեղեցին համարվում է ազգային եկեղեցի և ունի մի շարք արտոնություններ, որոնք չեն գործում այլ հավատքների համար: Օրենքը չի պարտադրում հասարակական կազմակերպությունների, այդ թվում կրոնական խմբերի գրանցում: Մակայն միայն գրանցված կառույցներն են, որ ունեն իրավաբանական անձի կարգավիճակ և կարող են հրապարակել ավելի քան 1000 տպաքանակով թերթեր կամ ամսագրեր, վարձակալել հանդիպման վայրեր, հեռարձակել հաղորդումներ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով, կամ պաշտոնապես հովանավորել օտարերկրյա այցելուներին վիզաների տրամադրման հարցում. այնուամենայնիվ անհատ անդամների կողմից այս կարգի գործունեության որևէ արգելք չկա: Կառավարության կողմից կրոնական խմբի գրանցումը մերժելու դեպքեր չեն գրանցվել:

Թեպետ օրենքն արգելում է հոգեորսությունը, ինչպես նաև Հայաստանից դուրս կենտրոններ ունեցող եկեղեցիների օտարերկրյա ֆինանսավորումը, սակայն այս երկու սահմանափակումներն էլ գործնականում չեն կիրառվել:

Չնայած երկրի օրենսդրությամբ դավանական նկատառումներով զինձառայությունից խուսափողներն իրավունք ունեն անցնել այլընտրանքային ծառայություն, սակայն այլընտրանքային ծառայության նկատմամբ հսկողությունը իրականացնում են զինձառայողները, որի պատճառով Եհովայի վկաների անդամները հրաժարվում են այլընտրանքային ծառայությունից: 2005թ. ի վեր Հայաստանի ոչ մի քաղաքացի այլընտրանքային ծառայության դիմում չի ներկայացրել: Ըստ Եհովայի վկաների փաստաբանների տարեվերջի դրությամբ խմբի 81 անդամներ եղել են բանտում՝ կրելով պատիժ այլընտրանքային զինվորական ծառայությունից խուսափելու: Եվս մեկ հոգի դատապարտվել էր պայմանական ազատազրկման: Եհովայի վկաները դժգոհություն էին հայտնում այլընտրանքային ծառայությունից խուսափելու համար դատարանի սահմանած պատժի երկար ժամկետի կապակցությամբ:

Հուլիսի 28-ին մարդու իրավունքների պաշտպանի միջնորդությունից հետո հանրապետության զինվորական կոմիսարը նամակ ուղարկվեց Եհովայի վկաներին՝ հայտնելով որ բոլոր զինկոմիսարիատները ստացել են հրահանգ գրանցել և անձնագրեր տրամադրել բոլոր այն անձանց, ովքեր դավանական նկատառումներից ելնելով զինվորական ծառայությունից խուսափելու համար դատապարտվել են ու կրել պատիժը: Նամակում նշվում էր, որ Պաշտպանության նախարարությունն ու զինվորական դատախազն այս քաղաքացիների գրանցման վերաբերյալ առարկություններ չունեն: Եհովայի վկաները հաղորդում են, որ զինկոմիսարիատներում իրենց հետևորդների հանդեպ վերաբերմունքը բարելավվել է, հատկապես պատիժը կրելուց հետո փաստաթղթեր տրամադրելու հարցում:

### ***Ոստահարումներ և խտրականություն հասարակության կողմից***

Փոքրամասնական կրոնների հանդեպ հասարակության մոտեցումները հիմնականում հակասական են: Հեռուստաընկերություններն իրենց եթերում Հայկական եկեղեցուց գատ մյուս հարանվանությունները քամահրանքով պիտակավորել են որպես «աղանդներ» ու բացասական հաղորդումներ են հեռարձակել դրանց մասին:

Համաձայն դիտորդների՝ հիմնական բնակչությունը ոչ-ավանդական կրոնական խմբերին մոտենում է կասկածանքով և բացասաբար է արտահայտվում Եհովայի վկաների մասին, որովհետև ճիշտ չեն ընկալվում կրոնը տարածելու նրանց գործունեությունը ու բանակում ծառայելուց հրաժարվելը: Եհովայի վկաները շարունակել են ժամանակ առ ժամանակ զգալ հասարակական խտրականություն:

Հրեական համայնքի առաջնորդները հաշվարկել են, որ երկրի հրեական համայնքը կազմում է 500-1000 մարդ: Կա մշտական բաբբի ու մեկ սինագոգ: Հակահրեական բռնությունների ու պղծումների մասին հաղորդումներ տարվա ընթացքում չեն գրանցվել: 2007թ. դեկտեմբերին հրեական համայնքի անդամները հայ-հրեական ողբերգությունների հուշակոթողի հրեական հատվածում նկատել էին կեռախաչի փոքր պատկեր:

Փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների նախաշեմին անհայտ հակա-ընդդիմադիր մի կազմակերպություն Երևանում տարածեց DVD տեսասկավառակներ, որտեղ կային հակահրեական պնդումներ, մակդիրներ ու ակնարկներ ընդդեմ նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի: Հնչում էին զրպարտող մեղադրանքներ թեկնածուի հրեա կնոջ վերաբերյալ, իսկ թեկնածուն մեղադրվում էր, որ համագործակցում է Իսրայելի կառավարության և մյուսների հետ՝ պետությունը խարխլող «զիռնիստական դավադրության» հարցում: Այս տեսանյութից որոշ հատվածներ հեռարձակվեցին մասնավոր հեռուստակայաններից մեկի եթերով, որն ունի ազգային լսարան:

Տարվա ընթացքում «Հայոց աշխարհ» կառավարամետ օրաթերթը շարունակել է բացասական հոդվածներ տպագրել Եհովայի վկաների մասին: Հոդվածներում այս խումբը ներկայացվում է որպես աղանդ, որ վտանգում է պետության անվտանգությունը և կոչ է արվում նրանց արտաքսել երկրից: Օրաթերթում նաև կոչեր են արվում դավանական նկատառումներով այլընտրանքային զինձառայությունից խուսափելու համար ավելի խիստ պատիժներ կիրառել:

Ըստ ոստիկանության հաղորդման հուլիսի 13-ին 53-ամյա մի երևանցի հաձակվել է Եհովայի վկաների 2 անդամների վրա, երբ վերջիններս քարոզչություն են իրականացրել: Ըստ Եհովայի վկաների հաղորդման հարձակում գործած անձը՝ Հայկ Էլիզբարյանը մեղավոր է ճանաչվել տուժողին վիրավորելու, սպառնալու և ծեծի ենթարկելու համար, և սահմանվել է տուգանք՝ 150000 դրամի չափով (մոտ 490 ԱՄՆ դոլար):

Առավել մանրամասների համար տես՝ 2008թ. Միջազգային կրոնական ազատության մասին զեկույցը [www.state.gov/g/drl/irf/rpt](http://www.state.gov/g/drl/irf/rpt):

### **դ) Տեղաշարժվելու ազատություն, ներքին տեղահանված անձինք, փախստականների պաշտպանություն և քաղաքացիություն չունեցող անձինք**

Չնայած օրենքով ապահովվում է երկրի ներսում տեղաշարժվելու, արտասահմանյան ուղևորությունների, արտագաղթի և հայրենադարձության ազատությունը, սակայն գործնականում որոշ սահմանափակումներ են եղել: Փախստականներին, ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ), քաղաքացիություն չունեցող ու ապաստան հայցողներին պաշտպանելու ու աջակցելու նպատակով կառավարությունը համագործակցել է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի (UNHCR) և մարդասիրական կազմակերպությունների հետ:

Ժամանակավոր կամ մշտապես երկրից հեռանալու համար քաղաքացիները պետք է ելքի վիզա ձեռք բերեն: Ժամանակավոր երկրից բացակայելու համար անհրաժեշտ ելքի վիզա կարելի է հեշտությամբ ձեռք բերել՝ վճարելով 1000 դրամ (մոտ 3 ԱՄՆ դոլար) յուրաքանչյուր տարվա համար: Ոստիկանության անձնագրերի ու վիզաների վարչության ղեկավար կազմը փոխելուց հետո ելքի վիզաները դիմումի ներկայացումից հետո հեշտությամբ տրամադրվում են մեկ օրվա ընթացքում: Հոկտեմբերին կառավարությունը վերացրեց հաշվառումից դուրս

գալու պահանջը արտագաղթողների համար, որը շատերի կողմից դիտարկվում էր որպես լայնորեն կոռուպացված մի դժվարին գործընթաց:

Քաղաքացիների տեղաշարժի ազատությունը երկրի ներսում սահմանափակվել է մարտի 1-ին նախագահի արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշմամբ: Տարվա ընթացքում եղել են բազմաթիվ հաղորդումներ այն մասին, որ Երևանից դուրս բնակվող քաղաքացիների մասնակցությունը մայրաքաղաքում անցկացվող ընդդիմության հանրահավաքներին սահմանափակվել է:

Օրենքը չի արգելում հարկադիր աքսորը, բայց կառավարության կողմից դրա կիրառման վերաբերյալ հաղորդումներ չեն եղել:

### ***Ներքին տեղահանված անձինք (ՆՏԱ)***

Փախստականների նորվեգական խորհուրդը 2005թ. (վերջին տարին, որի վերաբերյալ կան քանակական տվյալներ ) կատարած ուսումնասիրությամբ պարզել է, որ 2005թ. երկրում բնակվող ներքին տեղահանված անձանց թիվը կազմում էր 8399 հոգի:

Ադրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղի պատերազմի ընթացքում կառավարությունը սահմանային գոտիներից տարհանել է մոտավորապես 65 հազար տնային տնտեսություն, բայց մեծամասնությունը վերադարձել են իրենց բնակավայրերը կամ բնակություն հաստատել այլ վայրերում: Մնացած ՆՏԱ-ներից մոտ երկու երրորդը չէին կարող վերադառնալ իրենց գյուղերը, քանի որ դրանք շրջապատված են ադրբեջանական տարածքներով, իսկ մյուսները նախընտրում են չվերադառնալ սոցիալ-տնտեսական վատ պայմանների պատճառով, կամ վախենում են ակննապատ դաշտերից: Կառավարությունը ՆՏԱ-ներին ընձեռել է քաղաքացու բոլոր իրավունքները, բայց նրանց ինտեգրմանը աջակցելու ծրագրեր չի իրականացրել. այնուհանդերձ, հարմարվելու հարցում նրանց օգնել են միջազգային կազմակերպությունները:

Սեպտեմբերի 25-ին իշխանությունները հաստատել են վերաբնակեցման մի ծրագիր՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդյունքում տեղահանված 626 ընտանիքների համար:

### ***Փախստականների պաշտպանություն***

Օրենքով նախատեսվում է անձանց փախստականի կամ ապաստան հայցողի կարգավիճակի տրամադրում համաձայն 1951թ. ՄԱԿ-ի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի և դրա 1967թ. արձանագրության, և կառավարությունը ստեղծել է փախստականներին պաշտպանություն տրամադրելու համակարգ: Տարվա ընթացքում կառավարությունը շնորհել է փախստականի կարգավիճակ ու ապաստան. այնուհանդերձ ապաստանի բազմաթիվ դիմումների վերաբերյալ որոշում չի կայացվել, իսկ դիմողները բողոքել են ձևակերպումների ձգձգումներից, երբեմն էլ իշխանությունների կողմից դրսևորած խտրականությունից՝ կապված դիմողի ծագման երկրից:

Գործնականում կառավարությունն ապահովել է պաշտպանություն արտաքսման ու փախստականներին վերադարձի հարցում՝ թույլ չտալով, որ նրանք վերադառնան այնպիսի մի երկիր, որտեղ նրանց կյանքին կամ ազատություններին վտանգ է սպառնում: Տարվա ընթացքում կառավարությունը նաև ժամանակավոր պաշտպանություն է ապահովել այն

մարդկանց, ովքեր չեն կարող որակվել որպես փախստական ըստ 1951թ. կոնվենցիայի և 1967թ. արձանագրության:

Նոյեմբերի 1-ի դրությամբ ապաստանի համար դիմել են 190 հոգի, և կառավարությունը 68 հոգու շնորհել է ժամանակավոր ապաստան և մեկ հոգու էլ փախստականի կարգավիճակ: Մնացած գործերը տարեվերջի դրությամբ դեռ ուսումնասիրվում էին:

Ապաստան տրամադրելու համար գործում է սահմանված ընթացակարգ, որը ներառում է ապաստան հայցողին անօրինական մուտքի համար ներման շնորհումը և երկրի տարածք ապաստան հայցողի մուտքին առնչվող հարցերը: Սակայն անփորձ սահմանապահների հաճախակի ռոտացիան և ապաստանի հարցերի վերաբերյալ ոչ խորը իմացությունը երբեմն օդանավակայաններում և ցամաքային սահմանակետերում փախստականների ձևակերպման ձգձգումների ու դժվարությունների տեղիք էին տալիս:

Ինստիտուցիոնալ հզորությունների բացակայության պատճառով կառավարությունը ապաստան հայցողներին մշտական բնակության իրավունք տալուց հետո հաճախ դժվարանում էր նրանց հասարակությանը ինտեգրելու հարցում: Փախստականներին ու ապաստան հայցողներին տրամադրվող ժամանակավոր կացարանները հաճախ չեն ունենում համարժեք միջոցներ ու գտնվում են վատ պայմաններում:

Տարվա ընթացքում UNHCR-ն իրականացրել է սահմանապահների ուսուցման ինտենսիվ ծրագիր: Միջազգային կազմակերպությունները նշում էին, որ ռուսական սահմանապահները, ովքեր Հայաստանի ու Ռուսաստանի միջև կնքված համաձայնագրի համաձայն իրականացնում են սահմանի պահպանությունը Թուրքիայի և Իրանի հետ սահմաններին, ինչպես նաև Երևանի հիմնական միջազգային օդանավակայանում, առաջինն առնչվելով ապաստան հայցողներին, հաճախ մերժել են նրանց մուտքը՝ առանց այդ մասին հայտնելու կառավարությանն ու ՄԱԿ-ի փախստականների հարցով գլխավոր հանձնակատարին: Տարվա ընթացքում Երևանի օդանավակայանում ռուս սահմանապահների թիվը աստիճանաբար նվազել է, սակայն նրանք դեռ շուրջ 18 տոկոս են կազմել սովորաբար տեղացի սահմանապահներով լրացվող բայց թափուր մնացող աշխատատեղերի հաշվին:

### ***ՄԱՍ 3. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ***

Չնայած օրենքով քաղաքացիներին տրված է խաղաղ եղանակով իշխանափոխություն կատարելու իրավունք, գործնականում այս իրավունքը սահմանափակվել է թե՛ հանրապետական, թե՛ տեղական մակարդակներում ընտրությունների անցկացման ժամանակ կրկնվող, նշանակալի խախտումների պատճառով:

#### ***Ընտրություններ և քաղաքական մասնակցություն***

Փետրվարի 19-ի նախագահական ընտրությունները զգալի թերություններով են անցել: Խնդիրներից են եղել կառավարության թեկնածուի նկատմամբ նապաստավոր վերաբերմունքը, քվեաթերթիկների լցումման դեպքերը, ձայների գնումը, բազմակի քվեարկությունը, ընտրողների ահաբեկումը, հանձնաժողովի ընդդիմության անդամների,

վատահաված անձանց և լրագրողների դեմ բռնությունները և նրանց ահաբեկումը, նրանց քաղաքացիական և քաղաքական իրավունքների սահմանափակումը և կասկածելիորեն բարձր մասնակցության ցուցանիշները:

Փետրվարի 24-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) հայտարարեց, որ ընտրություններում ձայների 52.8 տոկոսով հաղթել է վարչապետ Սերժ Սարգսյանը: Երկրորդ տեղում է եղել Լևոն Տեր Պետրոսյանը՝ ստանալով ձայների 21.5 տոկոսը: Մնացած ձայները բաշխվել են Արթուր Բաղդասարյանի (16.7 տոկոս), Վահան Հովհաննիսյանի (6.2 տոկոս), Վազգեն Մանուկյանի (1.3 տոկոս), Տիգրան Կարապետյանի (0.6 տոկոս), Արտաշես Գեղամյանի (0.5 տոկոս), Արման Մելիքյանի (0.3 տոկոս) և Արամ Հարությունյանի (0.2 տոկոս) միջև:

Փետրվարի 19-ի ընտրությունները դիտարկել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և եվրոպական խորհրդարանական մի շարք կազմակերպություններից բաղկացած ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունը: Ընտրությունների մասին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ վերջնական գեկույցում նշվում է, որ թեև «ընտրությունները հիմնականում համապատասխանել են ԵԱՀԿ պարտավորություններին և միջազգային չափանիշներին նախընտրական շրջանում և քվեարկության ժամերին՝ որոշ պարտավորությունների նկատմամբ ի հայտ եկան լուրջ մարտահրավերներ՝ հատկապես ընտրությունների օրվանից հետո», որը «ժողովրդավարական ընտրությունների համար էական չափանիշների նկատմամբ ցուցաբերեց անբավարար հարգանք, և արժեզրկեց ամբողջ ընտրական գործընթացը»: Նկատվել է նաև ձայների հաշվարկի ժամանակ հաշվետվողականության և թափանցիկության բացակայություն և բողոքներն ու գանգատները գրանցելու ոչ արդյունավետ ընթացակարգեր: Խնդիրներ են եղել նաև ընտրական օրենսգրքի իրականացման հետ: Զեկույցում նշվել է կուսակցական և պետական գործառույթների տարանջատման անորոշությունը, որը օրենքի ակնհայտ խախտում էր: Նախընտրական քարոզչության շրջանում, օրինակ՝ լրատվամիջոցները կողմնակալություն են ցուցաբերել՝ ի օգուտ այդ ժամանակ վարչապետ Սերժ Սարգսյանի, և տեղական ինքնակառավարման մարմինների բազմաթիվ պաշտոնատար անձինք, որոնցից մի քանիսը կատարելիս են եղել իրենց պաշտոնական պարտականությունները ակտիվորեն քարոզել են նրա օգտին: Հաղորդումներ են եղել այնպիսի դեպքերի մասին, երբ տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային օղակի աշխատակիցներին պարտադրել են մասնակցել վարչապետի քարոզարշավի միջոցառումներին: Դիտորդները նաև գրանցել են մասնակցության անհնարին ցուցանիշներ մոտ 100 ընտրատեղամասերում:

Հունվարի 21-ին մեկնարկած ընտրարշավից առաջ, դրա ընթացքում և հետո ընդդիմության կողմից հաղորդումներ են եղել իշխանությունների կողմից քաղաքական նկատառումներով հետապնդումների բազմաթիվ դեպքերի մասին:

Եղել են հաղորդումներ, որ ընտրությունից առաջ և հետո մարդկանց ազատել են աշխատանքից իրենց քաղաքական հայացքների կամ գործունեության համար: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հայտնել է, որ Լոռու մարզպետարանի աշխատակիցներ Արշավիր Ղուկասյանին և Արմեն Հովհաննիսյանին աշխատանքից ազատել են ընտրություններից հետո, քանի որ նրանք սատարում էին Լևոն Տեր-Պետրոսյանին: Շիրակի մարզային մի կուսակցության նախագահ հայտնել է, որ նախագահական ընտրություններին սեփական թեկնածուով մասնակցող իր կուսակցության մեկ տասնյակից ավելի անդամներ ազատվել են հանրային օղակներում իրենց աշխատանքից

այն պատճառով, որ հրաժարվել են աջակցել այդ ժամանակ վարչապետ հանդիսացող Սերժ Սարգսյանի քարոզարշավին: Ըստ հաղորդումների տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային օդակի աշխատակիցներին հարկադրել են մասնակցել այդ ժամանակ վարչապետ Սարգսյանի քարոզարշավի միջոցառումներին՝ սպառնալով ազատել աշխատանքից կամ կրճատել աշխատավարձը:

Եղել են նաև հաղորդումներ այդ ժամանակ վարչապետ Սարգսյանի ընտրարշավի կողմից ընտրություններից առաջ կառավարության վարչական միջոցները չարաշահելու վերաբերյալ: Ըստ հաղորդումների Վանաձորի իշխանությունները տրամադրել են անվճար հանրային փոխադրամիջոցներ, դադարեցրել են դասերը և կասեցրել հանրային այլ հիմնարկությունների աշխատանքը, որպեսզի փետրվարի 7-ին Սարգսյանի քարոզչական հանրահավաքի ժամանակ ապահովեն բարձր մասնակցություն:

Ընդդիմության որոշ ակտիվիստներ հարձակման են ենթարկվել իրենց քարոզչական գործողությունների համար: Ըստ հաղորդումների փետրվարի 9-ի Տեր-Պետրոսյանի հանրահավաքից առաջ Հովհաննես Գրիգորյանը, Գևորգ Զաքարյանը և Աղվան Հակոբյանը հարձակման են ենթարկվել Սարգսյանի Երևանի Նոր Նորքի շտաբի պետ Մելիք Գասպարյանի կողմից, երբ Երևանի կենտրոնում փակցնում էին Տեր-Պետրոսյանի քարոզչական պաստառները:

Քաղաքական ընդդիմության կուսակցությունները հաղորդել են, որ իշխանությունները ճնշում են գործադրել սեփականատերերի վրա՝ քարոզարշավի ընթացքում իրենց գրասենյակային տարածքներ չտրամադրելու հարցում: Հայտնել են նաև, որ գովազդային ընկերությունների վրա ճնշում է գործադրվել, որպեսզի ընդդիմությանը վարձով գովազդային վահանակներ չտրամադրվեն: Եղել են նաև մի շարք դեպքեր, երբ այդ ժամանակ վարչապետի պաշտոնը զբաղեցնող Սարգսյանի քարոզչական նյութերը փակցվել են պետական շենքերի վրա, օրինակ՝ քաղաքապետարանների, դպրոցների և մշակութային կենտրոնների վրա: Հաղորդումների համաձայն՝ հունվարի 28-ին ոստիկանությունը Կապան քաղաքում ուժի կիրառմամբ փակել է Տեր-Պետրոսյանի միակ շտաբը: Տեր-Պետրոսյանի շտաբը գրասենյակը վարձակալությամբ վերցրել էր 2007թ. դեկտեմբերին, սակայն տերը որոշել էր դադարեցնել վարձակալության պայմանագիրը՝ չնայած, որ նրան նախապես վճարվել էր երկու ամսվա վարձը: Տեր-Պետրոսյանի Կապանի շտաբի պետը հայտնել է, որ, չնայած սեփականատիրոջ ցանկությանը ևս երկու օր թույլ տալ նրանց այնտեղ մնալ, ոստիկանները հրահանգել էին իրեն և շտաբի այլ կամավորներին ազատել գրասենյակը: Դրանից հետո ոստիկանները կնքել էին գրասենյակը:

Տարբեր շտաբներից հայտնել են, որ ընտրություններին նախորդող ամսվա ընթացքում իրենց գրասենյակների վրա եղել են հրկիզման և հրազենային հարձակումներ: Նման միջադեպեր գրանցվել են Վանաձորում, Երևանի Սիլիկյան թաղամասում, Հաղթանակ գյուղում (գտնվում է Երևանի վարչական տարածքում), Նոր Նորքում և Երևանի մեկ այլ թաղամասում: Նման միջադեպի առնչությամբ մի հոգի դատապարտվել է խուլիգանության համար:

Ընդդիմության քարոզարշավի որոշ միջոցառումներ ընդհատվել են բռնության կիրառմամբ: Հունվարի 27-ին Թալին քաղաքում Տեր-Պետրոսյանի հանրահավաքի ժամանակ նրան քննադատող անձնավորության վրա ենթադրաբար հարձակվելու համար ձերբակալվել

և «խմբակային խուլիգանության» մեջ են մեղադրվել Տեր-Պետրոսյանի երեք սատարողներ, ովքեր ապրիլի 15-ին դատապարտվել են 1.5-2.5 տարվա ազատազրկման:

Փետրվարի 6-ին Արտաշատում տեղի ունեցող Տեր-Պետրոսյանի հանրահավաքի ժամանակ իշխանությանը սատարողների մի խումբ քարեր է նետել և ծեծկոտուք սկսել Տեր-Պետրոսյանին սատարողների հետ՝ ակնհայտորեն փորձելով խանգարել հանրահավաքի անցկացմանը: Տեր-Պետրոսյանի շտաբը բողոք է ներկայացրել ոստիկանություն, որի արդյունքում երկու հոգի տուգանվել են 100000-ական դրամի չափով (մոտ 300 ԱՄՆ դոլար):

Փետրվարի 3-ին Ազատության հրապարակում տեղի ունեցած նախընտրական հանրահավաքի ընթացքում Արթուր Բաղդասարյանը հայտարարեց, որ իրեն մահվան սպառնալիքներ են ներկայացվել. նա նշեց, որ սպառնալիքները քաղաքական շարժառիթներ ունեն և, որ այդ սպառնալիքների ետևում կանգնած են իշխանությունները: Ըստ գլխավոր դատախազության հանրահավաքի ժամանակ արված հայտարարությունը քննարկելու նպատակով, Արթուր Բաղդասարյանն իր ներկայացուցչին ուղարկել է ոստիկանություն, սակայն չի կարողացել տրամադրել կոնկրետ տեղեկություններ և մանրամասներ ենթադրյալ սպառնալիքի վերաբերյալ: Հետևաբար, նախագահի թեկնածուի համար պետական պաշտպանություն չի տրամադրվել:

Ըստ «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն հասարակական կազմակերպության տեղական գրասենյակի՝ ինչպես Սերժ Սարգսյանը, այնպես էլ Վահան Հովհաննիսյանը իրենց նախագահական քարոզարշավի ժամանակ ավելի շատ գումարներ են ծախսել, քան թույլատրվում է ընտրական օրենսգրքով:

Փետրվարի 7-ին Լևոն Տեր-Պետրոսյանը խնդրեց, որպեսզի Սահմանադրական դատարանը երկու շաբաթով հետաձգի նախագահական ընտրությունները՝ վկայակոչելով պետական հեռուստատեսությամբ իր ընտրարշավի թշնամական լուսաբանումը: Տեր-Պետրոսյանը փորձում էր հենվել ընտրական օրենսգրքի այն դրույթի վրա, որով նախագահական ընտրությունները կարող են հետաձգվել, եթե համարվում է, որ թեկնածուներից մեկը «անհաղթահարելի խոչընդոտների» է հանդիպել՝ խոսքը ընտրողներին հասցնելու հարցում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ վերջնական զեկույցում նշվել է, որ նախընտրական շրջանում լրատվամիջոցների մոնիտորինգը ցույց տվեց, որ թեկնածուների լուսաբանումն իրականացվել է ակնհայտորեն անհավասարակշռված կերպով: Այնտեղ նշվում է, որ «ի հակադրություն Սերժ Սարգսյանի, ում լուսաբանումը եղել է գրեթե բացառապես դրական կամ չեզոք, Լևոն Տեր-Պետրոսյանը մշտապես պատկերվել է բացասական լույսի ներքո»:

Փետրվարի 11-ին Սահմանադրական դատարանը մերժեց հայցը՝ եզրակացնելով, որ ներկայացված խոչընդոտները անհաղթահարելի չեն: Միննույն ժամանակ դատարանը նշեց, որ Տեր-Պետրոսյանի բողոքի լուծումը պետք է տրվի Հեռուստատեսության և ռադիոյի ազգային խորհուրդի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և վարչական դատարանների կողմից: Այս մարմիններից յուրաքանչյուրին ներկայացված բողոքներն ըստ հաղորդումների մերժվել են կամ կարճվել:

Քվեարկության ավարտից երեք ժամ առաջ Արթուր Բաղդասարյանի «Օրինաց երկիր» կուսակցության շտաբի տարածած գրավոր հայտարարության մեջ նշվում էր, որ ընտրություններն անցնում էին սպառնալիքների և բռնության մթնոլորտում և բնութագրվում էին քվեաթերթիկների զանգվածային լցումամբ և այլ անօրինականություններով: Արդյունքները հայտնելուց հետո Բաղդասարյանը հայտարարեց, որ ինքը զգալիորեն ավելի

շատ ձայներ է ստացել, քան ներկայացվում է ԿԸՀ-ի կողմից, որի պատճառը քվեաթերթիկների դիտավորյալ սխալ հաշվարկն է և ընտրական պաշտոնյաների կողմից ընտրության օրը թույլ տրված այլ խախտումները: Փետրվարի 20-ին Բաղդասարյանը հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով, որ ընտրությունն ընթացել է բազմաթիվ կեղծիքներով, ընտրական հանձնաժողովների անդամների և վստահված անձանց ահաբեկումներով ու նրանց դեմ գործադրված բռնությամբ, ինչպես նաև քվեաթերթիկների լցումն մի շարք դեպքերով, ընտրակաշառքների բաժանմամբ, բաց և բազմակի քվեարկությամբ և ձայների հաշվարկի կեղծիքներով: Հայ հեղափոխական դաշնակցության (ՀՅԴ) առաջնորդները նույնպես մտահոգություն արտահայտեցին ձայները կեղծելու, այդ թվում լայնատարած կերպով ձայները գնելու, քվեաթերթիկների լցումն և այլ խախտումների կապակցությամբ:

Տեր-Պետրոսյանի շտաբը հայտարարեց, որ ընտրության ժամանակ Տեր-Պետրոսյանի բազմաթիվ վստահված անձինք Երևանում և դրա շրջակայքում ծեծի են ենթարկվել կառավարությանը սատարողների կողմից, երբ վերջիններս հայտնել են քվեարկության անօրինականությունների մասին. թեև անկախ դիտորդները չեն կարողացել հաստատել հարձակման ենթարկված վստահված անձանց այդչափ մեծ թիվ: «Human Rights Watch» կազմակերպությունը նշել է Տեր-Պետրոսյանի վստահված անձանց վրա հարձակվելու 13 դեպք, խորհրդարանական ընդդիմության երկու անդամի և առնվազն երկու լրագրողի վրա հարձակվելու դեպքեր: «Human Rights Watch» կազմակերպության համաձայն՝ մի շարք դեպքերում հարձակումը եղել է ոստիկանների և ընտրատեղամասի ներկայացուցիչների ներկայությամբ, որոնք չեն միջամտել: Հաղորդված հարձակումներից մեկը եղել է Տեր-Պետրոսյանի վստահված անձի առևանգումը Աբովյանի՝ Երևանի արվարձանի տեղամասից: Լարիսա Թադևոսյանը հայտնել է, որ, կեղծիքների մասին հայտարարելուց հետո, իրեն մեքենայով տարել են Աբովյանից դուրս և երեք տղամարդով ծեծել են: Հարձակվողներից մեկին նա ճանաչել է. դա պաշտոնավարումն ավարտող նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ սերտ կապեր ունեցող հարուստ գործարար Գագիկ Ծառուկյանի գլխավոր թիկնապահն էր: Իշխանությունները բողոքի հիման վրա հետաքննություն սկսեցին, սակայն փաստերի բացակայության պատճառով գործը կարճվեց: Նմանատիպ միջադեպ է գրանցվել Երևանի հյուսիսում գտնվող Ավան թաղամասում, որտեղ Տեր-Պետրոսյանի վստահված երկու անձանց առևանգել և ծեծել էին մի խումբ մարդիկ, որոնց առաջնորդում էր խոշոր գործարար և իշխանությունների հետ կապեր ունեցող հայտնի քրեական դեմք Ռուբեն Հայրապետյանը: Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքում Լևոն Տեր-Պետրոսյանի շտաբի պետ Վահագն Խաչատրյանը հայտարարեց, որ համայնքում մի շարք հարձակումներ և խախտումների ու կեղծիքների դեպքեր կազմակերպվում էին ԱԺ պատգամավոր Մամվել Ալեքսանյանի կողմից, ով իշխանությունների հետ ենթադրյալ կապեր ունեցող մեկ այլ գործարար է:

Հետընտրական իր զեկույցներից մեկում մարդու իրավունքների պաշտպանը ընդդիմության վստահված անձանց վրա իշխանությանը սատարող անձանց կողմից հարձակումների մասին նշելուն զուգահեռ հայտնում էր, որ ընտրության օրը Տեր-Պետրոսյանի վստահված որոշ անձինք հարձակում էին գործել ընտրական պաշտոնյաների և վստահված անձանց վրա: Օրինակ՝ ըստ հաղորդումների Մարալիկ քաղաքի ընտրատարածքներից մեկում Տեր-Պետրոսյանի Մարալիկի շտաբի պետը և նրա աջակիցները դաժանորեն հարձակվել են Մերժ Սարգսյանին ներկայացնող վստահված անձի վրա: Հարություն Ուռուտյանը՝ շտաբի պետը, հայտնում էր, որ ինքը փորձում էր կանխել ընտրախախտումները, երբ ծեծկոտուքը բռնկվեց: Մինչև օրս ընտրության առնչությամբ



կայացված ամենախիստ դատավճռով՝ դատարանը Ուռուտյանին դատապարտեց յոթ տարվա ազատազրկման՝ ընտրական հանձնաժողովի աշխատանքների խոչընդոտելու և հարձակում գործելու համար: Ուռուտյանը չընդունեց մեղադրանքը, համարելով այն քաղաքական շարժառիթներով դրդված, և բողոքարկեց որոշումը: Մայիսի 22-ին դատարանը մեղադրանքները չհանեց, սակայն ազատազրկման ժամկետը կրճատեց՝ դարձնելով վեց տարի:

Ընտրարշավի ընթացքում և ընտրության օրը տեղի ունեցած ենթադրյալ բռնությունների մեծամասնության դեպքում Տեր-Պետրոսյանին սատարողներն ու վստահված անձինք գրեթե առանց բացառության մեղադրվել և դատապարտվել են: Կառավարությանը սատարողներն ու վստահված անձինք նմանատիպ մեղադրանքների դեպքում կամ անպատիժ են մնացել, կամ էլ ավելի մեղմ պատիժ են ստացել՝ Տեր-Պետրոսյանին սատարողների համեմատ: Ըստ պաշտոնական տեղեկությունների՝ ընտրության օրը բռնությունների կամ խախտումների համար դատապարտվել է մոտ 26 մարդ և դեպքերից առնվազն երկուսը քննության են առնվել վերաքննիչ դատարանի կողմից, որը պաշտպանել է ավելի ցածր աստիճանի դատարանի որոշումը: 26 հոգուց տասնչորսը եղել են Լևոն Տեր-Պետրոսյանին սատարողները. 14-ից 9-ը դատապարտվել են ազատազրկման 1.5-ից մինչև 6 տարի ժամկետով: Ընտրության օրը իրենց վարքագծի համար մեղադրված ընտրական հանձնաժողովների հինգ պաշտոնյաներից երկուսը դատապարտվել են ազատազրկման:

Ընտրությունների միջազգային առաքելության դիտորդների մոտ 17 տոկոսը գրանցել է ընթացակարգային զգալի խախտումներ հիմնականում քվեատուփերը բացելուց հետո: Այցելած տեղամասերի 21 տոկոսում ձայների թիվն ըստ թեկնածուների չի հայտարարվել, իսկ 10 տոկոսում անհամապատասխանություն է եղել վավեր ձայները որոշելու առնչությամբ: Այլ խնդիրներից են եղել տեղամասային հանձնաժողովների անդամների կողմից նշված քվեաթերթիկները ներկա գտնվող դիտորդներին ցույց չտալը, քվեաթերթիկները սխալ թեկնածուի տրցակում դնելը, արձանագրությունները նախքան հաշվարկն ավարտելը ստորագրելը, դատարկ արձանագրություններ ստորագրելը, քվեատուփերի լցումն անջանները և դիտորդներին խոչընդոտելու փորձերը: Տեղական դիտորդներին կամ վստահված անձանց չի տրամադրվել ազատ տեսադաշտ տեսնելու ձայների հաշվարկը՝ այցելած տեղամասերի մոտ 10 տոկոսում: Ութ ընտրատեղամասերում դիտորդները տեսել են տվյալների դիտավորյալ կեղծում:

ԿԸՀ-ի համաձայն ձայների վերահաշվարկի խնդրանք է ներկայացվել 25 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին (ԸԸՀ) համար՝ կապված 159 տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) արդյունքների հետ: Ըստ ընդդիմության՝ ԸԸՀ-ներն առանց բավարար պատճառի մերժել են 34 խնդրանք: Թեկնածուներից մեկը՝ Արամ Հարությունյանը (որը ստացել էր ձայների ընդամենը 0.2 տոկոսը), խնդրել էր 27 վերահաշվարկ, որոնցից մի քանիսը ներկայացվել են անմիջապես կեսգիշերից հետո՝ փետրվարի 20-ին, նախքան մյուս թեկնածուների կողմից խնդրանք ներկայացնելը: Քանի որ ԸԸՀ-ներում սովորաբար վերահաշվարկը կատարվում է ըստ խնդրանքը ներկայացնելու ժամի և օրենքով ընդամենը երեք օր է տրամադրված վերահաշվարկն ավարտելու համար, որոշ հանձնաժողովներ զբաղված են եղել Հարությունյանի վերահաշվարկով և չեն կարողացել կատարել մյուս թեկնածուների խնդրած որոշ վերահաշվարկներ: Որոշ դիտորդներ համոզված են, որ Հարությունյանի խնդրանքները դիտավորյալմբ

կազմակերպված են եղել՝ որպես մարտավարություն, որպեսզի վերահաշվարկի ժամանակը լրանա նախքան խնդրահարույց տեղամասերի քվեաթերթիկների վերահաշվարկը:

Վերահաշվարկների մեծամասնության դեպքում, որոնց ակնանատես են եղել միջազգային դիտորդները, արձանագրվել են անհամապատասխանություններ և սխալներ սկզբնական հաշվարկի հետ, որոնցից մի քանիսը նշանակալի են եղել: Վերահաշվարկի ժամանակ տեղ են գտել այլ լուրջ խնդիրներ, որոնք հարցեր են առաջացրել տեղամասային և ընտրատարածքային հանձնաժողովների ազնվության և քաղաքական անկողմնակալության վերաբերյալ: Երևանում Դավիթաշենի ընտրատարածքային պաշտոնյաները ձգձգում էին տեղամասերի քվեաթերթիկների վերահաշվարկը, քանի որ առանցքային պաշտոնյաները միտումնավոր առանց պատճառի բացակայում էին, իսկ մյուս պաշտոնյաները պնդում էին, որ առանց նրանց ոչինչ հնարավոր չէ անել: Վերահաշվարկի 3-ժամյա դադարից հետո ներս մտան մի խումբ հանցագործներ և հանձնաժողովի անդամներին, թեկնածուներին վստահված անձանց, լրագրողներին, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդներին և դիվանագիտական ներկայացուցիչներին ստիպեցին դուրս գալ շենքից՝ մինչև ոստիկանները պասիվ կանգնած էին: Մինչև տարվա վերջ ոչ մի գործողություն չի ձեռնարկվել այն պաշտոնյաների դեմ, որոնք ուշացրել են վերահաշվարկը կամ այն ոստիկանների դեմ, որոնք թույլ են տվել ձայների վերահաշվարկի անօրինական խոչընդոտումը: Վերահաշվարկը ընդհատած անձանցից և ոչ մեկը չի հայտնաբերվել կամ ձերբակալվել:

Չնայած ընտրարշավի մեկնարկից քիչ առաջ կատարված ընտրական օրենսգրքի բազմաթիվ փոփոխությունների՝ կարևոր թերություններ են մնացել: Ընտրական հանձնաժողովների ճնշող մեծամասնությունում ղեկավար առանցքային պաշտոնները զբաղեցնում են կառավարամետ անձինք, որը մտահոգությունների տեղիք է տալիս ընտրությունների վարչարարության անկախության և անկողմնակալության վերաբերյալ: Նախագահական ընտրությունների ժամանակ նաև տարանջատում չի արվել կառավարության և իշխող կուսակցության միջև, որը հանգեցրել է նախագահի ինը թեկնածուների միջև քարոզարշավի անհավասար պայմանների:

Ընտրության արդյունքների դեմ Սահմանադրական դատարան է ներկայացվել երկու բողոք, մեկը՝ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից, իսկ մյուսը՝ Տիգրան Կարապետյանի կողմից: Մարտի 8-ին դատարանը ուժի մեջ թողեց ընտրության արդյունքները, սակայն քննադատեց Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին և ԿԸՀ-ին՝ օրենքով սահմանված կարգով անկողմնակալ լուսաբանում ապահովելու ուղղությամբ քայլեր չձեռնարկելու համար: Մակայն դատարանը գտավ, որ նրանց անգործությունը ազդեցություն չի ունեցել ընտրության արդյունքի վրա և որոշեց, որ որոշ տեղամասերի ընտրական արդյունքների արձանագրություններում տեղ գտած անճշտությունները չեն կարող ազդել ընտրության արդյունքների վրա:

Մարտի 1-ին հայտարարված արտակարգ դրությունը, ի թիվս այլ սահմանափակումների, արգելում էր «քաղաքական քարոզչությունը» թուրքիկների միջոցով և այլ եղանակներով՝ առանց համապատասխան պետական մարմինների թույլտվության և ժամանակավորապես կասեցրել էր քաղաքական կուսակցությունների և հանրային այլ կազմակերպությունների գործունեությունը, որը կարող էր խոչընդոտել արտակարգ դրության հայտարարման համար հիմք հանդիսացող հանգամանքների վերացմանը:

Խորհրդարանի 131 պատգամավորներից 11-ը կին են եղել, այդ թվում նաև երկու փոխխոսնակներից մեկը. եղել է երկու կին նախարար ու մեկ կին մարզպետ:

Խորհրդարանում կամ կառավարությունում չկային էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ, ու նաև էթնիկ փոքրամասնությունների անդամներ նախագահական ընտրություններում ներկայացված չեն եղել:

### ***Կոռուպցիան կառավարությունում և թափանցիկություն***

Օրենքով պաշտոնեական կոռուպցիայի համար սահմանված են քրեական պատժամիջոցներ. այնուհանդերձ, կառավարությունն օրենքներն արդյունավետորեն չի կիրառում և պաշտոնյանները հաճախ անպատժելիորեն կոռումպացված գործողություններ մեջ են ներգրավվում: Կոռուպցիան լայն տարածում ունի բոլոր մակարդակներում ու բոլոր ոլորտներում: Համաշխարհային բանկի կառավարման համաշխարհային ցուցանիշները արտացոլում են, որ կոռուպցիան եղել է լուրջ խնդիր: Հասարակությունը հազվադեպ է բողոքում կոռուպցիոն այնպիսի երևույթների դեմ, ինչպիսիք են սովորույթ դարձած կաշառքների վճարումը և կարծես թե տեղյակ է, որ այս խնդրի լայնատարած լինելու մասին:

Հանրային պաշտոնյաների ու նրանց ընտանիքների համար սահմանված է եկամուտների հայտարարագրման մասին օրենսդրական պահանջ: Սակայն Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի 2006թ. դեկտեմբերի զեկույցի համաձայն այս հայտարարագրումը պարզապես ձևականություն է, ու հայտարարագրված տեղեկությունները ստուգելու մեխանիզմներ չկան, իսկ հայտարարագրերը հասարակության համար լիովին հասանելի չեն: Չնայած սահմանվել էր, որ ապրիլի 15-ից սկսած տարեկան 8 միլիոն դրամից (մոտ 26000 ԱՄՆ դոլար) ավել եկամուտ ունեցող անհատներն ու պետական պաշտոնյաները պետք է եկամուտների հայտարարագիր ներկայացնեն, սակայն տարեվերջի դրությամբ այս պահանջը կատարելու մեխանիզմներ ներդրված չէին:

Կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված կառավարության ծրագրերը տարվա ընթացքում մեծապես անգործուն վիճակում են գտնվել: Կառավարական Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովն ու Հակակոռուպցիոն խորհուրդը, տարվա ընթացքում նիստեր էր անցկացնում ոչ պարբերաբար, ակնհայտորեն խախտելով իրենց իսկ կանոնակարգը: 2007թ. դեկտեմբերին հակակոռուպցիոն խորհուրդը հաստատեց 9-ամսյա աշխատանքային գրաֆիկ 2008-2012թթ. համար նոր հակակոռուպցիոն ռազմավարության մշակման համար: Հաշվետու ժամանակահատվածի ավարտին մշակված էին ռազմավարության նախանշվող 5 գլուխներից 4-ը: Մշակված 4 գլուխները տարվա ընթացքում լայնորեն շրջանառվել են, իսկ «Տեղեկատվական ազատության կենտրոն Հայաստան» ՀԿ-ն ռազմավարության ավարտված գլուխները տեղակայել է իր կայքում: Տարվա ընթացքում ռազմավարության վերաբերյալ հանրային քննարկումներ անցկացվել են Հայաստանի 11 մարզերից 3-ում, ինչպես նաև Երևանում:

Եղել են որոշ բարելավումներ, այդ թվում ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունում (ՕՎԻԸ) կոռուպցիայի դեպքերի նվազումը և գործառնությունների թափանցիկության բարձրացումը՝ հուլիսի 7-ին նախկին ղեկավարին հեռացնելուց և հուլիսի 9-ին նոր ղեկավար Նորայր Մուրադխանյանին նշանակելուց հետո: Հունիսի 26-ին վարչապետ Սարգսյանը կոռուպցիան անվանեց երկրի «թիվ մեկ» խնդիր, իսկ անձնագրային

ծառայությունը որակեց որպես «կառավարության ամենակոռումպացված գործակալություններից մեկը»:

Համաձայն պետական վիճակագրության, տարվա առաջին տասնմեկ ամիսների ընթացքում իշխանությունները քննել են կոռուպցիայի 173 դեպք, որոնցից 57 դեպք 75 անձանց նկատմամբ (ներառյալ 57 պաշտոնատար անձ) ուղարկվել է դատարան: Հատուկ քննչական ծառայությունը կոռուպցիայի մեղադրանքով քննություն է անցկացրել 34 պաշտոնատար անձանց հանդեպ, որոնց մեծամասնությունը աշխատում էին ոստիկանությունում և Արդարադատության նախարարությունում: Այս պաշտոնյաների մեծամասնությունը բաժնի պետեր կամ ցածր օղակի պաշտոնյաներ էին: Վերոհիշյալ գործերի կարգավիճակը տարեվերջի դրությամբ հայտնի չէր:

Մեպտեմբերի 17-ին Ազգային ժողովի վերահսկիչ պալատը գեկուցեց տարվա առաջին կեսին տեղի ունեցած ավելի քան 1.3 միլիարդ դրամի (մոտավորապես 4,3 միլիոն ԱՄՆ դոլար) պետական բյուջեյի չարաշահումների և խախտումների մասին՝ հիմնականում շինարարության ոլորտում: Պալատի նախագահ Իշխան Զաքարյանը շեշտեց, որ պետական բյուջեի վնասները պետք է փոխհատուցվեն և մեղավորները պատժվեն:

Մեպտեմբերի 24-ին, Ազգային ժողովի Վերահսկիչ պալատը հրապարակեց Սյունիքի մարզի ստուգումների արդյունքները: Համաձայն պալատի ղեկավարի, Սյունիքի մարզպետի և մարզպետարանի պաշտոնատար անձանց կողմից յուրացվել է 575 միլիոն դրամի (մոտ 1.9 միլիոն ԱՄՆ դոլար) պետական միջոցներ և գույք: Պալատը հայտնաբերել էր, որ վերոհիշյալ գումարի մեկ երրորդը յուրացվել է մարզային պաշտոնյաների կողմից, որոնք ուռճացրել էին գնումների արժեքները և ձախողել էին շինարարության համար հատկացված պետական միջոցների նպատակային օգտագործումը: Նմանատիպ սխեմաների միջոցով քաղաքապետերի և գյուղապետերի կողմից յուրացվել են նույնիսկ ավելի խոշոր գումարներ: Պալատի նախագահը հայտարարեց, որ Սյունիքի մարզկենտրոն Կապանի քաղաքապետի կողմից վաճառվել է 5200 քառակուսի մետր պետական բնակարանային տարածք ընդամենը 3500 դրամ (12 ԱՄՆ դոլար) արժեքով և հայտարարեց, որ Սյունիքի ստուգումը ավարտելուց հետո գործը կփոխանցի դատախազությանը:

Թեև օրենքը սահմանում է կառավարության տեղեկատվության մատչելիության ու տարածման սկզբունքը, բայց գործնականում կառավարությունը հազվադեպ է ապահովել մատչելիությունը: Տարեվերջի դրությամբ կառավարությունը դեռ չէր ընդունել տեղեկատվության հավաքումն ու տրամադրումը կարգավորող իրավական ակտերը, որոնք պահանջվում են և լրացնում 2003թ. ընդունված տեղեկատվության ազատության մասին օրենքը: Պաշտոնյաները տեղեկատվության տրամադրումը մերժելիս հղում են կատարել այս ակտերի բացակայությանը: ՀԿ-ները առավել հաջողակ են եղել դատարանների միջոցով տեղեկատվություն ստանալու հարցում:

Ապրիլի 10-ին «Տեղեկատվական ազատության կենտրոն» ՀԿ-ն հրապարակեց լրագրողների համար տեղեկատվության հասանելիության մասին հետազոտության արդյունքները, որտեղ ասվում էր, որ պաշտոնական տեղեկատվության հասանելիությունը լուրջ խնդիր է: Հետազոտությունը նշում էր, որ պաշտոնական տեղեկատվություն ստանալու հարցում ամենամեծ խոչընդոտը պաշտոնյաների մտածելակերպն է, ովքեր իրենց տրամադրության տակ գտնվող տեղեկատվությունը դիտարկում են որպես իրենց մասնավոր ունեցվածք: Այլ խոչընդոտներից են տեղեկատվությունը տեսակավորելու ու ապահովելու

պաշտոնական ընթացակարգերի բացակայությունը, ինչպես նաև լրագրողների շրջանում տեղեկատվություն ստանալու իրենց իրավունքին լավատեղյակ չլինելու հանգամանքը:

#### **ՄԱՍ 4. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՂ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Մարդու իրավունքների ոլորտի մի շարք տեղական և միջազգային խմբեր ընդհանուր առմամբ գործել են առանց կառավարության սահմանափակումների՝ հետաքննելով և հրապարակելով մարդու իրավունքների դեպքերի վերաբերյալ իրենց եզրակացությունները: Կառավարության պաշտոնյաները որոշակի առումով նրանց հետ համագործակցել են և արձագանքել են նրանց կարծիքներին:

Տարվա ընթացքում երկրում գործել են անկախ, տեղական կրոնական և իրավապաշտպան կազմակերպություններ և միջազգային կազմակերպությունների տեղական մասնաճյուղեր: Կառավարության իրավասու մարմինները հիմնականում չեն մերժել հանդիպել տեղական հասարակական կազմակերպությունների դիտորդների հետ և հետևել են որոշ հասարակական կազմակերպությունների առաջարկներին, մասնավորապես՝ սոցիալական, կրթական ու տեղական խնդիրներին առնչվող հարցերում:

Մարդու իրավունքների պաշտպանը կոչված է պաշտպանել մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները ազգային, մարզային և տեղական կառավարման մարմիններին ու նրանց պաշտոնյաների ոտնձգություններից: Տարվա առաջին կիսամյակում մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը քաղաքացիներից ստացել է ավելի քան 1662 գրավոր բողոք: Այս դիմումներից 48-ը գրասենյակը հաջողությամբ կարգավորել է՝ լուծում տալով 87 հոգու ունեցած բողոքներին:

Մարտի 3-ին մարդու իրավունքների պաշտպանը հայտարարություն տարածեց մարտի 1-ի քաղաքական բռնությունների վերաբերյալ, որով կասկածի տակ էր դնում իշխանությունների ընդդիմադիր ցուցարարների նկատմամբ մահացու ուժ կիրառելու իրավասությունը: Հայտարարությամբ կարծիք էր հայտնվում, որ անվտանգության ուժերի և ցուցարարների միջև բախումների պատճառը այդ օրն ավելի վաղ Ազատության հրապարակից վերջիններիս բռնի ցրումն էր և կոչ էր արվում իշխանություններին պատասխանել ցուցարարների վրա առանց զգուշացման գրոհելու մասին հայտարարություններին, և բացատրել, թե ինչու են անվտանգության ուժերը խոչնդոտել դեպքի մասին լրատվամիջոցների լուսաբանումներին: Պաշտպանը քննադատեց նաև պետական հսկողության ներքո գտնվող լրատվամիջոցներին՝ դեպքերի միայն պաշտոնական վարկածը ներկայացնելու համար: Մարտի 5-ին այն ժամանակ նախագահ Քոչարյանը քննադատեց մարդու իրավունքների պաշտպանի գնահատականներն, ինչպես նաև անձնապես պաշտպանին, հայտարարելով, որ պաշտպանը չի հասկանում՝ ինչի մասին է խոսում: Քոչարյանը զգուշացրեց նաև, որ յուրաքանչյուր պետական պաշտոնյա պետք է հիշի, որ նա աշխատում է երկրի համար, այլ «ոչ թե Ստրասբուրգի»՝ նկատի ունենալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նստավայրը:

Ապրիլի 25-ին մարդու իրավունքների պաշտպանի կողմից հրապարակվեց առավել լայնածավալ հատուկ զեկույց՝ հետընտրական զարգացումների վերաբերյալ, որով կրկին հարցականի տակ էր դրվում մարտի 1-ի դեպքերի վերաբերյալ պաշտոնական վարկածը, ինչպես նաև այն ժամանակ նախագահ Քոչարյանի և իրավապահ ուժերի գործողությունների օրինականությունը և պահանջվում էր մարտի 1-ի դեպքերի անկախ հետաքննություն:

Ի պատասխան ապրիլի 25-ի զեկույցի, գլխավոր դատախազի և արդարադատության նախարարի կողմից ժխտվեցին հատուկ զեկույցի պնդումները և հեռուստատեսությամբ հայտնվեցին տարբեր պաշտոնյաներ, որոնք մեղադրում էին Պաշտպանին կողմնապահության մեջ և հայտարարում էին, որ հրապարակելով հատուկ զեկույցը նա անցել է իր լիազորությունների սահմանը: Հունիսի 5-ին Ազգային ժողովի մարդու իրավունքների և եվրոպական ինտեգրման հանձնաժողովներում տեղի ունեցան լսումներ զեկույցի վերաբերյալ, որի ընթացքում մարդու իրավունքների պաշտպանը քննադատեց գլխավոր դատախազին և արդարադատության նախարարին զեկույցի բովանդակությունը խեղաթյուրելու և մարտի 1-ի իրադարձությունների մասին հարցերին պատասխանելուց հրաժարվելու համար:

Տարվա ընթացքում իշխանությունները հնարավորություն չտվեցին մարտի 1-2 գոհերի հարազատներին ծանոթանալ գործի նյութերին և փորձաքննությունների արդյունքներին: Հունիսի 26-ին իշխանությունները ճանաչեցին սպանվածներին որպես տուժողներ կամ տուժող կողմեր և նրանց ընտանիքի անդամներին որպես իրավահաջորդներ, ինչը նրանց իրավունք էր վերապահում ծանոթանալ մահվան դեպքերի հետ կապված քննության նյութերին, սակայն գործնականում այդպիսի հնարավորություն չընձեռվեց: Մայիսի 7-12-ը Փարիզում գտնվող հայ փաստաբանների միության (AFAJA) կողմից հետընտրական դեպքերի անկախ քննության արդյունքում կարծիք էր հայտնվում, որ գոհերի ընտանիքները իշխանությունների կողմից ենթարկվել են տարատեսակ ճնշումների և ըստ հաղորդումների նրանց առաջարկվել է ֆինանսական փոխհատուցում՝ «էջը թերթելու» և թաղման ծախսերը հոգալու համար:

Մայիսի 21-ին ոչ ակտիվ դերակատարում ունեցող քաղաքական կուսակցության առաջնորդ Տիգրան Ուրիխանյանը հարձակվեց և գազային ատրճանակից կրակեց Հելսինկյան ասոցիացիա հասարակական կազմակերպության ղեկավար Միքայել Դանիելյանի վրա: Դանիելյանը ստացավ թեթև մարմնական վնասվածքներ: Չնայած դեպքի բազմաթիվ վկաներին՝ Ուրիխանյանի հանդեպ իշխանությունները մինչև տարեվերջ քրեական հետապնդում չիրականացրեցին: Համաձայն գլխավոր դատախազության, Ուրիխանյանի և Դանիելյանի վիճաբանությունը քննելու համար հարուցվել էր քրեական գործ՝ խուլիգանության մեղադրանքով, այնուամենայնիվ Դանիելյանի և Ուրիխանյանի կարգավիճակներն այս քրեական գործում մինչև տարեվերջ պարզ չէին:

Վիճահարույց նախագահական ընտրություններից հետո ի հայտ եկած ընդդիմադիր երիտասարդական քաղաքացիական նախաձեռնության շարժման (ՀԻՄԱ) անդամ Արսեն Խառատյանը մայիսի 28-ին երեք անհայտ անձանց կողմից ենթարկվեց հարձակման և դաժան ծեծի: Խառատյանը կարծում էր, որ նա դարձել էր թիրախ իր հասարակական գործունեության և քաղաքական հայացքների համար: Մարտի 1-ի դեպքերից հետո Խառատյանը երկու անգամ ձերբակալվել էր քաղաքական զբոսանքներին մասնակցելու ժամանակ: Երկու դեպքերում էլ նա նույն օրն ազատ էր արձակվել: Սեպտեմբերի 28-ին քննությունը կարճվեց, իսկ հարձակվողների ինքնությունը չէր պարզվել:

Հունիսի 25-ին երկու անհայտ անձինք հարձակվեցին ՀԻՄԱ-ի ակտիվ անդամ քսանամյա Նարեկ Հովակիմյանի վրա: Հովակիմյանը, որն հիվանդանոց էր տեղափոխվել գլխի և ստամոքսի շրջանում վնասվածքներով, հայտնեց լրատվամիջոցներին իր համոզմունքը, որ հարձակման դրդապատճառները քաղաքական են: Օգոստոսի 26-ին քննություններ կարճվեց, իսկ հարձակվողների ինքնությունը չէր պարզվել:

Ընդհանուր առմամբ կառավարությունը համագործակցել է միջազգային հասարակական կազմակերպությունների հետ՝ թույլատրելով, որ դրանք այցելություններ կատարեն բանտեր, իսկ Կարմիր խաչի միջազգային կոմիտեն նաև թույլտվություն է ստացել լինել երկրում կալանավորված անձանց պահման բոլոր վայրերում:

2007թ. մայիսի խորհրդարանական ընտրություններից հետո նորընտիր խորհրդարանը ստեղծեց Մարդու իրավունքների պաշտպանության ու հանրային հարցերի մշտական հանձնաժողով: Մարդու իրավունքների ՀԿ-ներն այս հանձնաժողովին կասկածանքով են վերաբերում վերջինիս ոչ հստակ գործառնությունների շրջանակի և ակնհայտորեն կոնկրետ գործողություններ չանելու պատճառով:

## ***ՄԱՍ 5. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻԿԻՆԳ***

Օրենքով և սահմանադրությամբ արգելվում է ռասայի, սեռի, հաշմանդամության, լեզվի կամ սոցիալական կարգավիճակի հիման վրա խտրականությունը, սակայն գործնականում հասարակական խտրականություն է եղել կանանց, եթնիկ, կրոնական փոքրամասնությունների, հաշմանդամների և համասեռամուլների հանդեպ:

### ***Կանայք***

Բռնաբարությունը քրեորեն հետապնդելի արարք է, որի համար սահմանված առավելագույն պատժաչափը կարող է հասնել 15 տարի ազատազրկման: Մասնավորապես ամուսնական բռնաբարությունը քրեականացնող օրենսդրական դրույթներ չկան: Տարվա ընթացքում իրավասու մարմինները բռնաբարության և բռնաբարության փորձի համար 20 քրեական գործ են հարուցել 15 հոգու դեմ, սակայն հասարակության մեջ անպատվությունից խուսափելու պատճառով հանցանքի բոլոր դեպքերը չեն, որ հաղորդվում են: Հիշյալ 15 հոգուց 11-ը իշխանությունների կողմից դատապարտվել են բռնաբարության կամ բռնաբարության փորձի համար. մյուս գործերի կարգավիճակը տարեվերջի դրությամբ պարզ չէր:

Ընտանեկան բռնությունն արգելող օրենք չկա: Տարվա ընթացքում ամուսնական և կանանց հանդեպ այլ բռնությունների դեպքերի վերաբերյալ հաղորդումները քիչ են եղել, չնայած այս երևույթը լայն տարածում ունի: 2007թ. մայիսին «Կանանց իրավունքների կենտրոնի» պատվերով անցկացված հետազոտության տվյալներով հարցվողների 66 տոկոսն ընդունել է, որ ընտանիքի անդամների կողմից ենթարկվել են հոգեբանական ճնշման, իսկ 39 տոկոսն իրենց համարել են միջին կամ ծայրահեղ ֆիզիկական բռնության զոհեր: Ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասը ոստիկանությանը չեն հայտնվում, որովհետև տուժողները վախենում են ֆիզիկական վնասից՝ անհանգստանալով, որ ոստիկանությունը նրանց կվերադարձնի իրենց ամուսիններին, կամ անհարմար զգալով ընտանեկան խնդիրներին հասարակական բնույթ տալուց:

Նոյեմբերին «Էմնեսթի Ինթերնեյշնլը» հրապարակեց զեկույց երկրում ընտանեկան բռնությունների հետ կապված իրավիճակի մասին, որտեղնշված էր, որ ընտանեկան բռնության գոհերին օժանդակող բոլոր ապաստանները, բացի մեկից, ստիպված փակվել են՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Նախքան փակվելը, ՀԿ-ների աշխատեցրած այդ ապաստաններն օթևան և աջակցություն էին առաջարկում, այդ թվում՝ հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն ընտանեկան բռնության գոհերին:

Ապրիլի 30-ին ԵՄ մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմերբերգը 2007թ. երկիր կատարած իր այցի հիման վրա հրապարակեց զեկույց մարդու իրավունքների շուրջ իրավիճակի վերաբերյալ: Ձեկույցում նշվում էր, որ ոստիկանությունում կա ընտանեկան բռնությունների ուղղությամբ աշխատող մասնագիտացված բաժին, սակայն ոստիկանության ուշադրությունը այս խնդրին շարունակում էր մնալ ոչ համարժեք: ՀԿ-ներ հաղորդմամբ ոստիկանները դժկամորեն են շփվում տուժող կանանց հետ: Կին ոստիկանների թիվը շարունակում էր մնալ անբավարար:

Մարմնավաճառությունը և սեքս տուրիզմը օրինական են, բայց հասարակաց տներ պահելն արգելվում է, իսկ կավատության այլ ձևերը պատժվում են մեկից տասը տարվա ազատազրկմամբ: Համաձայն լրատվամիջոցների հաղորդումների երկրում մարմնավաճառության մեջ ներգրավված կանանց թիվը 5000-ից պակաս է, որոնցից մոտ 1500-ը մայրաքաղաքում են: Ոստիկանությունը և անվտանգության այլ ուժերն ըստ հաղորդումների մարմնավաճառության հանդեպ դրսևորել են հանդուրժողականություն:

Օրենքը հստակորեն չի արգելում սեռական ոտնձգությունները, չնայած այն անդրադառնում է անվայել գործողություններին և անբարեպաշտ վարքին: Սեռական ոտնձգությունները կարծես թե լայն տարածում ունեն, մասնավորապես՝ երիտասարդ կանանց և հանրային հատվածում աշխատող կանաց հանդեպ:

Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավական կարգավիճակ, սակայն գենդերային և տարիքային խտրականությունը դեռևս խնդրահարույց էին պետական և մասնավոր հատվածներում: Ընդհանուր առմամբ կանայք չեն ունեցել մասնագիտական կամ աշխատավարձային նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ, և հաճախ կատարել են սպասարկման կամ ավելի ցածր որակավորում պահանջող աշխատանքներ: Իշխանությունները հայտնել են, որ հանրային ծառայողների կեսը կազմում են կանայք, ու նրանք աշխատանքի դիմաց ստանում են նույն վարձատրությունը, ինչ տղամարդիկ:

### ***Երեխաներ***

Կառավարությունը ստանձնել է երեխաների իրավունքների և բարեկեցության պաշտպանությունը, բայց չի տրամադրել բավարար միջոցներ այդ պարտավորությունը կատարելու համար:

Դիտորդները նշում են, որ չքավոր ու սոցիալապես առավել խոցելի խմբերի ծնողները չեն կարողանում գրանցել երեխայի ծնունդը՝ դրանով իսկ զրկելով նրանց էական սոցիալական ծառայություններից ու առավել մեծացնելով իրենց երեխաների խոցելիությունը:

Շատ կրթական հաստատություններ խիստ թերֆինանսավորվել են և գտնվել վատ պայմաններում, չնայած հիմնանորոգման աշխատանքներ են սկսվել կառավարության ու օտարերկրյա ֆինանսավորմամբ: Կրթության մատչելիությունը գյուղական վայրերում մնում էր վատ և բերքահավաքի ժամանակ դաշտային աշխատանքները շատ երեխաների համար



դառնում էին դպրոցից գերակա: Դպրոցների ջեռուցման համար պահանջվող ֆինանսավորման բացակայությունը շատ վայրերի դպրոցների ղեկավարներին ստիպել էր ձմեռային արձակուրդները երկարաձգել ևս մեկ ամսով: Շատ ուսուցիչներ ծնողներից կաշառք էին ակնկալում՝ լավ կամ անցողիկ թվանշաններ դնելու համար:

Խիստ անհավասարություն է պահպանվում թե տարրական, թե միջնակարգ կրթության հարցում՝ ըստ սեռի, մարզերի և եկամուտների: Բազային կրթությունից հետո ուսումնառությունը չարունակելու դեպքերը զգալի թիվ են կազմում, հատկապես աղքատ երեխաների շրջանում: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների 2006թ. (ավելի թարմ վիճակագրություն չկա) 15-16 տարեկան երեխաների 13 տոկոսը դպրոց չէր հաճախում:

Երեխաների հաճախելիության ցուցանիշը եզրի էթնիկ փոքրամասնության շրջանում շարունակել է մնալ ցածր մասամբ տնտեսական պայմաններից ելնելով, մասամբ էլ եզրի ուսուցիչների ու դասագրքերի բացակայության և դեռահաս աղջիկներին ամուսնության նպատակով դպրոցից շուտ հանելու պատճառով: 2007թ. եզրիերեն, ինչպես նաև ասորերեն նոր դասագրքեր էին օգտագործվում ամբողջ երկրի էթնիկ փոքրամասնությունների հաճախած դպրոցներում:

Հիմնական առողջապահական ծառայություններն անվճար են մինչև 18 տարեկան տղաների և աղջիկների համար, բայց հաճախ այն վատորակ է եղել, իսկ պաշտոնյաները հաճախ բացահայտ կամ թաքնված վճարներ են պահանջել ծառայության համար:

Եղել են հաղորդումներ կոմերցիոն սեռական շահագործման նպատակով աղջիկներին թրաֆիկինգի ենթարկելու վերաբերյալ:

### ***Մարդկանց թրաֆիկինգ***

Օրենքով մարդկանց թրաֆիկինգի բոլոր ձևերն արգելվում են, սակայն եղել են հաղորդումներ դեպի երկիր ու երկրից իրականացված թրաֆիկինգի դեպքերի վերաբերյալ: Խնդրի իրական ծավալների վերաբերյալ հուսալի տեղեկատվություն չկա:

Երկիրը հանդիսանում է կանանց ու աղջիկների թրաֆիկինգի սկզբնաղբյուր ու տարանցիկ երկիր՝ Միացյալ Արաբական Էմիրություններում ու Թուրքիայում հիմնականում նրանց սեռական, իսկ առավել սակավաթիվ դեպքերում նաև աշխատանքային շահագործման նպատակով: Եղել են նաև դեպի Ռուսաստան շինարարության ոլորտում հարկադիր աշխատելու համար տղամարդկանց թրաֆիկինգի մասին հաղորդումներ: Թրաֆիկինգի հայ գոհերի մասին հաղորդումներ են եղել Արևմտյան Եվրոպայի երկրներում: Եղել է մեկ հաղորդում անչափահասի ներքին թրաֆիկինգի մասին: Երկիրը նաև վերջնակետ է եղել նախկին Խորհրդային Միության երկրներից թրաֆիկինգի ենթարկված անձանց խմբի համար:

Համաձայն գլխավոր դատախազության տվյալների տարվա ընթացքում առնվազն 40 հոգի դարձել է թրաֆիկինգի գոհ: Գլխավոր դատախազությունը նաև հաղորդում է, որ տարվա ընթացքում կավատության գոհ են դարձել 24 հոգի, որոնցից 23-ը շահագործվել են երկրի ներսում, իսկ 1-ը՝ Թուրքիայում:

Թրաֆիկինգի կազմակերպիչներն օգտագործելով թրաֆիկինգի սկզբնաղբյուր ու վերջնակետ երկրներում ձևավորված ցանցերը, հիմնականում հավաքագրել են այնպիսի անձանց, ովքեր արդեն ներքաշված են եղել մարմնավաճառության մեջ: Բացահայտված

գոհերի գերակշիռ մասը, սակայն ոչ բոլորը, իմացել են, որ այլ երկրում աշխատելու են սեքս արդյունաբերության մեջ, սակայն նրանք տեղյակ չէին թրաֆիկինգի կազմակերպիչների մտադրությունների կամ շահագործման պայմանների մասին, որ սպասվում էր նրանց արտերկրում: Հասնելով վերջնակետ երկիր, թրաֆիկինգ իրականացնողները գոհերից վերցրել են ճամփորդական փաստաթղթերը, փակել հյուրանոցի սենյակներում և ասել, որ նրանք պետք է «փակեն» իրենց համար կատարված ծախսերը: Սկզբնական կամավոր ներգրավվածության հանգամանքը դժվարացրել է իշխանությունների համար թրաֆիկինգի դեպքերի բացահայտումը: Շատ դեպքերում գոհերը երկրից մեկնել են օրինական փաստաթղթերով, իսկ արդեն տարանցիկ երկրներում թրաֆիկինգի կազմակերպիչները նրանց տվել են կեղծ փաստաթղթեր: Ըստ տեղական դիտորդների թրաֆիկինգ իրականացնողները երբեմն ձեռնպահ են մնացել գոհերի հանդեպ բռնություններից և կիրառել են վերահսկողություն իրականացնելու ավելի մեղմ միջոցներ: Հաղորդումներ են եղել, որ թրաֆիկինգի կազմակերպիչները գոհերին քաջալերել են դառնալ հավաքագրողներ՝ առաջարկելով հավաքագրվածի վաստակի որոշակի մասնաբաժինը:

Թրաֆիկինգի գոհ դառնալու ռիսկը հատկապես մեծ է մարմնավաճառների, ծնողագուրկների, որոնք տարիքի պատճառով այլևս մանկատներում չեն, անտուն կամ ամուսնավուծված և դժվար ֆինանսական կացության մեջ գտնվող կանանց համար: Եղել են հաղորդումներ թրաֆիկինգի գոհերի հանդեպ ֆիզիկական բռնության որոշ դեպքերի վերաբերյալ:

Մարդկանց թրաֆիկինգի համար սահմանվում է պատիժ՝ 3-15 տարվա ազատազրկման տեսքով՝ կախված ծանրացուցիչ հանգամանքներից, ինչպիսին կարող են հանդիսանալ գոհի մահը կամ անչափահասի ներգրավվելը: Թրաֆիկինգ իրականացնողները ազատազրկման ժամկետի կեսը բանտում անցկացնելուց հետո կարող են վաղաժամ ազատ արձակվել և նախկինում սովորաբար այսպես էլ արվել է:

Ըստ գլխավոր դատախազության տվյալների տարվա ընթացքում մարդիկ դատապարտվել են թրաֆիկինգի հողվածով, իսկ 13 հոգի դատապարտվել են կավատության հողվածով: Փորձագետների պնդմամբ տարվա ընթացքում շարունակել է խնդրահարույց մնալ այս երկու հողվածների ոչ հետևողական կիրառման հարցը:

Հուլիսին ոստիկանությունը բացահայտեց թրաֆիկինգի գոհերի մեծ խումբ Ռուսաստանից, ովքեր շահագործվում էին տեղի գիշերային ակումբներում՝ հանդես գալով որպես էկզոտիկ պարուհիներ: Նրանց հավաքագրած անձը, ով ՌԴ քաղաքացի էր, և նրա հանցակիցները կալանավորվել են: Գործի քննությունը տարեվերջի դրությամբ դեռ շարունակվում էր:

Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի հարցերով նախարարական խորհուրդը, որտեղ նախագահում է փոխվարչապետը, պատասխանատու է կառավարության հակաթրաֆիկինգային աշխատանքների իրականացման, համակարգման և մոնիտորինգի համար: 2007թ. դեկտեմբերին օտարերկրյա կառավարությունների ու հակաթրաֆիկինգային ծրագրերում ներգրավված հասարակական կազմակերպությունների հետ ծավալուն քննարկումներից հետո կառավարությունը հաստատեց 2007-09թթ. մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի ազգային ծրագիրը:

Ոստիկանությունը, ԱԱԾ-ն ու դատախազությունը պատասխանատու են թրաֆիկինգի գործերով քննությունների վարման ու քրեական հետապնդում իրականացնելու համար:

Կառավարությունն ակտիվորեն համագործակցել է թրաֆիկինգի վերջնակետ հանդիսացող մի շարք երկրների հետ և կանոնավոր կերպով տեղեկատվություն է փոխանակել այդ երկրների հետ:

Թրաֆիկինգի կազմակերպիչների հետ պաշտոնյաների հանցակցության մասին նախկինում հնչած մեղադրանքները շարունակում էին վնասել կառավարության հակաթրաֆիկինգային աշխատանքների հանդեպ վստահության ամրապնդման հարցում: Որոշ դիտորդներ հավաստիացնում էին, որ ընդունված էր նաև համաձայնության կայացումը կոռուպացված դատական պաշտոնյաների ու թրաֆիկինգի կազմակերպիչների միջև:

Տարեվերջի դրությամբ դեռ որևէ պաշտոնյայի հանդեպ քրեական հետապնդում չէր իրականացվել 2006թ. երկրից թրաֆիկինգի իրականացման համար դատապարտված Անուշ Զախարյանցի փախուստի գործով: Պաշտոնական քննության արդյունքում սահմանային վերահսկողության բաժնի երկու ավագ հսկիչներ հեռացվել էին աշխատանքից, իսկ սահմանային վերահսկողության բաժնի պետ փոխգնդապետ Վ. Պողոսյանին հայտարարվել էր նկատողություն: Դեկտեմբերի 18-ին Անուշ Զախարյանցի փախուստի հետ կապված նոր քրեական գործ հարուցվեց Զախարյանցի անօրինական սահմանահատման փաստով:

Երկիր վերադառնալուց հետո թրաֆիկինգի շատ զոհեր վախեցել են հասարակական անպատվությունից և խտրականությունից, և չեն կամեցել օգնել հայտնաբերել իրենց թրաֆիկինգի կազմակերպիչներին և նրանց պատժել: Կառավարության պաշտոնյաները չեն պահանջել, որ զոհերն իրենց օգնեն թրաֆիկինգով զբաղվողներին հետապնդելու գործում, բայց նրանք աշխատել են այն զոհերի հետ, որոնք ցանկացել են դա անել: ՀԿ-ները հայտնում են, որ վերջին տարիներին բարելավվել է դատավորների վերաբերմունքը զոհերի նկատմամբ:

Մի շարք ՀԿ-ներ աջակցել են թրաֆիկինգի զոհերին, որոնցից շատերն ուղղորդվել են այնտեղ կառավարության կողմից: Թրաֆիկինգի զոհերի համար նաև երկու թեժ գիծ է գործել: Հակաթրաֆիկինգային աշխատանքներ իրականացնող ՀԿ-ները ֆինանսական օժանդակություն կառավարությունից չեն ստացել և օգտվել են օտարերկրյա կառավարությունների ֆինանսավորումից: Այնուհանդերձ, տարվա վերջին կառավարությունը երկրի պետական բյուջեում հաստատեց թրաֆիկինգի դեմ պայքարի համար նախատեսված 5 ծախսային հոդվածներ, այդ թվում թրաֆիկինգի զոհերի ապաստարանի ֆինանսավորում:

Նոյեմբերի 20-ին կառավարությունը հաստատեց Ազգային ուղղորդման կարգը, որն օգտագործվելու է պետական պաշտոնյաների կողմից թրաֆիկինգի զոհերին աջակցության նպատակով ուղղորդելու համար: Ըստ տեղական դիտորդների ուղղորդման կարգում, այնուամենայնիվ, զոհերին օժանդակություն ցուցաբերելու փոխարեն անհամամասնորեն մեծ է թրաֆիկինգ իրականացնողներին հայտնաբերելու ու նրանց հանդեպ քրեական հետապնդում իրականացնելու հարցում իրավապահներին օգնելու շեշտադրումը: Ազգային ուղղորդման կարգի համաձայն զոհին ցուցաբերվող օժանդակության մակարդակը պայմանավորված է իրավապահների հետ նրա համագործակցության մակարդակով:

ՀԿ-ները, միջազգային կազմակերպությունները և կառավարությունը շարունակել են թրաֆիկինգի կանխարգելմանն ուղղված միջոցառումները, մասնավորապես՝ կրթական ծրագրերի և լրատվական հաղորդումների տեսքով՝ հարցի շուրջ հանրային իրազեկությունը բարձրացնելու նպատակով:

Մարդկանց թրաֆիկինգի վերաբերյալ Պետքարտուղարության ամենամյա զեկույցը կարելի է գտնել [www.state.gov/g/tip](http://www.state.gov/g/tip) կայքում:

### ***Հաշմանդամներ***

Չնայած օրենքով արգելվում է հաշմանդամություն ունեցող մարդկանց հանդեպ խտրականություն կիրառել աշխատանքում, կրթության, առողջապահության և պետական այլ ծառայությունների տրամադրման գործում, խտրականությունը շարունակում է մնալ խնդրահարույց: Օրենքով և կառավարության հատուկ որոշմամբ պահանջվում է, որ շենքերը ֆիզիկապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, բայց գործնականում շատ քիչ շենքեր ու հաստատություններ են նրանց համար հասանելի:

Ըստ լրատվամիջոցների հաղորդումների խնամատար հաստատություններում չի եղել հիվանդների համար դեղորայք, իսկ խնամքը ստանդարտներին չի համապատասխանել: Հուլիսի 28-ին Armenianow.com-ը հրապարակեց Վանաձորի Հելսինկյան քաղաքացիական ասոցիացիայի ուսումնասիրության արդյունքները Վանաձորի հոգեկայանի հոգեկայանական դիսպանսերի վերաբերյալ: Հիվանդները հաղորդել էին բուժակների ու սանիտարների կողմից իրենց ծեծելու, խոշտանգումների ենթարկելու և հանգստացնող-գսպող միջոցները չարաշահելու մասին: Հիվանդները բողոքում էին արտոնությունների գրկված լինելու և վատ կերակրվելու մասին:

Ստանդարտներից ցածր էին նաև ծանր հաշմանդամների համար նախատեսված հիվանդանոցային կամ այլ ինստիտուցիոնալ պայմանները: Ըստ պաշտոնական տվյալների 2007թ. հուլիսի դրությամբ աշխատունակ հաշմանդամների 90 տոկոսը գործազուրկ էին:

Հոկտեմբերի 7-ին Ազգային գրադարանում հատուկ ընթերցասրահ բացվեց տեսողական խնդիրներ ունեցողների համար: Կառավարությունը նաև հատուկ համակարգչային ցանց ներդրեց Ազգային գրադարանում և Սյունիքի մարզային գրադարանում, որով ապահովվում էր ինտերնետի հասանելիություն տեսողական խնդիրներ ունեցողների համար:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է հաշմանդամների իրավունքների պաշտպանության համար, սակայն դա արդյունավետ կերպով չի իրականացրել:

### ***Չարաշահումների և խտրականության այլ դրսևորումներ հասարակությունում***

Բացահայտ արվամոլներն ազատվել են զինվորական ծառայությունից՝ ենթադրաբար առաջնորդվելով այն մտահոգություններով, որ նրանց նկատմամբ կարող են լինել բռնություններ համագորայինների կողմից: Այնուհանդերձ ազատման օրինական հիմնավորումը բժշկական փորձաքննության ժամանակ արվամոլների մոտ հոգեկան խանգարման հայտնաբերումն է, ինչի մասին նշում է կատարվում փաստաթղթերում, որը կարող է անդրադառնալ նրանց ապագայի վրա: Ընդհանուր առմամբ հասարակության վերաբերմունքն համասեռամոլության հանդեպ շարունակում էր մնալ անբարենպաստ:

ՄԻԱՎ/ՉԻԱՀ վարակակիրների հանդեպ հասարակական բռնությունների ու խտրականություն դրսևորումների մասին հաղորդումներ չեն եղել:

Շատ գործատուներ ըստ հաղորդումների խտրականություն են դրսևորում հնարավոր աշխատողների նկատմամբ ըստ տարիքի՝ հաճախակի պահանջելով որ թափուր տեղերի

համար դիմողները լինեն 18-30 տարեկան: 40 տարեկանից հետո, հատկապես կանայք իրենց կրթությանն ու հմտություններին համարժեք աշխատանք գտնելու շատ քիչ հնարավորություն ունեն:

## **ՄԱՍ 6. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ**

### **ա) Միավորումներ կազմելու իրավունքը**

Օրենքն աշխատողներին՝ բացառությամբ բանակում ծառայողների և իրավապահ մարմինների աշխատակիցների, իրավունք է վերապահում կազմելու անկախ միավորումներ և նրանց անդամակցելու՝ սեփական հայեցողությամբ, առանց նախնական լիազորության կամ հավելյալ պահանջների, սակայն գործնականում աշխատողների մեծ մասն այս իրավունքը չի կիրառել: Երկրում գործատուների դիմադրության, գործազրկության բարձր մակարդակի և վատ տնտեսական պայմանների պատճառով աշխատավորական կազմակերպությունները մնացել են թույլ: Արհմիությունների կոնֆեդերացիայի հաշվարկներով փետրվարի դրությամբ կան 24 արհմիություններ՝ 240000 անդամներով, որը մոտավոր հաշվարկներով կազմում էր աշխատուժի 20 տոկոսը: Կային նաև այլ արհմիություններ, որոնք Արհմիությունների կոնֆեդերացիայի կազմում չէին: Արհմիությունները հիմնականում պասիվ են եղել, բացառությամբ հանքարդյունահանման ոլորտի արհմիությունների: Այնուհանդերձ, ըստ փորձագետների որոշ հանքարդյունահանող ձեռնարկություններ, այդ թվում օտարերկրյա կապիտալ ունեցող ընկերություններ, հետ են պահել իրենց աշխատակիցներին արհմիություններին անդամակցելուց՝ աշխատանքից զրկվելու վտանգի ակնարկներով:

Օրենքը թույլ է տալիս միություններին իրենց աշխատանքներն իրականացնել առանց կառավարության միջամտության: Օրենքով սահմանվում է գործադուլի իրավունք, բացառությամբ զինվորականների և իրավապահ մարմինների աշխատակիցների համար, բայց աշխատողները հազվադեպ են գործադուլ արել՝ վախենալով կորցնել իրենց աշխատանքը: Օրենքն արգելում է նաև գործադուլավորների հետապնդումը, սակայն երբեմն դա իրականացվել է:

### **բ) Կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքը**

Չնայած օրենքով սահմանվում է կոլեկտիվ պայմանագրեր կնքելու իրավունքը, գործնականում տարվա ընթացքում հաղորդվել է միայն մեկ կոլեկտիվ պայմանագիր կնքելու մասին: Գործարանների տնօրեններն հիմնականում աշխատավարձերի դրույքաչափերը նշանակում են առանց աշխատակիցների հետ խորհրդակցելու: Հունվարի դրությամբ աշխատանքային վեճերի լուծմամբ զբաղվում էին նոր ձևավորված ընդհանուր իրավասության դատարանները:

Հակամիութենական խտրականության դրսևորումների հաղորդումներ չեն եղել:

Արտահանման արտոնյալ գոտիներ չկան:

### **գ) Հարկադիր կամ ստրկական աշխատանքի արգելում**

Օրենքով արգելվում է հարկադիր կամ ստրկական աշխատանքը, ներառյալ երեխաների: Սակայն եղել են հաղորդումներ, որ սեռական և աշխատանքային շահագործման

նպատակով թրաֆիկինգի են ենթարկվել կանայք և աղջիկներ, իսկ աշխատանային շահագործման համար՝ տղամարդիկ:

### **դ) Երեխայի աշխատանքի արգելում և զբաղվածության նվազագույն տարիք**

Գոյություն ունեն աշխատանքի վայրում երեխաներին շահագործումից պաշտպանելու օրենքներ և կարգեր: Աշխատանքի անցնելու նվազագույն տարիքը 16-ն է, բայց երեխաները կարող են աշխատել 14 տարեկանից՝ ծնողների և արհմիությունների թույլատվությամբ: Աշխատանքի պետական տեսչությունը պատասխանատու է երեխաների աշխատանքը կարգավորող օրենսդրական դրույթների վերահսկման համար, սակայն դրույթներն անհավասար կերպով են կիրառվել տեսչության, ավագանիների, զբաղվածության ծառայությունների և բողոքի վերջին ատյան հանդիսացող դատարանների կողմից: 18 տարեկանից ցածր երեխաներին արգելվում է աշխատել արտաժամյա կամ վնասակար և վտանգավոր պայմաններում, գիշերը կամ տոն օրերին:

Համաձայն Զբաղվածության պետական ծառայության որոշ երեխաներ ներգրավված են եղել ընտանեկան բիզնեսներում (հիմնականում՝ գյուղատնտեսության ոլորտում), ինչպես նաև օրենքով չարգելված այլ աշխատանքներում: Նկատվել են նաև Երևանում դասերից հետո ծաղիկներ, նկարներ վաճառող ու տեղական շուկաներում աշխատող երեխաներ: Հոկտեմբերի 30-ին ՅՈՒՆԻՍԵՖ-ը հրապարակեց երեխաների աշխատանքի վերաբերյալ երկրով մեկ անցկացված հետազոտության արդյունքները: Ըստ այս ուսումնասիրության 7-18 տարեկան երեխաների շրջանում վճարովի աշխատանք ունեցողները կազմում են 5 տոկոսից պակասը՝ առանց հաշվի առնելու այն երեխաներին, ովքեր ներգրավված են ընտանեկան գյուղացիական տնտեսություններում կամ բիզնեսներում: Ուսումնասիրությունը նաև պարզել է, որ աշխատող երեխաների գրեթե մեկ երրորդը օրինական աշխատանքային տարիքից ցածր տարիք են ունեցել, շատերն աշխատել են առանց իրավական պայմանագրերի, իսկ որոշ երեխաներ ծանր ֆիզիկական աշխատանք են կատարել՝ որպես բանվորներ ու բեռնակիրներ:

Տարվա ընթացքում ստացվել է մեկ հաղորդում երկրի ներսում մի անչափահասի մարմնավաճառության ներգրավվելու վերաբերյալ: Այս դեպքով հարուցվել է գործ կավատության հատկանիշներով:

Մանկական աշխատանքի մասին օրենքների կիրառման համար պատասխանատու են Աշխատանքի պետական տեսչությունը, ինչպես նաև այլ պետական կառույցներ, որոնք միշտ չէ, որ արդյունավետ կերպով ապահովել են այս օրենքների կիրառումը: Տեսչությունը, սակայն, գրեթե առաջընթաց չի գրանցել տեսչական ռեժիմի կամ աշխատանքային օրենսգրքի պահանջների իրականացման ուղղությամբ, և վերջինիս աշխատանքերն ըստ հաղորդումների խարխլվել են կոռուպցիոն դրսևորումներով:

### **ե) Աշխատանքի ընդունելի պայմաններ**

Կառավարությունը որոշմամբ սահմանում է նվազագույն աշխատավարձը: Ամսական նվազագույն 25000 դրամի չափով (մոտ 81 ԱՄՆ դոլար) աշխատավարձը, որն ամրագրվել է պետական բյուջեով, չի ապահովել աշխատողի և ընտանիքի կյանքի պատշաճ պայմանները: Մասնավոր ոլորտի շատ աշխատողներ չեն կարողացել օգտվել վճարովի արձակուրդից ու նրանցից պահանջվել է աշխատել օրական 8 ժամից շատ ավել: Ըստ որոշ զբաղվածության գործակալությունների ներկայացուցիչների շատ գործատուներ աշխատողին ընդունել են 10-30 օր փորձաշրջանով և այդ օրերի համար չեն վճարել: Այնուհետև հաճախ այս

աշխատողներին ազատել են, բայց քանի որ այս նախնական աշխատանքն օրինականորեն ձևակերպված չէր, նրանք չեն կարողացել պահանջել աշխատած օրերի վճարը: Որոշ տվյալներից նաև բխում է, որ մասնավոր ոլորտի որոշ գործատուներ աշխատողների ավելի փոքր կազմ են ներկայացրել՝ հարկերի վճարումից խուսափելու համար:

Օրենքով աշխատանքային շաբաթվա տևողությունը 40 ժամ է և սահմանված է տարեկան 28 օրացուցային օր պարտադիր արձակուրդ, ինչպես նաև փոխհատուցում արտաժամյա աշխատանքի դիմաց, սակայն այս դրույթներն արդյունավետորեն չեն կիրառվել: Հանքարդյունահանման ոլորտում աշխատողներին տրամադրվել է անաշխատունակության սահմանափակ արձակուրդ՝ բժշկական տեղեկանք ներկայացնելու պայմանով: Եղել են հաղորդումներ, որ անաշխատունակության արձակուրդի երկարատև օգտագործման դեպքում աշխատողները հեռացվել են աշխատանքից:

Աշխատողներն իրավունք ունեն հեռանալ այն աշխատանքային պայմաններից, որոնք վտանգի են ենթարկում առողջությունն ու անվտանգությունը, բայց աշխատողները դժվար թե դա անեն, քանի որ գործնականում այդպես վարվելը ռիսկի տակ կդնեն նրանց աշխատանքը: Օրենքի պահանջի համաձայն կառավարությունը սահմանել է աշխատավայրում անվտանգության ու առողջապահական չափորոշիչներ: Աշխատանքի պետական տեսչությունը պատասխանատու է աշխատավայրում անվտանգության ու առողջապահական չափորոշիչների կիրառումն ապահովելու համար, սակայն դա արդյունավետ կերպով չի ապահովվել: